



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16-39

839.82

h-15

839 832

h-15

RESEARCH CENTER

W O P U

WEST VIRGINIA UNIVERSITY

LIBRARY

Publication

DATE

20 03

WEST VIRGINIA UNIVERSITY
LIBRARY

2011

339.82-2

h-15

ՆՐԻԿՈՍ ԻՐՍԷՆ

Ն Օ Ր Ա

ԿՐԱՄԱ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒՆԾՈՎ

(Սրտատպած «Արձաղանք» լրագրից)

Թ ա ղ գ մ ա ն ե ղ

Տ Ի Ր ՈՒ Հ Ի Կ Ո Ս Ա Ն Ե Ա Ն Յ



ԹԻՓԼԻՋ

Տպարան 3. Մարտիրոսեան ցի

ՄԵՐԵՆԵԱՆ ՓՈՂՈՏ, № 1, 2.

1892

3003

1-15

ՀԱՅԿԱՆ ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Գլխավոր գրքարարական,

Այ ՀԵՆՐԻԿՈՍ ԻՄԵՆ

Գրքարարական

98

Ն Օ Ր Ա

ԴՐԱՄԱ ԵՐԵՎ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

4728

Ք

Թարգմանեց

ՏԻՐՈՒՀԻ ԿՈՍՏԱՆԵԱՆՑ



ԹԻՖԼԻՑ

Տպարան Յ. Մարտիրոսեանցի

ՕՐԵՆԵՆՆ ՓՈՂՈՑ, № 1, 2.

1892



367 - Ա. 2.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՐՕՏԵՐՏ ԳԵԼՄԻՐ, փաստաբան,
ՆՕՐԱ, իւր կիներ:

ԷՐՂԻՆ { նոցա զաւակները:
ՏՕՏ

ԴՕՔՏՕՐ ՐԱՆԿ:

ՏԻԿԻՆ ԼԻՆԴԻՆ:

ԳԻՆՏԵՐ: X

ՄԱՐԻԱՆՆԱ, դայեակ, { Գեղմէրի մօտ:
ՀԵՂԻՆԵ, աղախին,

Դործողութիւնը կատարուած է Քրիստի-
նիալուծ, Գեղմէրի բնակարանի մէջ:

(Արտատպուած „Արձագանքից“)

Доволено цензурою, Тифлисъ, 5 Мая 1892 года.

Типографія И. Мартиросіянца, Орбел. ул. д. № 1—2

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Յարմար և ճաշակով, բայց ոչ շքեղ
 զարդարուած սենեակ: Մի դուռ աջ կող-
 մից դէպի նախասենեակը. միւս դուռը
 ձախ կողմից դէպի Գեյմէրի գրասենե-
 կը: Երկու դռան մէջտեղը դաշնամուր:
 Ձախ կողմը, պատի մէջտեղում էլի մէկ
 դուռ, իսկ բեմի առջևի կողմից մի պա-
 տուհան. պատուհանին մօտ կլոր սեղան,
 բազկաթոռ և փոքրիկ բազմոց: Աջ կողմը,
 պատի մէջ չորրորդ դուռն: Բեմի առջևի
 կողմում մի վառարան, նորա առաջ մի
 քանի բազկաթոռներ և ճօճաթոռ: Դռան
 և վառարանի մէջտեղը փոքրիկ սեղան:
 Պատերի վերայ պատկերներ: Մի դատարկ
 մանր-մուկ բաներով: Փոքրիկ պահարան

փառակազմ գրքերով: Գորգ: Վառարանը
 վառվում է: Ձմեռ է:

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Նօրա, յշահ, յեպոյ Գեյմէր:

Նախասենեակից զանդի ձայն է դա-
 լիս. լսվում է դռան բացուելը: Նօրան
 ուրախ ներս է մտնում, կամաց երգելով.
 նա տաք հագնուած է. նա իւր գնած
 բաները դնում է աջակողմեան սեղանի
 վերայ: Նախասենեակի դուռը նորա ետե-
 ւից բաց է մնում. այնտեղ երևում է
 մշակը, որ բռնել է տօնածառը և գամ-
 բիւղը. նա այդ բաները տալիս է դուռը
 բացող աղախներին:

Նօրա: Հեղինէ, տօնածառը որքան
 կարելի է, լաւ պահեցէք, որ երե-
 խաները չտեսնեն մինչև նորա զար-
 դարելը: (Մշակին, հանելով փողի
 քսակը): Ձեզ ինչքան պէտք է տալ:

Մշակ: 50 Փենիդ:

Նօրս: Ահա՛ ձեզ մի մարկ... ո՛չ, ո՛չ, մանր հարկաւոր չէ: (Մշակը շնորհակալ է լինում և հեռանում է: Նօրան դուռը ծածկում է. նա շարունակում է ուրախ ժպտալ և հանում է վերարկուն. յետոյ հանում է գրպանից մի թղթէ տոպրակ, որի մէջ կայ կանֆէտ և ուտում է մի քանի կտոր: Գորանից յետոյ նա զգուշօրէթեամբ մօտենում է ամուսնու գրասենեակին և ականջ է դնում): Այո՛, նա տանն է: (Նորից երգում է մօտենալով աջ կողմի սեղանին):

Գեյֆեր: (Գրասենեակի դռան ետեւից): Չլինի՞ իմ արտուտիկս է այնտեղ երգողը:

Նօրս: (Քանալով կապոցները): Ի հարկէ՛:

Գեյֆեր: Իմ սիրունիկս չէ՛ արգօք այնտեղ իրար անցնողը:

Նօրս: Այո՛, այո՛:

Գեյֆեր: Ե՞րբ եկար:

Նօրս: Հէնց հիմայ: (Կանֆէտը դնում է գրպանը և բերանը սրբում է): Ե՛կ այստեղ, Բօբերտ, և տես թէ ինչէ՛ր եմ գնել:

Գեյֆեր: Մի խանգարիր: (Քիչ յետոյ նա դուռը բաց է անում և նայում է, գրիչը ձեռին բռնած): Տեսնենք, թէ դու ինչ ես գնել... Այսինչ է, բոլորը մանր մուկեր իրեղէններ. իմ թեթևօլիկ թռչնիկս էլի փո՞ղ է ծախսել:

Նօրս: Ա՛խ, Բօբերտ, այս տարի մենք պէտք է որ մի քիչ ուրախանանք. չէ՛ որ այս առաջին Ծնունդն է, որ մենք ստիպուած չենք խնայողութիւն անելու:

Գեյֆեր: Ա՛նու ամենայնիւ մենք չպէտք է փողերը դէն զցցենք:

Նօրս: Հիմայ արդէն մի քիչ կարելի է, Բօբերտ. այնպէս չէ՛, շատ քիչ: Այսուհետև դու կը ստանաս

մեծ ռոճիկ և շատ, շատ փող կ'աշխատես:

Գեղեկ: Այ՛ո, նոր տարուց յետոյ. բայց մինչև առաջին անգամ ռոճիկ ստանալս դեռ ամբողջ երեք ամիս կայ:

Նոր: Ի՛հ, ինչ անենք. մենք առժամանակ մէկից փող կ'առնենք:

Գեղեկ: (Մտենալով բռնում է նորա ականջից): Էլի թեթևամտութիւնդ բռնեց: Ասենք թէ ես այսօր 1000 մարկ փոխ առնեմ և դու բոլորը ծախսես տօներին. իսկ տարեմուտին, կարող է կտուրիցը մի քար ընկնել ինձ վերայ և ես հիւանդ պառկեմ...

Նոր: (Սեղմելով նորա բերանը): Ի՞նչպէս կարող ես այդպիսի վատ բաներ խօսել:

Գեղեկ: Այ՛ո, ասենք թէ այդ պատահի, այն ժամանակ:

Նոր: Եթէ այդպիսի անբախտութիւն պատահի, այն ժամանակ ինձ

համար միւսնոյն է, պարտք կ' ունենամ, թէ ոչ:

Գեղեկ: Իսկ ինչ կը լինի նոցա գրութիւնը, որոնց ես պարտք լինիմ:

Նոր: Նոցա՛, իմ ինչ գործն է. չէ՛, որ նոքա օտար են:

Գեղեկ: Ա՛խ, Նօրա՛, Նօրա՛, մի քիչ լուրջ եղիր, հոգիս: 2^է որ դու գիտես իմ համոզմունքներս՝ պարտք չունենալ և երբէք ոչ ոքից փոխ չառնել: Պարտքի հետ միասին տան մէջ մտնում է մի ինչ որ ծանր և վատ բան: Մենք երկուսս էլ քաջութեամբ տարանք ամեն ինչ մինչև օրս, ուրեմն երեք ամիս էլ համբերենք:

Նոր: (Գնալով դէպի վառարանը): Լա՛ւ, լա՛ւ, Բօբերտ, ինչպէս ուզում ես:

Գեղեկ: (Գնալով նորա ետևից): Գի՛հ, լաւ, լաւ, իմ արտուտիկս չպէտք է իսկոյն թւերը կախէ... Այդ ինչ է, խռովեցիր: (Հանում է քսակը):

Նօրն, ինչ ես կարծում, սորա մէջ
ինչ կայ:

Նօրս: (Արագ դառնալով:) Փող:

Գեշէր: Ահա: (Տալիս է նորան իմի
քանի թղթադրամ:) Ես գիտէի, որ
Պննդեան տօներ են, դոքա շատ հար-
կաւոր կը լինին:

Նօրս: (Ման գալով:) Տասը, քսան,
երեսուն, քառասուն: Մ, Ռօբերտ,
շնորհակալ եմ քեզանից, շնորհակալ:
Հիմայ սոքա ինձ երկար ժամանակ
բաւական կը լինին:

Գեշէր: Յուսով եմ, Նօրն:

Նօրս: Այո, այո, երկար ժամանակ:
Հիմայ արի տես, թէ ինչեր եմ գնել
և որչափ աժան: Ահա նոր գէրեա
և թուր էրվինի համար. ահա ձի և
շուրի Բօբի համար. ահա մի տիկին
մահճակալի մէջ իմմայի համար:
Բայց նա այս բոլորը կը փչացնէ:
Հեղինէի և Մարիաննայի համար էլ
առել եմ գէրեացու և շալեր:

Գեշէր: Իսկ այն ծրարի միջինն
ինչ է:

Նօրս: (Բացադանչելով:) Ո՛հ, Ռօ-
բերտ, դու այդ չես տեսնի մինչև
երեկոյ:

Գեշէր: Ա՛յ թէ ինչ... Իսկ հիմայ
ասա տեսնեմ, իմ փոքրիկ տնաքան-
դրս, քեզ համար ինչ ես առել:

Նօրս: Ինձ համար... Ինձ ոչինչ
հարկաւոր չէ:

Գեշէր: Ի՞նչպէս թէ ոչինչ. ապա
մի լաւ բանի անուն տուր, ինչ որ
սիրտդ ուզում է:

Նօրս: Աշմարիտ, ես ոչինչ չգի-
տեմ... թէ և... լսի՛ր, Ռօբերտ...

Գեշէր: Գէ, ասա տեսնեմ:

Նօրս: (Առանց նայելու Ռօբերտի
վերայ, խաղում է նորա կոճակի հետ:)
Եթէ ուզում ես ինձ մի որ և է բան
ընծայել... դու կարող էիր... կա-
րող էիր...

Գեշէր: Ի՞նչ, ինչ, ասա...

Նօրս: Դու տայիր ինձ այնքան փող, ինչքան կարող ես, միայն թէ քեզ ծանրութիւն չլինի. իսկ ես յետոյ դորանով կ'առնեմ, ինչ որ ուզենամ:

Գէշէր: Բայց, Նորա...

Նօրս: Աշմարիտ, սիրելի Ռօբերտ, այդպէս լաւ է. խնդրում եմ քեզ: Այդ փողերը ես կը փաթաթեմ ոսկեգոյն թղթի մէջ և կը կախեմ տօնածառից: Ա՛յ, հիանալի կը լինի:

Գէշէր: Իսկ ինչպէս են կոչվում այն թուղթները, որոնք միշտ ծրդրտում են...

Նօրս: Ի՛, արդէն գիտեմ, գիտեմ՝ թեթեւսօլիկ սարեկները: Միայն, Ռօբերտ, չնեղանաս. իսկ ես ժամանակ կ'առնեմ մտածելու, թէ ինձ ամենից շատ ինչ է հարկաւոր. է, միթէ այս խելօքութիւն չէ:

Գէշէր: (Ժպտալով): Ի հարկէ, միայն եթէ դու կարողանայիր այդ

փողը պահել և յերաւի քեզ համար մի բան առնել. բայց միշտ բոլորը գնում է տան ու ամեն տեսակ չընչին բաների վերայ և ես էլի պէտք է քսակիս բերանը բանամ:

Նօրս: Ի՞նչ ես ասում, Ռօբերտ:

Գէշէր: Միթէ այդ ուղիղ չէ, սիրելի Նորա. (Գզվում է նորան): Իմ արտուտիկս գեղեցիկ արարած է, բայց նորան պէտք են արծաթի կոյտեր. անխ, ինչպէս թանգ են այդպիսի թուղթները:

Նօրս: Ինչո՞ւ ես այդպէս ասում. ճշմարիտ, ինչքան կարող եմ, խնայողութիւն եմ անում:

Գէշէր: (Ժպտալով): Այդ ուղիղ է. ինչքան որ կարող ես. բայց ցաւն այն է, որ դու անընդունակ ես:

Նօրս: (Քթի տակ խօսելով և հանդարտ ժպտալով): Ռօբերտ, եթէ դու միայն գիտենայիր, թէ մենք, արտուտիկներս, որչափ ծախսեր ունինք:

Գեւոր: Գու տարօրինակ արարած
ես. իսկ հօրդ ես քաշել: միշտ աշ-
խատում ես փող ձեռք բերել և հենց
որ գտնում ես, ջրի պէս գնում ես.
դու չես էլ իմանում, թէ փողերն
ո՞ւր գնացին: Թէև, քեզ պէտք է
դատել, ինչպէս որ կաս. այդ քո ա-
րեան մէջ է. այն, Նօրն, այդ ժա-
ռանգական է:

Նօր: Օ, ես կ'ուզէի շատ բան
ժառանգած լինել հօրիցս:

Գեւոր: Ես չէի էլ կամենայ քեզ
տեսնել ուրիշ կերպ. եղի՛ր այնպէս,
ինչպէս կաս, իմ սիրելի արտուտիկս:
Սպասի՛ր, ինչ որ միտս եկաւ... դու
այսօր մի տեսակ ես... ինչպէս ա-
սեմ... կասկածելի ես:

Նօր: Յիրաւի,

Գեւոր: Այո, ապա նայի՛ր ուղղակի
աչքերիս:

Նօր: (Նայելով): Է՛. ինչ:

Գեւոր: (Մատը թափ տալով): Չը-

լինի՛ իմ բլիկս այսօր էլի մի բանի
համ է առել:

Նօր: Աստուած ազատէ. ինչպէս
կարող ես դու իմ մասին այդ մտա-
ծել:

Գեւոր: Մի՛թէ բլիկս չէ մտել
մինչև անգամ անուշազործի մօտ:

Նօր: Հաւատացնում եմ քեզ, Բօ-
բերտ, որ չէ:

Գեւոր: Մուրաբի համ էլ չես տե-
սել:

Նօր: Ի հարկէ, չէ:

Գեւոր: Մինչև անգամ կանֆէտ էլ
չես դրել բերանդ:

Նօր: Ոչ, Բօբերտ, Հաւատացնում
եմ քեզ:

Գեւոր: Մի նեղանար, ես հանաք
եմ անում. . .

Նօր: (Աջակողմեան սեղանի մօտ):
Կարո՞ղ էի մտածել անգամ քեզ այդ-
պէս վիրաւորելու:

Գեւոր: Գիտեմ, գիտեմ. չէ՞ որ

1001
4725



դու ինձ խօսք ես տուել. . . (Մօտենում է նորան): Ծննդեան տօնի զաղտնիքներդ պահպանիր, սիրելի Նօրա՛, այս երեկոյ, երբ տօնածառը լուսաւորուի, ամեն ինչ կըբացուի:

Նօրա: Չե՛ս մոռացել հրաւիրել դօքտօր Բանկին:

Գէշէր: Մոռացել եմ, բայց հրաւիրել հարկաւոր չէ. ինքն ըստ ինքեան հասկանալի է որ նա մեզ մօտ կըլինի. թէև ես նորան կը խնդրեմ, եթէ նա այսօր մեզ մօտ հանգիպի: Ես արդէն պատուիրել եմ, լաւ գիտի... Նօրա՛, դու երևակայել չես կարող, թէ որչափ ուրախ եմ այս երեկոյի համար:

Նօրա: Ես նոյնպէս. իսկ երեխաներն ի՛նչպէս կ'ուրախանան, Բօբերտ:

Գէշէր: Ա՛խ, ի՛նչպէս հաճելի է, որ մարդ իմանում է, թէ իւր դրութիւնն ապահովուած է և այլ ևս կարօտութեան մէջ չէ: Այնպէս չէ՛,

այդ զիտակցութիւնը մեծ բաւակա-նութիւն է պատճառում:

Նօրա: Ի հարկէ:

Գէշէր: Յիշո՛ւմ ես դու անցեալ տարուայ Ծննդեան տօնը. ամբողջ երեք շաբաթ Ծննդից առաջ ամեն երեկոյ դու, փակուած քօ սենեակում, նստում էիր մինչև կէս գիշեր և պատրաստում էիր ծաղիկներ ու զանազան սիրուն բաներ տօնածառը զարդարելու համար, որ մեզ յանկարծակի ուրախութիւն պատճառես: Ո՛ր, այդ իմ կեանքիս ամենաձանձրալի ժամանակն էր:

Նօրա: Իսկ ես բոլորովին չէի ձանձրանում:

Գէշէր: (Փպտալով): Այնուամենայնիւ ամեն ինչ անշուք էր:

Նօրա: Օ՛ր, դու դարձեա՛լ պատրաստվում ես ինձ զրգուել. մի՛թէ ես մեղաւոր եմ, որ կատուն ներս մտաւ և ամեն ինչ փչացրեց:

Գեղեցիկ: Ի հարկէ, դու մեղաւոր
չես, խեղճ Նորա. քո ցանկութիւնն
էր մեզ բոլորիս ուրախացնել և այդ
է ամենազլխաւորը: Բայց լաւ է, որ
ծանր ժամանակներն անցան:

Նորա: Այո՛, լաւ է Բօբերտ:

Գեղեցիկ: Հիմայ ես էլ մենակ չեմ
նստի ու ձանձրանայ և դու էլ չես
յոգնեցնի քո սիրուն աչերդ ու քըն-
քուշ ձեռներդ. . .

Նորա: (Ծափ տալով): Այնպէս չէ՛,
Բօբերտ, որ հիմայ այդ էլ հարկաւոր
չէ. ի՛նչ լաւ է: (Թեւ թեւի են տալիս
Բօբերտի հետ): Իսկ հիմայ ես քեզ
կ'ասեմ, Բօբերտ, թէ ինչ եմ մտածել
մեր սարքուելու մասին... Հէնց որ
Ծնունդն անցնի... (Չանգահարում
են:) Ա՛խ, զանգահարում են: (Սե-
նեակը մի քիչ հաւաքում է:) Երևի
հիւր եկաւ. ափսո՛ս:

Գեղեցիկ: Լսո՞ւմ ես, այցելունքերին
ասան որ ես տանը չեմ. չմոռանաս:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Բ.

Առաջինէրը և Հեղինէ:

Հեղինէ: (Ներս մտելով): Մի օտար
տիկին ձեզ հարցնում է:

Նորա: Խնդրիր նորան:

Հեղինէ: (Գեղմէրին): Պ. դօքտօրն
էլ եկաւ:

Գեղեցիկ: Նա երևի իմ զրասենեակս
գնաց:

Հեղինէ: Այո՛: (Գեղմէր գնում է իւր
սենեակը. Հեղինէն ներս է բերում
տ. Լինդէնին, որ ճանապարհորդի
շորերով է և ծածկում է նորա ետե-
ւից դուռը):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ.

Նօրս, Լիւնրէն:

Տ. Լիւնրէն: (Քաշուելով ու կմկմալով): Բարև՛, Նօրս:

Նօրս: (Անկատա՛հ կերպով): Բարև ձեզ...:

Տ. Լիւնրէն: Դու երևի ինձ չես ճանաչում:

Նօրս: Չեմ ճանաչում... Թէև... ես կարծեմ... (ճանաչելով): Ի՞նչպէս, միթէ դու Քրիստինան ես:

Տ. Լիւնրէն: Այո՛, ես եմ:

Նօրս: Քրիստինա, իսկ ես քեզ չըճանաչեցի և ինչպէս էլ ճանաչէի: (Կամաց): Դու շատ փոխուել ես, Քրիստինա՛:

Տ. Լիւնրէն: Այո՛, ես փոխուել եմ, չէ՞ որ իննը... տասը երկար տարիներ...

Նօրս: Միթէ այդքան երկար ժամանակ է մենք չենք տեսնուել. այո՛,

այդպէս է: Ա՛խ, վերջին ութ տարիները... Այդ երջանիկ ժամանակ էր. հաւատան ինձ... Ուրեմն դու եկել ես մայրաքաղաք. ձեռք ժամանակ այդպէս հեռու ճանապարհ. լա՛քաջ ես:

Տ. Լիւնրէն: Ես հէնց հիմայ եկայ երկաթուղով:

Նօրս: Տօներին ժամանակ անցնելու համար: Ա՛խ, ի՛նչ լաւ է. ուրեմն քէ՛Ք կ'անենք: Հանիր վերարկուդ. բայց կարելի է մըսում ես: (Օգնում է նորան վերարկուն հանելու): Ա՛յ այդպէս. այժմ նստենք վառարանի մօտ... ո՛չ, ո՛չ, այստեղ. այ, այս բազկաթուռի վերայ. այստեղ ճօճաթուռի մէջ ես կը նստեմ: (Բըռնում է նորա ձեռքերը): Հիմայ կըրկին տեսնում եմ առաջուայ դուրեկան երեսը... Ի՛սկ առաջին ըոպէին... միայն թէ դու աւելի գունատուել ես, Քրիստինա... և կարծես մի քիչ նիհարել ես:

Տ. Լիւրէն: Եւ շատ ու շատ պա-
ռաւել եմ, Նորն:

Նօր: Այն մի քիչ էլ պառաւել ես.
միայն քիչ, շատ քիչ: (Յանկարծ
կտրում է խօսքը. լուրջ կերպով): Ինչ-
պէս յիմարն եմ ես, նստած բլբլում
եմ, իսկ... սիրելի, թանկագին Քրիս-
տինն, արդեօք կըներես ինձ...

Տ. Լիւրէն: Ինչի՞ վրայ ես խօսում,
Նորա:

Նօր: (Կամաց): Խեղճ Քրիստինա,
չէ՞ որ դու այրիացել ես:

Տ. Լիւրէն: Այն, երեք տարի առաջ:

Նօր: Օ՛, ես այդ լաւ գիտէի. այդ
մասին լրագրներում կարգացի: Հա-
ւատացնում եմ, Քրիստինն, ես պատ-
րաստվում էի քեզ գրելու, բայց միշտ
յետաձգում էի... ամեն անգամ մի
բան խանգարում էր:

Տ. Լիւրէն: Սիրելի Նորն, այդ ինձ
հասկանալի է:

Նօր: Ոչ, Քրիստինն, իմ արածը

վատ էր. խեղճ, խեղճ. ան, որչափ
տանջանք ես կրել դու, և նա քեզ
ոչինչ չէ թողել ապրուստիդ համար:

Տ. Լիւրէն: Ոչ:

Նօր: Զաւակներ էլ չունիս:

Տ. Լիւրէն: Ոչ:

Նօր: Ուրեմն նա ոչինչ չէ թողել:

Տ. Լիւրէն: Մինչև անգամ ոչ մի
հոդս:

Նօր: (Անվստահութեամբ նայելով
նորա վերայ): Բայց, Քրիստինն, մի՞թէ
այդ կարելի է:

Տ. Լիւրէն: (Տխուր ժպտում է, շը-
փելով Նորայի գլուխը): Օ՛, այդ եր-
բեմն պատահում է, Նորն:

Նօր: Ա՛յդպէս միայնակ... ինչ-
պէս պէտք է քեզ համար ծանր
լինի այդ. ես երեք սիրուն զաւակ-
ներ ունիմ. իսկոյն քեզ չեմ կարող
ցոյց տալ, որովհետև նոքա ման են
գալիս դայեակի հետ... Հիմայ դու
ինձ պէտք է պատմես ամեն ինչ...

Տ. Լինդէն: Ոչ, ոչ, աւելի լաւ է դու պատմիր:

Նոր: Ոչ, դու սկսիր. ես այսօր չեմ ուզում եսական լինել. ուզում եմ մրտաձել միայն քո մասին... Միայն մի բան ես քեզ կը պատմեմ. դու դեռ չգիտես, թէ ինչ մեծ բաղդի հանդիպեցանք այս օրերս:

Տ. Լինդէն: Ոչ, չգիտեմ. ինչ է արդեօք:

Նոր: Երևակայիր, իմ ամուսինս մի բանքի դիրեկտօր եղաւ:

Տ. Լինդէն: Քո ամուսինը, անի, այդ չիրաւի մեծ...

Նոր: Չատ մեծ բախտաւորութիւն է, այնպէս չէ: Փաստաբանութիւնը անհաստատ դրութիւն է, եթէ մարդ միայն դորանով ապրի... մանաւանդ երբ վերցնում է այնպիսի գործեր... որոնք մաքուր և ուղիղ են... Բօբերտը իսկ այդպէս է, և ես միանգամայն համաձայն եմ նորա հետ:

Դու չես կարող երևակայել, թէ մենք հիմայ ինչպէս ուրախ ենք. նա նոր տարուց կ'ընդունէ իւր պաշտօնը և այն ժամանակ կըստանայ մեծ ռոճիկ ու շատ տոկոս. ժամանակին մենք բոլորովին ուրիշ կերպ կ'ապրենք, քան թէ հիմայ... կ'ապրենք այնպէս, ինչպէս ուղեանք: Ախ, Քրիստինա, ինչպէս ես ազատ շունչ եմ քաշում և ինչպէս երջանիկ եմ... Լաւ է շատ փող ունենալ և առանց հոգսերի ապրել, այնպէս չէ:

Տ. Լինդէն: Այո, բոլոր կարևոր բաներն ունենալը լաւ է:

Նոր: Չէ, ոչ թէ միայն կարևորը, այլ և ունենալ շատ, շատ փող:

Տ. Լինդէն: (ժպտալով) Նօրա, Նօրա, միթէ դու չես խելօքացել. մեր պանսիօնումը դու շատ շուալ էիր համարվում:

Նոր: Բօբերտը հիմայ էլ ինձ համարում է այդպէս. (մտոր թափ է

տալիս) բայց, «Նորան, Նորան» այնպէս յիմար չէ, ինչպէս որ դուք կարծում էք: Մեր ապրուստն այնպէս չէր, որ կարելի լինէր փողեր վատնել. մենք երկուսս էլ պէտք է աշխատէինք:

Տ. Լինդէն: Գո՛ւ նոյնպէս:

Նօրո՞: Ի հարկէ, թեթև ձեռագործ՝ գործել, նաշխել և այլ այդպիսի պարապմունքներ. (արհամարհանքով) ու էլի մի բան: Գու դիտես, որ Բօքերտը ամուսնանալիս թողեց արքունի պաշտօնը. նա էլ յոյս չունէր բարձր պաշտօն ստանալու, այն ինչ նա պէտք է աւելի փող աշխատէր, քան թէ յառաջ: Հէնց առաջին տարին նա սաստիկ թուլացաւ. դու պէտք է հասկանաս, որ նա կողմնակի պարապմունք էլ ստիպուած էր գտնել. նա աշխատում էր զիշեր, ցերեկ, բայց վերջը չկարողացաւ դիմանալ և մահամերձ հի-

ւանդացաւ, բժիշկները յայտնեցին, որ նորան անհրաժեշտ է գնալ հարաւ:

Տ. Լինդէն: Այ՛ն, կարծեմ դուք մի ամբողջ տարի Իտալիայում անցկացրիք:

Նօրո՞: Իտալիայում, և հեշտ չէր տեղից շարժուելը. Իրվինն այն ժամանակ նոր էր ծնունել, բայց մենք ստիպուած էինք գնալ: Ա՛խ, ինչ հիանալի ճանապարհորդութիւն էր, և այդ փրկեց Բօքերտի կեանքը. միայն շատ մեծ ծախս ունեցանք:

Տ. Լինդէն: Երևակայում եմ:

Նօրո՞: 1800 տալեր, 5400 մարկ. չէ՞ որ ահազին գումար է:

Տ. Լինդէն: Այդպիսի գէպքերում մեծ բաղդաւորութիւն է, եթէ փող կայ:

Նօրո՞: Ի հարկէ, հայրս մեզ տուեց:

Տ. Լինդէն: Հն, կարծեմ նա հէնց այն ժամանակ մեռաւ:

Նօրո՞: Այ՛ն, Քրիստինա, հէնց այն

ժամանակ, և երևակայիր, ես չէի կարող գնալ նորա մօտ ու խնամել նորան. ես այն ժամանակ ամեն լոպէս պատում էի փոքրիկ Երվինի աշխարհ գալուն և բացի դորանից, ես պահպանում էի իմ խեղճ, Հիւանդ Բօբերտիս: Իմ սիրելի, բարի Հայրս. ես նորան էլ չտեսայ, Քրիստինն. անխ. իմ ամուսնանալուցս յետոյ այդ իմ ամենամեծ վիշտս էր:

Տ. Լինդէն: Ես գիտեմ, դու Հօրդ շատ էիր սիրում... և յետոյ դուք գնացիք Իտալիա:

Նօրս: Այո՛, դորանից 4 շաբաթ յետոյ: Մենք փող ստացանք, իսկ բժշկներն ուղղակի մեզ քշում էին այստեղից:

Տ. Լինդէն: Եւ ամուսինդ բոլորովին առողջ վերադարձաւ:

Նօրս: Ինչպէս կենդանի ձուկն:

Տ. Լինդէն: Բայց ինչո՞ւ... բժիշկը...

Նօրս: Այսինքն ինչ ես ուզում ասել:

Տ. Լինդէն: Ինձ թուաց, որ աղախինն ինձ Հետ միասին ներս մտնող պարոնին բժիշկ անուանեց:

Նօրս: Այո՛, այդ դօքտօր Բանկն է, բայց նա մեզ բժշկելու համար չի գալիս. նա մեր ամենալաւ բարեկամն է և և գալիս է ամեն օր: Իտալիայից վերադառնալուց յետոյ Բօբերտը ոչ մի անգամ չէ Հիւանդացել. մեր երեխաներն էլ ուրախ ու առողջ են, ես նոյնպէս: (Վեր է թռչում և ծափ է տալիս:) Աստուած իմ, ինչ լաւ է ապրել, Քրիստինն, և երջանիկ լինել... Բայց ինչ վատն եմ, ես միայն խօսում եմ իմ մասին: (Նստում է աթոռակի վերայ, Քրիստինայի ոտքերի տակ և ձեռները դնում է նորա ծունկերին:) Մի հարց տամ, չնեղանաս ինձանից. ասան խնդրեմ, ուղիղ է՞, որ դու չէիր սիրում քո ամուսնուն. հասկանալի ինչո՞ւ առար նորան:

Տ. Լիւրէն: Այն ժամանակ դեռ իմ հիւանդ և անտէր մայրս կենդանի էր և բացի նորանից իմ երկու փոքրիկ եղբայրներս հոգսն էլ ինձ վերայ էր. ես պարտք համարեցի ընդունել նորա առաջարկութիւնը:

Նօրս: Այն, այն, կարելի է դու ըրաւունք ունէիր... Ուրեմն նա այն ժամանակ հարուստ էր:

Տ. Լիւրէն: Կարծեմ բաւական. բայց նորա գործերն ապահով չէին, Նօրն. երբ նա մեռաւ, բոլորը քանդուեցաւ և ոչինչ չմնաց:

Նօրս: Յետոյ ի՞նչ եղաւ:

Տ. Լիւրէն: Յետոյ ես ստիպուած էի մի կերպ ապրել՝ մանր առուտուրով, փոքրիկ ուսումնարանով և էլի ինչով որ պատահէր: Վերջին երեք տարին, կարծես ինձ համար մի ծանր, աշխատալի օր էր: Հիմայ այդ ժամանակն անցաւ, Նօրն, մօրս ես էլ սէտք չեմ, քանի որ նա հանդրս-

տանում է գերեզմանի մէջ. եղբայրներին նոյնպէս, նոքա մեծացել են և իրանց աշխատանքով ապրում են:

Նօրս: Ուրեմն դու հիմայ հոգսերից թեթեւացել ես:

Տ. Լիւրէն: Ոչ, Նօրն, մնացել է միայն մի սարսափելի դատարկութիւն: Չունիմ ոչ մէկը, որին նուիրէի իմ կեանքս... (Վեր է կենում յուզուելով): Ահն, պատճառը, որ ես այլ ևս չկարողացայ դիմանալ խուլ տեղում, այստեղ աւելի հեշտ է մի գործ գտնել. միտքս ցրուելու համար մեծ բաղդ կըլինէր, եթէ ես կարողանայի ինձ համար մի հաստատուն տեղ գտնել... գործը ինչպէս գրասենեակում:

Նօրս: Քայց, Քրիստինն, այդ շատ յոգնեցնող պարսպմունք է. դու առանց այն էլ այնպէս ես... աւելի լաւ կըլինէր գնայիր ջրերը:

Տ. Լիւրէն: (Ուսամուտի մօտ գնալով:) Նօրն, ես հայր չունիմ,

որ իմ ճանապարհաճախսս տար:

Նորս: (Վեր թռչելով:) Ո՛հ, ներքի
 ինձ: այդտա ինչ մտառով քա ընդ մ

Տ. Լիւրէն: (Դառնալով դէպի նա:) Ոչ, դու ներքի ինձ, սիրելի Նորս...

Իմ գրուածեանս մէջ թէ մի անտա-
 նելի բան կայ, այդ գրգռուած լի-
 նելս է: Ոչ ոք չուներիմ, որի համար
 աշխատեմ, բայց միևնոջն ժամանակ
 պէտք է միշտ գործունեայ լինել.
 չէ որ հարկաւր է ապրել. ահա և
 մարդ դառնում է եսական: Երբ դու
 ինձ սկսեցիր պատմել ձեր հանգա-
 մանքների լաւանալու մասին, ես,
 կրհաւատմս, որ աւելի ինձ համար
 ուրախացայ, քան թէ ձեզ:

Նորս: Ինչպէս թէ. . . Հա՛, դու
 մտածեցիր, թէ Բօբերտը կարող է մի
 որ և է գործ գտնել և քեզ համար:

Տ. Լիւրէն: Այո՛, ես այդ մտածեցի:

Նորս: Նա պարտաւոր է և քեզ
 համար մի բան անել, սիրելի Քրիս-

տինա՛. այդ արդէն թող ինձ. . . ես
 գործն այնպէս վարպետութեամբ կը
 տանեմ... մի լաւ բան կը հնարեմ, որ
 նա տրամադիր լինի. ես այնպէս
 կ'ուզէի քեզ օգնել:

Տ. Լիւրէն: Ինչպէս լաւ է, Նորս,
 որ դու ինձ այդպէս ջերմ կարեկցու-
 թիւն ես ցոյց տալիս, մանաւանդ որ
 դու ինքդ այնքան քիչ ես տեսել
 անյաջողութիւններ ու դառնութիւն-
 ներ կեանքիդ մէջ:

Նորս: Ե՛ս... ես չեմ տեսել:

Տ. Լիւրէն: (Փպտալով:) Տէ՛ր Աստու-
 ած, քո այդ ձեռագործ և այդպիսի
 բաները... դու իսկ երեխայ ես, Նորս:

Նորս: (Գլուխը յետ դցելով, ման է
 դալիս սենեակի մէջ:) Քեզ չէր վա-
 յելի այդպէս հաստատ խօսել:

Տ. Լիւրէն: Ա՛յ ինչ:

Նորս: Դու էլ, ամենքն էլ, դուք
 բոլորդ էլ կարծում էք, որ ես ո՛չ մի
 լուրջ բանի պէտք չեմ:

Տ. Լինդէն: Լաւ, լաւ...
Նոր... Որ ես այս դառն աշխարհում ոչինչ վատ բան չեմ տեսել:

Տ. Լինդէն: Սիրելի Նորա, դու նոր էր, որ ինձ պատմեցիր քո բոլոր ճախորդութիւնները:

Նոր: Բայց դուքա ինչ են որ. դուքա փոքր բաներ են. (կամաց) իսկ մեծերի մասին ես քեզ ոչինչ չեմ պատմել:

Տ. Լինդէն: Ի՞նչ մեծ բաներ, ինչո՞ւ մասին ես խօսում:

Նոր: Դու ինձ վերայ շատ բարձրիցն ես նայում, ֆրիստինա. բայց այդ լաւ չէ. դու հպարտանում ես նորանով, որ երկար ժամանակ ծանր հոգսեր ես քաշել մօրդ համար:

Տ. Լինդէն: Աճմարիտ, ես ոչ ոքի վերայ բարձրից չեմ նայում, բայց այդ ուղիղ է, որ ես պարծենում եւ ուրախանում եմ, որ բազմ ունեցայ մօրս վերջին օրերին խաղաղ ու անհոգ կեանք վայելել տալ:

Նոր: Դու պարծանքով լիշում ես նոյնպէս և այն, ինչ որ արել ես եղբայրներիդ համար:

Տ. Լինդէն: Ես կարծեմ, իրաւունք ունիմ:

Նոր: Ես էլ կարծում եմ: Բայց հիմայ, ֆրիստինա, ես քեզ կր պատմեմ մի բան և դու կր տեսնես, որ ես նոյնպէս կարող եմ իմ արածով պարծենալ և ուրախանալ:

Տ. Լինդէն: Չեմ կասկածում, բայց ինչ է:

Նոր: Կամաց, կամաց... Երևակայիր, եթէ այդ Բօբերտը լսէ. ոչ նա և ոչ ոք այդ չպէտք է իմանայ, այն, ոչ ոք բացի քեզանից:

Տ. Լինդէն: Բայց ինչ է:

Նոր: Ե՛կ այստեղ. (քաշում է նորան դէպի իրան, բազմօցի վերայ) այն, ես էլ ունիմ մի գաղտնիք, որով կարող եմ ուրախանալ և պարծենալ: Ես փրկեցի Բօբերտի կեանքը:

Տ. Լինդէն: Կեանքը փրկեցիր. ինչպէս կեանքը փրկեցիր:

Նոր: Ես քեզ պատմեցի Խտալիա գրնալու մասին, առանց այդ ճանապարհորդութեանը թօքերտը կը մեռնէր:

Տ. Լինդէն: Այո՛, և քո հայրդ ձեզ փող է տուել. . .

Նոր: (ժպտալով): Այո՛, այդպէս է կարծում և թօքերտը և ամենքը, բայց. . .

Տ. Լինդէն: Բնայց. . .

Նոր: Հայրս մի Ֆէնիկ անգամ մեզ չէ տուել, ես մենակ եմ փող ձարել:

Տ. Լինդէն: Դո՛ւ. ինչպէս. այդպիսի մեծ գումար:

Նոր: 1800 տալեր, 5400 մարկ: Ի՛նչ կ'ասես:

Տ. Լինդէն: Բայց այդ ինչպէս եղաւ. գուցէ վիճակախաղով տարար:

Նոր: (Արհամարհանքով): Այդ ինչ լաւութիւն է որ:

Տ. Լինդէն: Ուրեմն՝ ո՛րտեղից փող ձարեցիր:

Նոր: (Քթի տակ խօսում ու ժղպտում է խորհրդաւոր կերպով): Հը՛, տրալալա՛, տրալալա՛:

Տ. Լինդէն: Դու միթէ կարող էիր պարտք վերցնել:

Նոր: Ինչո՞ւ չէ:

Տ. Լինդէն: Միթէ կինն առանց ամուսնու համաձայնութեան կարող է այդպէս մեծ գումար պարտք անել:

Նոր (Գլուխը յետ գցելով): Բայց եթէ այդ կինը մի քիչ տեղեակ է գործերին... եթէ այդ կինը կարող է խելացի դիրք բռնել, այն ժամանակ...

Տ. Լինդէն: Նորա՛, ես ոչինչ չեմ հասկանում:

Նոր: Այստեղ հասկանալու բան էլ չկայ. ես միթէ ասացի, որ պարտք եմ արել. ես կարող էի ուրիշ միջոցով ձեռք բերել. (յետ է ընկնում բազմոցի վերայ) ես կարող էի ստա-

նալ ինձ համակրող մէկից, եթէ կինը փչացած չէ...

Տ. Լինդէն: Փու բոլորովին լիմար ես:

Նորա: Հիմայ քո հետաքրքրութիւնը շարժուեց, Քրիստինա...

Տ. Լինդէն: Լսիր, Նորա; մի անզրգուշութիւն արած չլինիս:

Նորա: (Ուղիղ նստելով): Մի՞թէ ամուսնու կեանք փրկելն անզրգուշութիւն է:

Տ. Լինդէն: Ես կարծեմ, եթէ առանց նորա գիտութեանն է, անզրգուշութիւն է:

Նորա: Բայց անհրաժեշտ էր նորանից ամեն բան ծածկելը: Աստուած իմ, ինչպէս դու չես հասկանում. նա մինչև անգամ չպէտք է իմանար, որ ինքը վտանգաւոր հիւանդ է. բժշկներն այդ միայն ինձ ասացին... և որ նորան միայն հարաւր կարող էր փրկել: Մի՞թէ ես ուրիշ միջոցներ չգիտեցի. ես նկարագրում էի

նորան, թէ ինչպէս լաւ կը լինէր, եթէ ես էլ ուրիշ տիկիներէ Նման արտասահման գնայի. ես խնդրում էի, լալիս էի, ասում էի, որ նա մտածէ, թէ ես ինչ գրութեան մէջ եմ և որ նորա պարտականութիւնն է կատարել իմ խնդիրքս. իսկ յետոյ, ես նորան ակնարկեցի, որ նա կարող է այդ բանի համար պարտք վերցնել: Բայց այդ ժամանակ, Քրիստինա, նա համարեա թէ կատաղեց. նա ասում էր, որ ես թեթեամիտ եմ, որ նա, իբրև ամուսին պարտական է չընկճուելու իմ կամքիս ու իմ հաճոյքներին առաջ... Այո, կարծեմ, նա այդպէս էր ասում: Ես լսում ու մտածում էի՝ «բայց այնու ամենայնիւ քեզ պէտք է փրկել»: Եւ գտայ մի միջոց...

Տ. Լինդէն: Եւ քո ամուսինդ չիմացաւ հօրիցդ, որ նա ձեզ փող չէ տուել:

Նօրս: Ոչ երբէք... Հայրս Հէնց այն օրերը մեռաւ: Ես մտադիր էի ամեն ինչ պարզել Հօրս. առաջ և խնդրել, որ այդ գաղտնիք մնայ. բայց նա ծանր հիւանդացաւ... դժբախտաբար այդ էլ հարկաւոր չեղաւ:

Տ. Լինդէն: Գու յետոյ էլ ամուսնուդ ոչինչ չասացիր:

Նօրս: Աստուած քեզ բարի տայ. միթէ կարելի է պատմել նորան. նա խիստ հակառակ է այդ բանին. և բացի այդ, ինչպէս անյարմար և անպատուաբեր կը լինէր Բօբերտի նման հպարտ տղամարդու համար խոստովանել, որ նա ինձ պարտական է. այդ միանգամայն կը խանգարէր մեր յարաբերութիւնը և մեր ընտանեկան երջանկութիւնը կը քանդուէր:

Տ. Լինդէն: Եւ դու երբէք չես ասի:

Նօրս: (Մտախոհ, կիսաժպիտ): Կարելի է, երբ և իցէ շատ տարիներ յետոյ, երբ ես էլ այսպէս գեղեցիկ

չեմ լինի. ան, մի ծիծաղիլ ինձ վերայ. ես խօսում եմ այն ժամանակուայ մասին, երբ Բօբերտը ինձ էլ այնպէս չի սիրի, ինչպէս հիմայ. երբ նա էլ չի զբաղուի այն հարցով թէ ես պարում եմ, դիմակաւորվում եմ, կամ ոտանաւորներ եմ ասում. այն ժամանակ լաւ է մի որ և է պաշար ունենալը: (Խօսքը կտրելով): Այդ բոլորը չմարութիւններ են. այդ ժամանակը երբէք լինելու չէ: Գէ, Քրիստինն, ես մտածում եմ մեծ գաղտնիքիս մասին: Ուրեմն ես ոչ մի բանի պէտք չեմ, և կարո՞ղ ես հաւատալ, որ այդ գործը ինձ շատ վիշտ է պատճառել. հեշտ չէր միշտ ժամանակին կատարել իմ պարտականութիւններս: Քրիստինն, դու պէտք է գիտենաս, որ իւրաքանչիւր քառամսեկին ես պէտք է վճարէի թէ գլուխը և թէ տոկոսը կարգին համեմատ. իսկ դորա համար շատ դը-

ժուար էր փող ճարելը, և ահն, որ-
տեղ որ միայն կարելի էր, ես պէտք
է խնայողութիւն անէի և փող չետ
գցէի: Ապրուստի համար որոշուած
գումարից ես ոչինչ չէի կարող խը-
նայել. չէ՞ որ Բօքերտը պէտք է լաւ
ապրէր. գաւակներն վատ հագցնել
ես չէի կարող, և ինչ որ նոցա հա-
մար ստանում էի, բոլորը ծախսում
էի: Իմ սիրելի, թանկագին գաւակ-
ներս:

Տ. Անդէաս: Ուրեմն դու ամեն բա-
նից քեզ պէտք է գրկէիր, խեղճ
Նօրա:

Նօրա: Ի հարկէ. չէ՞ որ այդ իմ
սարքած գործն էր: Ամեն անգամ,
երբ Բօքերտն ինձ փող էր տալիս
նոր դէրեա կամ ուրիշ բան զնելու
համար, ես երբէք կէսից աւելի չէի
ծախսում դոցա վերայ. միշտ առ-
նում էի ամենահասարակ և արժան
կտորներ, իմ բազդս է, որ ամեն

բան էլ ինձ սաղում է. այնպէս որ
Բօքերտը ոչինչ չէր նկատում: Բայց
երբեմն ինձ դժուար էր տանել այդ
ամենը, Քրիստինա, զեղեցիկ հագ-
նուելը լաւ է, այնպէս չէ՞:

Տ. Անդէաս: Ի հարկէ:

Նօրա: Եւ յետոյ ես ունէի էլի ու-
րիշ արդիւնքներ: Զորօրինակ անցեալ
ձմեռ այսպիսի մի յաջող դէպք պա-
տահեց. ես մի լրագրի համար պէտք
է րօման թարգմանէի, ի հարկէ,
անանուն. ես այն ժամանակ ամեն
երեկոյ առանձնանում և գրում էի
մինչև լուսադէմ. ան ինչպէս ես
երբեմն յոգնում էի. սաստիկ յոգ-
նում, բայց դարձեալ ուրախալի էր
աշխատելն ու փող վաստակելը. ինձ
միշտ թւում էր, թէ ես տղամարդ եմ:

Տ. Անդէաս: Ի՞նչքան կարողացար
վճարել պարտքիցդ:

Նօրա: Դժուար է ասել, զիտե՞ս,
այդպիսի գործերի մէջ հեշտ չէ

կարգ պահելը. զիտեմ միայն, որ բո-
լորը տուել եմ, ինչ որ կարողացել եմ
հաւաքել: Երբեմն չգիտէի, թէ ինչ
անեմ. (ժպտում է) այդպիսի ըուպէնե-
րին նստում էի այն աշտեղ և երևակա-
յում էի, որ ինձ վերայ սիրահարվում
է մի ծեր ու հարուստ պարոն...

Տ. Լինդէն: Ի՞նչ, ինչպիսի պարոն...

Նորա: Ա՛խ այդ բոլորը լիմարու-
թիւններ են... Որ նա մեռնում է,
բաց են անում նորա կտակը, որի
վերայ մեծ տառերով դրուած է՝ «Իմ
բոլոր փողերս խնդրում եմ իսկոյն և
եթ լիովին յանձնել գեղեցիկ տիկին
Նորա Գելմէրին...»:

Տ. Լինդէն: Բայց, սիրելի Նորա, ո՞վ
է այդ պարոնը:

Նորա: Տէր Ատուած, ինչպէս դու
չես հասկանում. այդ պարոնը երբէք
գոյութիւն էլ չէ ունեցել. ես այդ
միայն երևակայում և երազում էի,
երբ ոչ մի տեղից փող չէի կարող

գտնել: Բայց այդ թողնենք, թող այդ
ձանձրալի, ծեր պարոնը մնայ այն-
տեղ, որտեղ կամենայ. ես գործ չու-
նիմ ոչ նորա և ոչ էլ նորա կտակի
հետ. ես հիմայ ազատ եմ բոլոր հոգ-
սերից: (Վեր թռչելով:) Աստուած իմ,
ինչպէս քաղցր է այն միտքը, Քրիս-
տինա, որ էլ հոգս չունիմ. հոգս
չկայ, այն, չկայ բոլորովին. կարող
եմ խաղալ գաւակներէս հետ, զբա-
ղեցնել նոցա. կարող եմ բնակարանս
գեղեցիկ ու յարմար կերպով սարքել,
ինչպէս որ Բօբերտը կը հաւանի. իսկ
յետոյ կըզայ գարունը պարզ, կապոյտ
երկնքով. կարելի է մենք գնանք մի
ուրիշ տեղ, և ես դարձեալ կը տես-
նեմ ծովը: Ա՛խ, ինչ լաւ է ապրել
և երջանիկ լինել: (Նախասենեակից
լսվում է զանգի ձայն:)

Տ. Լինդէն: (Վեր է կենում:) Զան-
գահարում են. աւելի լաւ չէ, որ ես
գնամ:

Նօրս: Ոչ, ոչ, կ'աց, այստեղ ոչ ոք
չի մտնի. երևի թօբերտին են հար-
ցնում:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Դ.

Աստղինները, Հեշինե, յետոյ Գիւնտէր:

Հեշինե: (Դրան միջից): Ներողու-
թիւն, մի պարոն հարցնում է պ.
Գեղմէրին:

Նօրս: Ուզում էք ասել բանքի դե-
րեկտորին:

Հեշինե: Այո, բանքի դերեկտորին.
բայց ես չգիտեմ. . . նորա մօտ պ.
բժիշկն է. . .

Նօրս: Ո՞վ է այդ պարոնը:

Գիւնտէր: (Դրան միջից): Ես եմ,
տիկին: (Հեղինէն գնում է):

Տ. Լիւնտէր: (Վեր է թռչում և
դառնում է դէպի պատուհանը):

Նօրս: (Մի քայլ է անում Գիւնտէրի

կողմը, լարուած և կիսաձայն): Դուք
էք. այդ ինչ է նշանակում. իմ ամուսինս
ինչո՞ւ համար է ձեզ պէտք:

Գիւնտէր: Մի քանի բանքալին գոր-
ծերի համար. ես բանքում թեթեւ
պաշտօն ունիմ, իսկ ձեր ամուսինը
ինչպէս լավում է, մեր դերեկտորն է
լինելու:

Նօրս: Ուրեմն այդ վերաբերում է. . .

✓ Գիւնտէր: Միայն ձանձրալի գործե-
րին, տիկին, ուրիշ ոչինչ:

Նօրս: Ուրեմն կարելի է նեղու-
թիւն քաշէք գնալ այն կողմը—
գրասենեակը: (Գիւնտէր գնում է. Նօ-
րան անտարբեր գլուխ է տալիս,
դուռը ծածկելով. յետոյ վստաբանի
մօտ է գնում և խառնում է կրակը):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ե.

Նօրո՞ւ, որի՞. Լինդէն:

Տ. Լինդէն: Նօրա՛ն, ո՞վ է այդ պարոնը:

Նօրո՞ւ: Դա Գիւնտէրն է. առաջ փաստաբան էր:

Տ. Լինդէն: Ուրեմն դա յիրաւի նա է:

Նօրո՞ւ: Դու ճանաչում ես նորան:

Տ. Լինդէն: Ես նորան ճանաչում էի շատ տարի սորանից յառաջ. նա մեզ մօտ երկար ժամանակ փաստաբանութիւն էր անում:

Նօրո՞ւ: Այդպէս, այդպէս. . .

Տ. Լինդէն: Ի՞նչպէս նա փոխուել է:

Նօրո՞ւ: Նա շատ անբախտ էր իւր կնոջ հետ:

Տ. Լինդէն: Իսկ Հիմայ նա այրի է:

Նօրո՞ւ: Այո, և նա շատ երեխաներ ունի... Վերջապէս վառուեց կրակը: (Նա ծածկում է վառարանի դուռը

և հեռացնում է ճօճաթուր):

Տ. Լինդէն: Կարծեմ նա ամեն տեսակ գործով պարապում է:

Նօրո՞ւ: Յիրաւի. կարելի է. ես չը զիտեմ: Բայց էլ չխօսենք գործերի մասին՝ շատ ճանճրալի է:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Զ.

Առաջինները, Բանի, Կարոն և Գալիս
«Ենեակից»:

Բանի: (Դրան մէջ, դառնալով դէպի դրասենեակը): Ոչ, ոչ, ես քեզ չեմ խանգարի. աւելի լաւ է կ'երթամ կնոջդ մօտ: (Ծածկում է դուռը և նկատում է տ. Լինդէնին): Ա՛խ, ներեցէք, կարծեմ ես այստեղ էլ խանգարեցի:

Նօրո՞ւ: Ամենևին: (Ծանօթացնում է): Դօքտօր Բանկ, տիկին Լինդէն:

Բանի: Հա՛, այդ անունը յաճախ է լսվում այս տան մէջ. կարծեմ քիչ

յառաջ ես ձեր մօտից անցայ սանդուղքների վերայով:

Տ. Լինդէն: Այո, ես շատ ծանր էի բարձրանում... սանդուղքներն ինձ յօգնեցնում են:

Բանի: Երևի քիչ թուլութիւն էք զգում:

Տ. Լինդէն: Աւելի շուտ յօգնածութիւն:

Բանի: Միայն այդ ուրեմն դուք եկել էք մայրաքաղաք Հանգստանալու և տօներին ուրախանալու:

Տ. Լինդէն: Ես եկել եմ այստեղ պարապմունք գտնելու:

Բանի: Միթէ դա յօգնածութեան դէմ լաւ միջոց է:

Տ. Լինդէն: Պէտք է ապրեմ, որ չը մեռնեմ, դօքտօր:

Բանի: Այո, ընդհանուր կարծիք է այդ:

Նօրա: Դօքտօր, այնպէս չէ, որ դուք էլ դեռ շատ կ'ուզէիք ապրել:

Բանի: Ինքն ըստ ինքեան Հասկանալի է. թէպէտ ես թոյլ եմ, դարձեալ ապրելու Համար յօժար եմ չարչարուելու. հիւանդներս էլ այդ են կամենում իրանց Համար. նոյնն են զգում և Հոգեկան հիւանդները: Հէնց հիմայ Գեւորի գրասենեակում կայ մի այդպիսի Հոգեկան հիւանդ...

Տ. Լինդէն: (Խուլ կերպով): Հնա:

Նօրա: Դուք ո՞ւմ մասին էք խօսում:

Բանի: Գիւնտէրի, որ մի ժամանակ փաստաբան էր. նա ձեզ բոլորովին անծանօթ է. այդ պարօնն արդէն փթել է իւր բնաւորութեամբ, և դեռ նա էլ է խօսում, որ պէտք է ապրել:

Նօրա: Միթէ բայց նա ի՞նչ էր ուզում խօսել Բօբերտի հետ:

Բանի: Աշմարիտ, չգիտեմ. ես միայն լսեցի, որ այդ վերաբերում է բանքին:

Նօրա: Ես չգիտէի, որ այդ Գիւնտ... որ այդ պ. Գիւնտէրը բանքում ծառայում է:

Բանի: Եւ այնտեղ մի ինչ որ պաշտօն ունի: (Իրմելով տ. Լինդէնին): Չգիտեմ, գուցէ ձեր կողմերումն էլ կան այդպիսի մարդիկ, որոնք երեւում են ամեն տեղ, ջոկում են այդ տեսակ փթածներին, որ յետոյ այսպէս թէ այնպէս գործ տան նոցա. իսկ առողջներին մնում է միայն Հանդիսատես լինել:

Տ. Լինդէն: Ամենից յառաջ Հիւանդներն են կարօտ խնամքի և ոչ թէ առողջները:

Բանի: (Ուսերը շարժելով): Ա՛յ, տեսնում էք. ահա այդպիսի դատողութիւններով Հասարակութիւնը դառնում է Հիւանդանոց:

Նոր: (Խորասուզուած մտքերի մէջ, յանկարծ կիսաձայն շատ ծիծաղում է և ծափ է տալիս):

Բանի: Ինչո՞ւ էք ծիծաղում. մի՞թէ դուք գիտէք, թէ ինչ է Հասարակութիւնը:

Նոր: Ինձ ինչ ձանձրալի Հասարակութիւնը. ես բոլորովին ուրիշ բանի վերայ էի ծիծաղում. այդ շատ ծիծաղելի է. . . Դօքտօր, ասացէ՛ք խնդրեմ, չէ՞ որ բանքի բոլոր ծառայողները Հիմայ կախում կ'ունենան Բօբերտից:

Բանի: Մի՞թէ դա այդքան ծիծաղելի է:

Նոր: (Փպտում և մըթմըթում է): Ա՛խ, թողէ՛ք ինձ: (Ման է գալիս սենեակի մէջ): Երբ մտածում եմ, որ մենք... որ Բօբերտը մեծ ազդեցութիւն կ'ունենայ շատ մարդկանց վերայ. ա՛յ, ինչն է ինձ, ճշմարիտ, շատ զուարճացնողը: (Հանում է գրրպանից թղթէ տոպրակը): Դօքտօր, կամենա՞ք կանֆէտ:

Բանի: Հա՛, կանֆէտ. . . փախցրած է, կօնտրաբանդ է...

Նոր: Այո՛, բայց ինձ տուեց Քրիստինան:

Տ. Լիւրէն: Ի՞նչպէս. ես. . .

Նօրս: Լան, մի վախենար. դու ի հարկէ չգիտէիր, որ Բօքերտը ինձ արգելել է. նա վախենում է իմ ատամներէս համար. բայց. . . մի անգամ, այնպէս չէ, դօքտօր. բարի եղէք: (Կանֆէտը դնում է նորա բերանը): Եւ դու նոյնպէս, Քրիստինան. ես էլ մի հատ կը վերցնեմ՝ փոքրիկը. . . կամ երկուսը: (Պարձեալ ման է գալիս): Ճշմարիտ, ես հիմա շատ երջանիկ եմ եւ շատ կ'ուզէի սրտանց միայն մի բան. . .

Բանի: Ի՞նչ:

Նօրս: Մի բան եմ ուզում ասել, բայց այնպէս որ այդ լսէր միայն Բօքերտը:

Բանի: Ուրեմն ինչո՞ւ չէք ասում:

Նօրս: Որովհետեւ չեմ համարձակվում. շատ վատ կը լինի:

Տ. Լիւրէն: Վատ:

Բանի: Ուրեմն ես ձեզ խորհուրդ

չէի տալ. բայց այդ մեզ կարող էք ասել. . . ապա սրտանց ինչ կ'ուզէիք ասել Ռեյմէրի ներկայութեանը. . .

Նօրս: Ես այնպէս կ'ուզէի աղաղակել «գրրորդը տանի»:

Բանի: Դուք խելագարուել էք:

Տ. Լիւրէն: Ատուանձ իմ, Նօրան:

Բանի: Իէ, ասացէք, այն նա:

Նօրս: (Պահում է սօսրակը): Մը, սը: (Իելմէրը դուրս է գալիս եւր սենեակից վերարկուն եւ գլխարկը ձեռին):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի .

Առաջինները. Գէլէր:

Նօրս: (Նորան դիմաւորելով): Բօքերտ, ազատուեցիք նորանից:

Գէլէր: Այո, վերջապէս նա զնաց:

Նօրս: Ծանօթացնեմ քեզ. . . ահա Քրիստինան, որը. . .

Գէլէր: Քրիստինան. . . ներեցէք, բայց ես. . . չեմ ճանաչում:

Նորա: Տիկ. Լինդէն, սիրելի Բօբերտ. տիկ. Քրիստինա Լինդէն:

Գէլճէր: (Տիկ. Լինդէնին) Օ, երևի կնոջս երիտասարդութեան ընկերուհին էք:

Տ. Լինդէն: Այո, մենք առաջ ծանօթ էինք միմեանց հետ:

Նորա: Եթէ իմանայիր, թէ նա ինչ հեռու տեղից եկել է քեզ հետ խօսելու:

Գէլճէր: Ինձ հետ խօսելու:

Տ. Լինդէն: Իսկապէս դորա համար չէ...

Նորա: Պէտք է քեզ ասեմ, որ Քրիստինան շատ ժիր է կանտօրային գործերի մէջ, միևնույն ժամանակ, նա շատ կրցանկար գործին հմուտ մարդու ձեռքի տակ լինել, որ կատարելագործուի...

Գէլճէր: (Տիկ. Լինդէնին): Չատ դովելի է:

Նորա: Նա լսել է, որ դու բանքի

դերեկտօր ես եղել. հեռագիրը յայտնել է այդ մասին ամբողջ աշխարհին. և ահա նա, որքան կարելի է շուտ եկել է այստեղ և . . . Անպէս չէ, Բօբերտ, որ դու Քրիստինայի համար մի գործ կրգտնես. Համ:

Գէլճէր: Ի՞նչ կայ որ, այդ կարելի է. դուք այրի էք:

Տ. Լինդէն: Այո:

Գէլճէր: Դուք արդէն ծառայել էք զբանասերակներում:

Տ. Լինդէն: Բաւական շատ:

Գէլճէր: Եթէ այդպէս է, շատ հաւանական է, որ ես ձեզ համար գործ գտնեմ. . .

Նորա: (Ծափ տալով): Ա՛յ տեսնում ես, տեսնում ես:

Գէլճէր: (Տ. Լինդէնին): Դուք շատ յարմար ժամանակ այստեղ գտնուեցիք:

Տ. Լինդէն: Ա՛խ, ինչպէս շնորհակալ լինիմ ձեզանից:

Գէշէր: (Ժպտալով:) Այդ միանգամայն աւելորդ է: (Վերարկուն հագնում է:) Իսկ այսօր ինձ ներեցէք:

Րոհ: Սպասիր, ես քեզ հետ կրգամ: (Բերում է նախասենեակից իւր մուշտակը և տաքացնում է վառարանի առաջ:)

Նօր: Դու շատ չուշանաս, սիրելի Բօրերտ:

Գէշէր: Մի ժամ միայն, ոչ աւելի:

Նօր: Դու էլ ես գնում, Քրիստինա:

Տ. Լինդէն: (Վերարկուն հագնելով:) Այո, ես պէտք է ինձ համար սենեակ փնտրեմ:

Գէշէր: Մենք կարող ենք միասին գնալ:

Նօր: (Քրիստինային օգնելով:)

Ափսոս, որ մեր բնակարանը նեղուածք է. բայց ճշմարիտ, մեզ անհնարին կը լինէր քեզ...

Տ. Լինդէն: Այդ ինչ ես խօսում.

մնաս բարև, սիրելի Նօրա, շատ շնորհակալ եմ քեզանից:

Նօր: Առայժմ ցտեսութիւն. դու ՚ի հարկէ այս երեկոյ կրգաս: Դուք նոյնպէս, դօքտօր... Ի՞նչ, եթէ ձեր առողջութիւնը ներէ... Ի հարկէ կրներէ, միայն դուք լաւ փաթաթուեցէք: (Բոլորը խօսելով գնում են նախասենեակ. սանդուխքների վերայից լսվում է երեխաների ձայները):

Նօր: Ահա նոքա, ահա նոքա: (Նա վազում է և բաց է անում դուռը. ներս է մտնում Վարիաննան երեխաների հետ միասին:)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ը.

Առաջինները, Վարիաննա և երեխաները:

Նօր: Ներս եկէք, ներս եկէք: (Վաանում է և համբուրում է երեխաներին:) Ա՛խ, իմ սիրելիներս, իմ թանկագիններս: Տեսնում եմ սոցա,

Քրիստինն. Հիանալի են, այնպէս չէ:

Բահի: Այստեղ մի կանգնէք հակա-
ռակ քամու մէջ:

Գեօրգի: Գնանք, տ. Աինդէն, ով
որ բաղդ չունի մայր լինելու, նորա
համար անտանելի կըլինի տեսնել
այդ տեսարանը:

(Րանկ, Գելմէր, և տ. Աինդէն
գնում են. Մարիաննան ներս է մըտ-
նում երեխաների հետ. Նորան նոյն-
պէս, դուռը ծածկելով:)

ՏԵՍԱՐԱՆ Թ.

Նոր, Մարիաննա, Երեմոն:

Նոր: Ի՞նչպէս դուք թարմ ու
ուրախ էք. ի՞նչ վարդագոյն թշեր
ունիք. կարծես ինձոր ու վարդ լի-
նին: (Երեխաները խօսում են նորա
հետ): Հն, ուրախ էիք. շատ լաւ.
այ, թէ ինչ, դու սահնակով քաշում
էիր Էմմային ու Յօբին. երկուսին

միասին. ի՞նչ քաջն ես դու, Էրվին:
Մարիաննա, մի բոպէ ինձ տուէք
փոքրիկին. իմ անգլին տիկնիկս: (Նա
դայեակի գրկից առնում է ամենա-
փոքրիկին և պարում է հետը): Այո,
մայրիկը և Յօբի հետ կըպարէ: Ի՞նչ-
պէս, դուք ձնթօփ էլ էիք խաղում.
այ, ինչո՞ւ ես ձեզ հետ չէի. . . Ոչ,
թողէք, Մարիաննա, ես ինքս նորան
կը հանուեցնեմ. ինդրեմ, թողէք,
այդ այնպէս զուարճալի է. իսկ դուք
գնացէք, մըսելէք, ձեզ համար սուրճ
է պահած: (Դայեակը գնում է ձախ
կողմի դռնից. Նորան հանուեցնում
է երեխաներին, վերարկուները գցում
է դէս ու դէն, իսկ երեխաները խօ-
սում ու պատմում են): Ի՞նչ, ձեր
ետեւից մեծ շունը վազեց. բայց նա
ձեզ չկծեց. խելօք երեխաներին շը-
ները չեն կծում: Կապոցները չբանաս,
Էրվին. ինչ տեսակն ես, ամեն բան
ուզում ես իմանալ. այ, հեռացիր

այդտեղից. այդ լաւ չէ. . . խաղալ էք ուզո՞ւմ. ի՞նչ խաղանք. աչքակապո՞ւկ. լաւ, խաղանք աչքակապուկ. թող առաջինը թագնուի Բօբը. Էս թագնուեմ, դէ՛ լաւ: (Նա և երեխաները խաղում են ծիծաղելով ու ձգարով այդ և դորան կից աջակողմեան սենեակում. վերջապէս Նօրան թագնը վում է սեղանի տակ. երեխաները ներս են ընկնում, փնտրում են նորան, բայց չեն կարողանում գտնել. յանկարծ լսում են նորա խուլ ծիծաղը. վազում են սեղանի մօտ, բարձրացնում են սիւռօցը և գտնում են Նօրային: Ընդհանուր ազմկալից ուրախութիւն. նա գուրս է գայիս բառաչելով. նոր ցնծութիւն. միւսնոջն ժամանակ դուռը բխում են, ոչ ոք չի լսում. այդ ըոպէին դուռը կիսատ բացվում է և երևում է Գիւնտէրը. նա սպասում է մի քանի ըոպէ, խաղը շարունակվում է):

ՏԵՍԱՐԱՆ Ժ.

Երբ մտածեցի, որ երբեք չեմ կարողանում
 իմանալ, որ երբեք չեմ կարողանում
 իմանալ, որ երբեք չեմ կարողանում

Գիւնտէր: Ներեցէք տիկին:

Նօրա: (ձգում է խուլ կերպով, շուռ է գայիս և վեր է թռչում կիսով չափ): Ի՞նչ կամենաք:

Գիւնտէր: Ներեցէք, նախասենեակի դուռը ամուր փակած չէր, երեւի մոռացել էին:

Նօրա: (Բարձրանալով.) Ամուսինս տանը չէ, պ. Գիւնտէր:

Գիւնտէր: Ես այդ պիտեմ:

Նօրա: Ուրեմն ի՞նչ էք կամենում:

Գիւնտէր: Երկու խօսք ձեզ ասել:

Նօրա: Ի՞նչ. . . (Կամաց երեխաներին): Գնացէք Մարիաննայի մօտ: Ի՞նչ. . . ոչ, օտար պարոնը մայրիկին ոչինչ չի անի. երբ նա գնայ, մենք կրկին կը խաղանք: (Նա տանում է երեխաներին ձախ կողմի

դունից և ծածկում է նոցա ետևից դուռը):

Նօրս: (Վրդովուած): Գուք ինձ Հէտ կամենում էք խօսել:

Գիւն.: Այո՛:

Նօրս: Այսօր. չէ՞ որ այսօր ամսի մէկը չէ. . .

Գիւն.: Ոչ, այսօր ճրագալոյց է. ձեզանից է կախուած, թէ ի՞նչ ընծայ կուեննաք տօներին:

Նօրս: Գուք իսկապէս ի՞նչ էք ուղում. ես... այսօր ոչինչ չեմ կարող...

Գիւն.: Մենք դեռ այդ մասին չենք խօսի. ինձ ուրիշ բան է պէտք: Արդեօք մի բոպէ ժամանակ ունի՞ք:

Նօրս: Այո՛, թէև. . .

Գիւն.: Ես նստած էի ձեր տան դիմացի պանդոկում և տեսայ, որ ձեր ամուսինը փողոցից անցաւ. . .

Նօրս: Է՛. ի՞նչ անենք:

Գիւն.: Նորա Հետ մի տիկին կար:

Նօրս: Վերջը:

Գիւն.: Թող տուէք հարցնել, այն կինը տիկ. Լինդէնը չէ՞:

Նօրս: Այո՛:

Գիւն.: Նա Հէնց նոր եկաւ:

Նօրս: Այո՛, այսօր առաւօտ:

Գիւն.: Նա մօտ է՞ ձեզ Հետ:

Նօրս: Այո՛, բայց ես չեմ հասկանում. . .

Գիւն.: Ես էլ նորան ճանաչում էի երբեմն:

Նօրս: Դիտեմ:

Գիւն.: Ա՛յ, թէ ի՞նչպէս. ուրեմն ձեզ յայտնի է. ես յարպէս էլ կարծում էի: Թող տուէք հարցնել, չլինի՞ տիկ. Լինդէնը բանքում տեղ կը ստանայ:

Նօրս: Ի՞նչպէս էք համարձակվում ինձ հարց ու փորձ անել: Գուք, պ. Գիւնտէր, դուք իմ ամուսնու ստորադրեալն էք. բայց քանի որ դուք ինձ հարցրիք, կը պատասխանեմ ձեզ՝ այո՛, տիկ. Լինդէնը այն-

տեղ պաշտօն կրստանայ. ես նորա
համար աշխատեցի: Պ. Գիւնտէր,
դուք հիմայ ամեն բան զիտէք:

Գիւն.: Ուրեմն ես դուշակեցի:

Նոր.: (Մանդալով սենեակի մէջ):
Վարձեմ, որ ես քիչ թէ շատ ազ-
դեցութիւն ունիմ. կարծում են թէ՛
որ կիւնն է, ուրեմն և... պ. Գիւն-
տէր, երբ մարդ կախումն ունի ու-
րիշից, այն ժամանակ նա պէտք է
խուսափէ նեղութիւն պատճառելուց...
այն. հը... .

Գիւն.: Ո՞վ ունի ազդեցութիւն:

Նոր.: Գուք շատ ճիշդ էք հաս-
կացել իմ միտքս:

Գիւն.: (Չայնը փոխելով) Տիկ.
Գեյմէր, չէք լինի այնքան բարի, որ
գործ դնէք ձեր ազդեցութիւնը իմ
օգտին:

Նոր.: Ի՞նչպէս... դորանով ի՞նչ
էք կամենում ասել:

Գիւն.: Չէք լինի այնքան բա-

րի, աշխատէիք, որ ես չզրկուիմ իմ
պաշտօնից:

Նոր.: Այդ ի՞նչ է նշանակում, ո՞վ
է ձեզ դուրս անում պաշտօնից:

Գիւն.: Խնդրում եմ ձեզ, իմ
առաջ անմեղ մի ձևանաք. ես զի-
տեմ, որ ձեր ընկերուհուն անհաճոյ
կրիւնի ինձ հետ հանդիպելը. հիմայ
հասկանում եմ և այն թէ ես ո՞ւմ
եմ պարտական, որ ինձ զրկում են
իմ պաշտօնից:

Նոր.: Բայց ես ձեզ հաւատացնում
եմ. .

Գիւն.: Լաւ, լաւ, ձեզ մի բան
կ'ասեմ, դեռ ժամանակը չէ. անցել
և ես ձեզ խորհուրդ եմ տալիս, ձեր
ազդեցութիւնը գործ դնել, որ այդ
տեղում դարձեալ ես մնամ:

Նոր.: Բայց, պ. Գիւնտէր, ես ամենևին
ազդեցութիւն չունիմ:

Գիւն.: Չունիք. ես կարծեմ,
դուք քիչ յառաջ ասացիք:

Նօրս: Գուք այնպէս չէք հասկա-
ցել: Ե՞ս. բայց միթէ ես կարող եմ
ազդեցութիւն ունենալ իմ ամուսնուս
վերայ:

Գիւն.: Օ՛, ես ձեր ամուսնուն
գիտեմ դեռ համալսարանից. կարծեմ
որ բանքի պ. դիրեկտորը պակաս
զիջող չէ քան ուրիշ ամուսիններ:

Նօրս: Եթէ դուք պէտք է իմ
ամուսնու մասին անարգանքով խօ-
սէք, այն ժամանակ ես ձեզ դուրս
կ'անեմ:

Գիւն.: Գուք շատ քաջ էք,
տիկին:

Նօրս: Ես ձեզանից էլ չեմ վա-
րենում. նոր տարուց յետոյ ես բո-
լոր դժուարութիւններից կ'ազատուիմ:

Գիւն.: (Իրան գսպելով): Լսե-
ցէք, տիկ. Գելմէր. եթէ այդպէս
խօսէք, այն ժամանակ ես պատրաստ
եմ ամենաճայրայեղ միջոցների դի-
մելու, որ այդ տեղը ինձ մնայ:

Նօրս: Ես այդ տեսնում եմ:

Գիւն.: Եւ ոչ թէ ուռձկի հա-
մար. ո՛չ, այդ ինձ համար երկրոր-
դական խնդիր է. այստեղ ուրիշ բան
կայ... բայց ուղղակի կ'ասեմ: Երևի
ձեզ լաւ յայտնի է, ինչպէս և ու-
րիշներին, որ մի քանի տարի սորա-
նից յառաջ ես մի անգամ անզգու-
շութիւն արի:

Նօրս: Ես այդպիսի մի բան լսել եմ:

Գիւն.: Գործը դատաստանի չը
հասաւ, բայց այն ժամանակից բոլոր
ճանապարհները կարծես ինձ համար
փակուեցին. այնպէս որ ես ուրիշ
աշխատանքներով սկսեցի պարապել,
որոնք ձեզ յայտնի են. չէ որ պէտք
է որ և է գործ ունենայի և կարող
եմ ձեզ հաւատացնել, որ ամենավա-
տերիցը չէի: Բայց հիմայ այդ բոլո-
րը ես պէտք է թողնեմ. դաւալներս
մեծանում են և գէթ նոցա համար
ես պէտք է աշխատեմ վայելել հա-

սարակութեան յարդանքն ու հաւատարմութիւնը, որքան այդ հնարաւոր է: Բանքի այդ պաշտօնը, եթէ կարելի է այսպէս ասել, առաջին աստիճանն է նպատակիս հասնելու համար: Իսկ ձեր ամուսինը, կամենում է նորից ինձ ձգել ցեխի մէջ:

Նօրս: Ի սէր Աստուծոյ, պ. Գիւնտէր, չէ որ ինձանից չէ կախուած ձեզ օգնելը:

Գիւն.: Հա՛, որովհետեւ դուք չէք կամենում, բայց ես ունիմ միջոց ձեզ ստիպելու, որ այդ անէք:

Նօրս: Մի՞թէ կ'ասէք իմ ամուսնուն, որ ես ձեզ պարտ եմ:

Գիւն.: Ի՞նչ կայ, եթէ ասեմ էլ:

Նօրս: Այդ ցածուցիկ կը լինէր ձեր կողմից: (Արտասուքը զսպելով): Այդ զաղտնիքը, իմ այդ ուրախութիւնս և պարծանքս, նորան կը յայտնեն այնպէս յանկարծ, այնպէս կոպիտ և այն էլ ո՛վ. դուք. դուք

ինձ շատ անախորժ բան արած կը լինիք:

Գիւն.: Միայն անախորժ:

Նօրս: (Տաքացած): Եթէ համարձակուիք, տեսէք, ձեզ համար աւելի վատ կը լինի. այն ժամանակ ամուսինս պարզ կը տեսնի ձեր վատութիւնը և ինչհարկէ պաշտօնից կը զրկուիք:

Գիւն.: Ես ձեզ հարցնում եմ, դուք միայն ընտանեկան անբաւականութիւններից էք վախենում:

Նօրս: Այո՛, երբ Բօքերտը իմանայ պարտքի մասին, իսկոյն կը վճարէ և ես էլ ոչ մի գործ չեմ ունենայ ձեզ հետ:

Գիւն.: (Մօտենալով): Ասեցէք, տիկ. Գելմէր. կամ ձեր յիշողութիւնը թոյլ է, կամ թէ դուք գործերից ոչինչ չէք հասկանում. ես պէտք է ձեզ բացատրեմ մանրամասն:

Նօրս: Ինչո՞ւ համար:

Գիւն.: Երբ ձեր ամուսինը Հիւ-
ւանդացաւ, դուք եկաք ինձ մօտ և
պարտ վերցրիք 1800 տալեր:

Նօրս.: Ուրիշ ոչ ոք չկար, որին
ես կարողանայի դիմել:

Գիւն.: Ես ձեզ խոստացայ գրտո-
նել այդ գումարը...

Նօրս.: Զ՛ որ գտաք:

Գիւն.: Ես խոստացայ գտնել
որոշեալ պայմաններով: Դուք այն
ժամանակ այնպէս վրդովուած էիք
ձեր ամուսնու տկարութեան պատ-
ճառով և այնպէս շտապում էիք փող
գտնել ճանապարհածախսի համար,
որ, երևի, ոչ մի զփուարութեան
մասին ուշադրութիւն չէիք դարձը-
նում... Աւելորդ չի լինել ուրեմն յի-
չեցնել ձեզ, որ ես խոստացայ ձեզ
համար փող գտնել մի մուրհակով,
որ գրել էի ես:

Նօրս.: Այո՛, և ես ստորագրեցի:

Գիւն.: Լաւ, բայց ես աւելացրի

էլի մի քանի տող, որ ձեր հայրը
ինքն է ձեզ համար երաշխաւոր լի-
նում: Այդ տողերը պէտք է գրէր
ձեր հայրը:

Նօրս.: Պէտք է գրէր... չէ՛ որ
գրեց:

Գիւն.: Ես տեղ թողի թուիւ
ամսու համար, այսինքն ձեր հայրը
ինքը պէտք է գրէր թիւը մուրհակն
ստորագրելիս: Յիշում էք, տիկ. Գելմէր:

Նօրս.: Այո, կարծեմ...

Գիւն.: Յետոյ ցօեսյա ձեզ տուի
մուրհակը, որ ուղարկէք ձեր հօրը:
այդպէս չէ:

Նօրս.: Այդպէս է:

Գիւն.: Դուք ՚ի հարկէ իսկոյն
ուղարկեցիք, որովհետեւ 5—6 օրից
յետոյ արդէն յետ տունիք ինձ մուր-
հակը ձեր հօր ստորագրութեամբ և
ես ձեզ յանձնեցի գումարը:

Նօրս.: Լաւ... բայց ես միթէ կա-
նոնաւոր չեմ վճարել ձեզ:

Գրիգորի. : Գմ Այն, Համարեա... Բայց շարունակենք մեր խօսակցութիւնը. այն ժամանակ ձեզ դժուար թուաց տիկ. Գեւմէր:

Նոր. : Ա՛խ, շատ:

Գրիգորի. : Որքան յիշում եմ, այն միջոցին ձեր հայրը շատ տկար էր:

Նոր. : Նա մեռնում էր:

Գրիգորի. : Եւ շնորհ մեռաւ:

Նոր. : Այո:

Գրիգորի. : Ասացէք, տիկ. Գեւմէր, չէ՞ք յիշում արդեօք, թէ ո՞ր օրը մեռաւ ձեր հայրը. այսինքն որ ամսին և որ թուին:

Նոր. : Հայրս մեռաւ սեպտեմբերի 29-ին:

Գրիգորի. : Այդ ուղիղ է, ես յիշտեղեկացայ. ահա այդ պատճառով ես չեմ կարող բացատրել (հանում է ծոցից թուղթը) մի տարօրինակ հանգամանք. . .

Նոր. : Ի՞նչ տարօրինակ հանգա-

մանք. ես չզիտեմ. . .

Գրիգորի. : Այն տարօրինակ մահանգամանքը, որ ձեր հայրը մուրհակը ստորագրել է իւր մահունից երեք օր յետոյ:

Նոր. : Ի՞նչպէս թէ. . . Գրեալ չէմ հասկանում. . .

Գրիգորի. : (մընջալով) մեռել է սեպտեմբերի 29-ին. հիմա այնպեցէք. ձեր հայրը գրել է հոկտեմբերի 2-ին. զարմանալի չէ՞ այս:

Նոր. : (Լուռ է):

Գրիգորի. : Կարող էք ինձ այդ բացատրել:

Նոր. : (Չարունակում է լռել):

Գրիգորի. : Աչքի էլ ընկնում և այն, որ այս խօսքերը «2-ն հոկտեմբերի» և տարին ձեր հօր ձեռքով չէ գրուած, այլ ուրիշի, որ կարծես ինձ ծանօթ է. թէև այնպէս կարելի է բացատրել, որ ձեր հայրը մոռացել է թիւը նշանակել և մէկը գրել է նո-

րա տեղը, դեռ չիմացած նորա մահուան մասին: Այստեղ վատ բան չկայ, բայց գլխաւորը անուան ստորագրութիւնն է. չէ՛ որ այդ ստորագրութիւնը իսկական է, տիկ Գեւորմէր, ձեր հայրը ինքն է ստորագրել իւր անունը:

Նոր: (Կարճ լուսթիւնից յետոյ, գլուխը յետ է դրում և յայտնում է նորա վերայ սպառնալի հայնացքով):

Ո՛չ, ես եմ ստորագրել նորա անունը:

Գեւորմէր: Լսեցէք, տիկ: Գեւորմէր, գիտէ՞ք, որ դուք շատ վտանգաւոր խոստովանութիւն արիք: յիշատարաց

Նոր: Ինչո՞ւ, սա՛նչկա՞տ: դուք կը ստանաք ձեր ըրտոր փողերը:

«Գլխի Գեւորմէր» տուէք, այ էլի դմի հարց տամ: Ինչո՞ւ մուրհակը դուք չո՞ւղարկեցիք ձեր հօրը: յա ծառայ

Նոր: Այդ անհնարին էր. հայրս ծանր հիւանդ էր. թէ է նրան խրնդրելի ստորագրել, պէտք է և խոս-

տովանէի, թէ ինձ ինչո՞ւ համար է հարկաւոր: այդ դումարը. բայց միթէ նորա ծանր դրութեան ժամանակ ես կարող էի ասել, որ իմ ամուսնուս վեանքը վտանգի մէջ է. այդ անկարելի էր: Բնական իմացար

Գեւորմէր: Այդ դէպքում աւելի լաւ էր արտասահման չգնալ: Բնական

Նոր: Այդ էլ անկարելի էր. դնալուց էր կախուած ամուսնուս վեանքը:

Գեւորմէր: Բայց միթէ դուք չմըտածեցիք, որ ինձ խաբում էք:

Նոր: Գորա վերայ ես չէի կարող ուշադրութիւն դարձնել. իմ ինչ փոթիթըս էր ձեր մասին մտածելը. ես մինչև անգամ արհամարում էի ձեզ այն բոլոր խիստ դժուարութիւնների համար, որ դուք յարուցանում էիք իմ առաջ, ջնայելով որ քաջ զիտէիք,

թէ իմ ամուսինս ինչ լատագրութեան է: Բնական իմացար

Գեւորմէր: Ակներև է, տիկ, Գեւորմէր,

որ դուք պարզ չէք հասկանում, թէ
ինչ յանցանք էք գործել: Կարող եմ
ձեզ հաւատացնել, որ իմ վարմունքս
ձերինից վատ չէր, բայց այնուամե-
նայնիւ իմ հասարակական դիրքս
գորանով կործանուեց:

Նօրո: Ի՞նչ. չլինի ինձ ուզում էք
հաւատացնել, որ վճռել էք վստահ քայլ
անել, որ ազատէք ձեր կնոջ կեանքը:

Գիւնակեր: Օրէնքի առաջ առիթ-
ները նշանակութիւն չունին:

Նօրո: Ուրեմն մեր օրէնքները
շատ վատ են:

Գիւնակեր: Լաւ են, թէ վատ, բայց
եթէ այդ մուրհակը դատարանին
ներկայացուի, այն ժամանակ օրէնքը
ձեզ կը դատապարտէ:

Նօրո: Այդ չի կարող լինել. ինչ-
պէս, աղջիկը իրաւունք չունի ծեր,
մահամերձ հիւանդ հօրը պաշտպա-
նելու վշտից ու դառնութիւնից: Եւ
կի՞նն իրաւունք չունի փրկելու ա-

մուսնու կեանքը: Ես օրէնքին լաւ
ծանօթ չեմ, բայց համոզուած եմ, որ
մի որ և է տեղում յիշուած կըլինի,
թէ այդ հնարաւոր է: Եւ դուք
այդ չգիտէք ու դեռ փաստաբան էք
կոչվում. դուք երևի վատ իրաւաբան
էք, պ. Գիւնակեր:

Գիւնակեր: Կարելի է, բայց գործե-
րը, այնպիսի գործերը, ինչպէս որ իմ
ու ձեր գործը, ես հասկանում եմ,
կարող եմ ձեզ հաւատացնել: Լաւ.
վարուեցէք այնպէս, ինչպէս կամե-
նաք. բայց մի բան կ'ասեմ ձեզ, որ
եթէ ինձ նորից արտաքսեն, այն
ժամանակ ձեզ հետ միասին... (Գլուխ
է տալիս և գնում):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Փ Ա .

Նօրա, յետոյ երեխաներ:

Նօրա: (Քիչ ժամանակ մտախոհ կերպով կանգնում է, յետոյ զլուխը յետ գցելով): Է՛հ, ոչինչ, նա ուզում էր ինձ միայն վախեցնել: Ես այնպէս լիմար չեմ: (Սկսում է հաւաքել երեխաների շորերը, բայց շուտով դադարում է): Բայց... ոչ, այդ անկարելի է. ես սիրուց դրդուած այդպէս վարուեցի:

Երեխաներ: (Ձախ կողմի դռան մէջ): Մայրիկ ջան, օտար պարոնը գնաց:

Նօրա: Այո, այո, գիտեմ. բայց ոչ ոքի մի ասէք օտար պարոնի մասին. լսում էք. հայրիկին էլ չի կարելի ասել:

Երեխաներ: Մենք չենք ասի. բայց, մայրիկ ջան, դու մեզ հետ կը խաղաս:

Նօրա: Այ, ոչ, հիմայ չէ:

Երեխաներ: Չէ որ դու մեզ խոստացար:

Նօրա: Խոստացայ, բայց հիմայ չեմ կարող: Գնացէք, ես շատ գործ ունիմ. գնացէք, գնացէք, իմ սիրելի, թանկագին զաւակներս: (Նա քրնքշութեամբ տանում է նոցա դէպի դուռը և նոցա յետևից դուռը ծածկում է):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Փ Բ .

Նօրա, յետոյ հեղինէ:

Նօրա: (Նայում է բազմոցի վերայ, վերցնում է ձեռագործը և շուտով թողնում է): Այ: (Վայր է պցում ձեռագործը, վեր է կենում, գնում է դէպի նախասենեակի դուռը և կանչում է): Հեղինէ, տօնաճառն այստեղ բերէք: (Մօտենում է ձախ կողմի սեղանին, զզրոցը դուրս քաշում և նորից կանգ է առնում): Այ... չէ որ դա միանգամայն անկարելի է:

Հէշինէ: (Բերելով տօնածառը): Տի-
կին, ձրտեղ կը հրամայէք դնել:

Նօր: Ա՛յ, այտեղ, սենեակի մէջ-
տեղը:

Հէշինէ: Էլ բան չունի՞ք պատուի-
րելու:

Նօր: Ոչ, շնորհակալ եմ, ինչ որ
ինձ պէտք է, բոլորն այտեղ է:

(Հեղինէ տօնածառը դնում և գը-
նում է):

Նօր: (Տօնածառը զարդարում է):

Ա՛յ, այտեղ մօմը, իսկ այտեղ ծա-
ղիկները... Անտանելի մարդ... Է՛հ
բոլորը լիմարութիւններ են: Այտեղ
ոչ մի վատ բան չկայ... Տօնածառը
պէտք է սիրուն լինի: Ես կ'աշխա-
տեմ, որ դու ուրախ լինիս, Բօբերտ,
կ'երգեմ, կը պարեմ և...

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Փ Գ:

Նօրա, Գեղմէր ներս է մտնում թղթերը
թւի տակ:

Նօր: Ա՛, ահա և դու:

Գեղմէր: Այտեղ մարդ կար:

Նօր: Այտե՞ղ, ոչ:

Գեղմէր: Զարմանալի է. ես տեսայ,
որ Գիւնտէրը մեր տանից դուրս ե-
կաւ:

Նօր: Հա՛, իրաւ է, որ Գիւնտէրն
այտեղ մի ըսպէով եկաւ:

Գեղմէր: Նօրա՛, ես զիտեմ, նա այս-
տեղ եկել էր, որ խնդրէ քեզ իւր
մասին բարեխօս լինելու:

Նօր: Այո՛:

Գեղմէր: Եւ դու պէտք է այդ ա-
նէիը, իբրև թէ նա քեզ չէ խնդրել.
դու պէտք է ծածկէիր, որ նա այս-
տեղ չէ եկել. նա և այդ մասին քեզ
խնդրեց:

Նօրս: Այն, Բօբերտ, բայց. . .

Գեշէր: Ա՛խ, Նօրն, Նօրն, և դու
Համաձայնեցիր այդ տեսակ մարդու
Հետ խօսակցել ու նորան խօսք տալ
և յետոյ իմ առաջ սուտ ասել:

Նօրս: Սո՛ւտ ասել. . .

Գեշէր: Չէ որ դու ասացիր, թէ
այստեղ ոչ ոք չկար: (Սպառնում է
մատով): Այդ էլ երբէք չպէտք է ա-
նէ իմ արտուտիկս. թռչնիկը երբէք
չպէտք է կեղծ ձայներ հանէ. . .
(Գրգռում է նորան): Չէ որ այնպէս
է... ուղիղ չե՛մ ասում... Ես այդպէս
էլ կարծում էի... (Թողնում է նրան):
Ի՛հ, այդ մասին էլ ոչ մի խօսք. . .
(Նստում է վառարանի մօտ): Ա՛խ,
այստեղ ինչպէս յարմար ու լաւ է:
(Թերթում է ձեռի թղթերը):

Նօրս: (Ջրադվում է տօնաձառով,
քիչ լուռ թիւնից յետոյ): Բօբերտ:

Գեշէր: Ի՞նչ:

Նօրս: Ես շատ ուրախ եմ, որ վա-

ղը չէ միւս օր հրաւիրուած ենք Ջր-
տէյնբերգենց մօտ դիմակահանդէսի:

Գեշէր: Իսկ ես շատ եմ հետաքրքր-
վում, թէ դու ինձ համար ի՞նչ սիւր-
պրիդ ես պատրաստել:

Նօրս: Ի՛հ, այդ բոլորը յիմարու-
թիւններ են:

Գեշէր: Ինչո՞ւ որ:

Նօրս: Ես ոչինչ չեմ կարող մտա-
ծել. բոլորն այնպէս յիմար ու աւ-
միտ բաներ են:

Գեշէր: Ահա՛ թէ ինչ եզրակացու-
թեան է եկել իմ Նօրիկս:

Նօրս: (Նորա աթոռի յետևը դը-
նելով իւր ձեռքերը): Դու շատ ըզ-
բաղուած ես, Բօբերտ:

Գեշէր: Ի՞նչ:

Նօրս: Այդ ի՞նչ թղթեր են:

Գեշէր: Բանքային:

Նօրս: Արդէն բանքային:

Գեշէր: Ես ընդունեցի նախկին
վարչութիւնից իրաւունք փոփոխելու

պաշտօնեաներին և զործողութեան
ճրագիրը: Տօներին պէտք է այդ ա-
նեմ. նոր տարուն ամեն բան կարգի
բերած կը լինիմ:

Նօրս: Ահա թէ ինչու խեղճ Գիւն-
տէրը. . .

Գեղեկ: Հ՛ր:

Նօրս: (Վառնալով լետեւի կողմից,
խաղում է նորա մագերի հետ): Սթէ
դու այդքան զբաղուած չլինէիր, ես
քեզանից կը խնդրէի մի մեծ, մեծ
շնորհ, Բօբերտ:

Գեղեկ: Լսենք, այդ ինչ է:

Նօրս: Ոչ ոք չունի այնպէս նուրբ
ձաշակ, ինչպէս դու. ես շատ կ'ու-
զէի այդ գիմակահանդէսին իմ ե-
րեսիս յարմար հագնուել: Ինչ կըլի-
նի, որ զբաղուիս ինձանով և նշա-
նակես, թէ ես ինչ գիմակ ունենամ
և ինչ տեսակ զգեստ կարել տամ
ինձ համար:

Գեղեկ: Օհօ, իմ յամառ Նօրաս

գլուխը կորցրել է և օգնութիւն է
խնդրում:

Նօրս: Այո, Բօբերտ, առանց քեզ
կորչում եմ:

Գեղեկ: Լա՛ւ, լա՛ւ, կը մտածեմ.
մենք գործին կ'օգնենք:

Նօրս: Ի՛նչպէս բարի ես: (Գնում
է տօնածառի մօտ. լուութիւն): Ի՛նչ
սիրուն են այս կարմիր ծաղիկները...
Լսէ՛, Բօբերտ... Ինչով որ Գիւտնէրը
մեղաւոր է, չիրաւի շատ վատ բան է:

Գեղեկ: Ստորագրութիւններ է կեղ-
ծում. դու այդ մասին զաղափար
ունիս:

Նօրս: Գուցէ նորան կարիքն է ըս-
տիպել:

Գեղեկ: Այո, կամ նա ուրիշ շա-
տերի նման այդպէս է անում թե-
թեամտութիւնից. ես ամենեւին այն-
պէս խստասիրտ չեմ, որ մարդուն
համարեմ անդարձ կորած այդ տե-
սակ միակ դէպքի համար:

Նօրս: Այնպէս չէ՞, Բօբերտ:

ԳէլՖէր: Մէկը կարող է նորից բարձրանալ բարոյապէս, եթէ. նա բացարձակ խոստովանի իւր արած յանցանքը և կրէ իւր պատիժը:

Նօրս: Պատիժը...

ԳէլՖէր: Բայց Գիւնտէրն այդ ճանապարհից շեղուեց, նա աշխատեց զանազան հնարներով խոյս տայ: Ահա թէ ինչով նա իրան կործանեց բարոյապէս:

Նօրս: Դու կարծում ես, որ նա...

ԳէլՖէր: Դու երևակայէ՞ միայն, թէ այդպիսի մարդը, խոստովանելով իւր մեղքը, ինչպէս պէտք է ամեն տեղ կեղծէ ու սուտ խօսի. նա պէտք է մեշտ դիմակ ծածկէ ոչ միայն իւր բոլոր մօտիկների առաջ, այլ մինչև անգամ իւր կնոջ և երեխաների. իւր հարազատ երեխաների առաջ, սալսափելի է, Նօրա:

Նօրս: Ինչո՞ւ:

ԳէլՖէր: Որովհետև այդ տեսակ մըթնոլորտը, որ լի է խաբեբայութիւնով, վարակում է ընտանիքին, այն ժամանակ երեխաների ամեն մի հառաչանքն աննկատելի կերպով ընդունում է չարի սերմեր:

Նօրս: (Մօտենալով ետևեց): Դու համոզուած ես:

ԳէլՖէր: Ես իբրև փաստաբան, սիրելի Նօրա, շատ անգամ նկատել եմ այդ. համարեա թէ բոլոր կանուխ փչացած մարդիկ ունեցել են խաբեբայ մայրեր:

Նօրս: Ինչո՞ւ անպատճառ մայրեր:

ԳէլՖէր: Աւելի շատ մայրերն են մեղաւոր, բայց ՚ի հարկէ հայրերինն էլ է մեղքը: Այդ ամեն մի դատաւորի յայտնի է. և այդ Գիւնտէրն ամբողջ տարիներ թունաւորել է իւր հարազատ զաւակներին կեղծով ու ստով: Ահա թէ ինչու ես նորան համարում եմ բարոյապէս ընկած (ձեռ-

քերը Նորային երկարացնելով) և ուրեմն, իմ սիրելի, փոքրիկ Նորաս պէտք է ինձ խօսք տայ, որ նորա համար էլ բարեխօսելու չէ: Ձեռդ տո՛ւր. այ, այդպէս. վճռուած է: Հաւատացնում եմ քեզ, ինձ անհնարին կրկինէր նորա հետ ծառայելը. այդ տեսակ մարդկանց մօտ ես ուղղակի զգում եմ մի տեսակ Ֆիզիքական թուլութիւն:

Նորս: (Ձեռը քաշում է և անցնում է տօնածառի միւս կողմը): Այստեղ ինչ շոգ է. ես դեռ որչափ գործ ունիմ:

Գեղէր: (Վեր է կենում և ծալում է թղթերը): Ես էլ պէտք է նայեմ այս թղթերից մի քանիսը և քո ըզգեստի մասին էլ պէտք է մտածել: Իսկ այն, որը ոսկեգոյն թղթով փաթաթած պէտք է կախէիր տօնածառից, պատրաստել եմ: (Ձեռը դնում է նորա գլխին): Սիրելի, փոքրիկ ար-

տուտիկս: (Գնում է գրասենեակը և դուռը ծածկում է):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Դ .

Նորա, յետոյ Մարիաննա.

Նորս: (Կամաց, քիչ լուռութիւնից յետոյ): Ո՛չ, այդպէս չէ... այդ անկարելի է... այդ պէտք է անհնարին լինի:

Մարիաննա: (Ձախ կողմի դռնից): Երախանները շատ են խնդրում մայրիկի մօտ գալ:

Նորս: Ո՛չ, ո՛չ, մի թողէք ինձ մօտ. մնացէք նոցա հետ, Մարիաննա:

Մարիաննա: Լաւ: (Փածկում է դուռը):

Նորս: (Գունատ և յուզուած): Ես փչացնում եմ իմ երեխաներիս, թունաւորում եմ իմ տունս: (Քիչ լուռութիւնից յետոյ, նա հպարտ բարձրացնում է գլուխը): Այդ ճշմարիտ չէ. ո՛չ, և ո՛չ էլ կրկին ճշմարտութիւն:

Վ ցրամմնապր ի նոմբ) Կրիտոս
 (ի նոյմած զուոր

ԱՐԱՐՍԻԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ամմալիցաՄ յոսնի աղօթ.

Նոյն սենեակը:

Անկիւնում դաշնամուրի կողքին դը-
 րուած է տօնածառը, որի վրայի բաները
 հանած են, մոմերը հանգած: Բազմոցի վե-
 րայ ընկած են Նօրայի վերարկուն:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա.

Նօրա: (Մենակ. նա անհանգիստ
 կերպով ման է գալիս սենեակի մէջ.
 վերջապէս կանգնում է բազմոցի ա-
 ռաջ և առնում է վերարկուն. քիչ
 մտածելուց յետոյ գցում է նորան
 բազմոցի վերայ): Մէկը գալիս է:
 (Մօտենում է դռանը և ականջ է
 դնում): Ոչ, մարդ չկայ: Ի՞նչ հարկէ...

այսօր Ծննդեան առաջին օրն է, ոչ
 ոք էլ չի գայ... և վաղը նոյնպէս...
 Բայց կարելի է (Բայց է անում դու-
 ուր և նայում է): Ոչ, նամակների
 արկղը դատարկ է: (Բեմի առջևի
 կողմն է գալիս): Է՛, յիմարու[թիւն-
 ներ են: Միթէ նա, լիբաւի... այդ
 չի կարող լինել. չի կարող. չէ՞ որ
 ես երեք փոքրիկ զաւակներ ունիմ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Բ.

Նօրա, Մարիաննա ձախ կողմի դռնից ներս է
 մտնում մի մեծ, թղթէ արկղ ձեռքին:

Մարիաննա: Վերջապէս ես գտայ
 այս արկղը ձեր զգեստով:

Նօրա: Չնորհակալ եմ, դրէք այն
 սեղանի վերայ:

Մարիաննա: Բայց զգեստը շատ անկարգ
 դրուածեան մէջ է:

Նօրս: Ես կ'ուզէի հազար կտոր
անել նորան:

Մար.: Տէր Աստուած, դորան ուղ-
ղելը հեշտ է. միայն քիչ համբերու-
թիւն պէտք է ունենալ:

Նօրս: Ես կ'երթամ տիկ. Լինդէ-
նի մօտ, որ նա ինձ օգնէ:

Մար.: Դուք դարձեալ պատրաստ-
վում էք գնալու այս եղանակին. դուք
կը մըսէք, կը հիւանդանաք. . .

Նօրս: Յ, այդ դեռ ոչինչ: Ի՞նչ
են անում երեխաները:

Մար.: Նոքա խաղում են իրանց
ընծաների հետ, բայց. . .

Նօրս: Նոքա իմ անունս շատ են
տալիս:

Մար.: Չէ որ նոքա սովոր են մայ-
րիկին միշտ իրանց հետ տեսնել. . .

Նօրս: Այո՛, բայց հիմայ, Մարիան-
նա՛, ես չեմ կարող միշտ նոցա հետ
լինել:

Մար.: Փոքրիկ երեխաներն ամեն

բանի շուտ կը սովորեն:

Նօրս: Դուք կարծում էք. կար-
ծում էք որ նոքա կը մոռտնան ի-
րանց մայրիկին, եթէ նա հեռանայ
բոլորովին. . .

Մար.: Աստուանձ իմ, ի՞նչպէս թէ
բոլորովին:

Նօրս: Ասացէ՛ք, Մարիաննա. ես
շատ անգամ մտածում եմ, թէ դուք
ի՞նչպէս վճռեցիք ձեր հարազատ ե-
րեխային օտար մարդկանց յանձնել:

Մար.: Բայց ուրիշ կերպ ես ի՞նչ-
պէս կարող էի փոքրիկ Նօրայի դա-
յնակը լինել:

Նօրս: Լաւ, բայց ի՞նչպէս առաջ
եկաւ այդ ցանկութիւնը:

Մար.: Լաւ տեղ բացուեց ինձ հա-
մար. մի իւե՛ղճ աղջիկ, որ շատ
տանջանքներ է կրել, պէտք է ու-
րախանար այդ դէպքի համար: Այն
վատ մարդն ինձ համար ոչինչ չէ
արել:

Նօրա: Ձեր աղջիկը երևի ձեզ մոռաւել է:

Մար: Ոչ, ամենեւին. երկու անգամին էլ՝ մէկ հաղորդուելիս, մէկ էլ մարդու գնալիս ինձ գրել էր:

Նօրա: (Գզուելով նորան): Սիրելի Մարիաննան, դուք ինձ համար բարի մայր էք եղել, երբ ես դեռ փոքրիկ էի:

Մար: Խեղճ, փոքրիկ Նորան ոչ ոք չունէր բացի ինձանից:

Նօրա: Ես համոզուած եմ, որ եթէ իմ փոքրիկներս գրկուին իրանց մայրիկից, չէ որ դուք... Բոլորը լիմարուածիւններ են: (Բաց է անում թրղթէ արկղը): Գնացէք նոցա մօտ. հիմայ ինձ հարկաւոր է... Վաղը դուք կը տեսնէք, թէ սա ինչպէս սիրուն կը լինի:

Մար: Պարահանգէսին մեր Նորանից սիրուն ոչ ոք չի լինի: (Նա գնում է ձախ դռնից):

Նօրա: (Հանում է զգեստը արկղից և շուտով լետ է գցում): Ա՛խ, եթէ ես կարողանայի գնայ... Գոնէ ոչ ոք չգար այտեղ. երանի՛ տան մէջ ոչ ինչ չպատահէր, մինչև... Բոլորը լիմարուածիւններ են, ոչ ոք էլ չի գայ, միայն թէ հարկաւոր չէ մտածել... Կըշփեմ մութիւտս. դեղեցիկ ձեռնոցներ, դեղեցիկ ձեռնոցներ... Թող կորչի այդ գործը... Մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց: (Ճչում է): Ա՛հ, ահա նա գալիս է... (Վաղում է գէպի դուռը և կանգնում է տատանման մէջ):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ.

Նօրա, տ. Լինդէն (Ներս է մտնում նախասենակից, որտեղ եւ հանել է վերարկուն):

Նօրա: Այդ դու ես, Քրիստինան. այնտեղ էլ ուրիշ մարդ չկայ... Ի՞նչ լաւ, որ եկար:

Տ. Լեւ: Ինձ ասացին, որ դու եկել ես մօտս և հարցրել ես ինձ:

Նօր: Այո, ես եկայ... Քրիստինն, խնդրում եմ քեզ, որ ինձ օգնես. նստենք այստեղ բազմոցի վերայ: Գիտեն, վաղը երեկոյ դիմակահանդէս պէտք է լինի հիւպատոս Չտէյնբէրգի մօտ, որ սպրում է մեր վերելք: Բօքերտը կամենում է, որ ես ձեանամ Նէպոլիտի ձկնորսուհի և տարանտելլա պարեմ. ես այդ պարը սովորեցի Կապրի կղզում:

Տ. Լեւ.: Ուրեմն դու պէտք է ամբողջ ներկայացումն տաս:

Նօր: Այո, Բօքերտն այդպէս է կամենում: Տես, ահա զգեստը. դեռ Խտայիայում Բօքերտը սա ինձ համար կարել տուեց, բայց հիմայ այնպէս քանդոտուել է և ես չգիտեմ...

Տ. Լեւ.: Է, այդ ոչինչ, մենք շուտով կ'ուղղենք. . . միայն վրայի զարդերը քիչ տեղ քանդուել են.

դու թեյ ու ասեղ տո՛ւր: Ըն, հիմայ ամեն բան կայ, ինչ որ հարկաւոր է:

Նօր: Ի՞նչ բարի ես...

Տ. Լեւ.: (Կարում է): Ուրեմն դու ուզում ես վաղը դիմակաւորուել. Նօրա... գիտես ինչ... ես վաղը մի ըսպէով կը հանդիպեմ, որ տեսնեմ քեզ այս զգեստով: Բայց ես մոռացայ քեզ շնորհակալութիւն անելու երեկուայ ուրախ երեկոյթի համար:

Նօր: (Վեր է կենում) և անցնում է սենեակի միջով): Ա՛խ, երեկուայ երեկոյթն այնպէս ուրախ չերևեց ինձ, ինչպէս առաջ լինում էր. . . Քրիստինն, դու պէտք է մեղ մօտ աւելի վաղ գայիր: Այո, Բօքերտը կարող է տունը գեղեցիկ ու ճաշակով սարքել:

Տ. Լեւ.: Ես կարծեմ, դու էլ այդ շնորհքն ունիս. զուր չէ, որ դու քո հօր աղջիկն ես: Բայց ասն ինձ, խնդրեմ, դօքտօր Բանկը միշտ այդ-

պէս տխուր է, ինչպէս որ երէկ երեկոյ էր:

Նոր: Աիշդ է, երէկ այդ աւելի աչքի էր ընկնում: Բայց նա վտանգաւոր հիւանդութիւն ունի. խեղճը սակաւարիւն է. գիտե՞ս, նրա հայրը շատ անպիտան մարդ է եղել, քաշ է եկել սիրուհիներէ հետ և այլն, և այդ պատճառով էլ որդին փոքր հասակից հիւանդ է եղել:

Տ. Լեւ.: (Կարը գցում է ծնկերին): Բայց, սիրելի Նորա, այդ ամենը սրտեղից գիտես:

Նոր: (Ման գալով): Այ՛քեզ բան, ինչ կայ զարմանալու. երբ մի մայր ունի երեք զաւակ, նորա մօտ լինում են այնպիսի կանայք... որոնք քիչ թէ շատ հասկանում են բժշկականութիւնից և պատմում են նորան այս, այն:

Տ. Լեւ.: (Նորից կարում է. կարճ

լուութիւն): Դօքտօր Բանկը ամէն օր այտեղ է լինում:

Նոր: Ամեն օր. նա Բօքերտի ամենալաւ ընկերն է, նոյնպէս և իմ: Կարելի է ասել, որ դօկտօր Բանկը մեր ընտանիքի անդամն է:

Տ. Լեւ.: Բայց ասա՛, խնդրեմ, այդ մարդը բոլորովին անկեղծ է... ուղում եմ ասել, թէ նա չի սիրում շողքօրթել:

Նոր: Ընդհակառակը. ինչո՞ւ քեզ այդպէս է երևում:

Տ. Լեւ.: Երէկ, երբ դու ինձ ծանօթացրիր նորա հետ, նա հաւատացնում էր, որ այս տան մէջ իմ անունն շատ է լսել, իսկ յետոյ դուրս եկաւ, որ քո ամուսինն ինձ ամենևին չի ճանաչում. ինչպէս կարող էր դօքտօր Բանկը...

Նոր: Ասածդ շատ ճիշդ է, Բրիստինա. բայց գիտե՞ս, որ Բօքերտն ինձ չափազանց սիրում է, և այդ պատ-

ճառով, նորա ասելով, ես պէտք է միայն նորան պատկանեմ: Սկզբները նա նախանձում էր, երբ ես խօսում էի իմ յառաջուայ ընկերներին մասին. ես ՚ի հարկէ դադարեցի. իսկ դօքտօր Բանկի հետ ես շատ անգամ խօսում եմ նոցա մասին. նա շատ սիրում է, երբ ես խօսում եմ:

Տ. Լէն.: Սիրելի Նօրա, շատ բանի մէջ դու դեռ երեխայ ես. ես քեզանից քիչ մեծ եմ և աւելի փորձուած: Գիտե՞ս քեզ ինչ կ'ասեմ, աշխատիր գործ չունենալ այդ դօքտօրի հետ:

Նօրա: Ում հետ:

Տ. Լէն.: Գորա և միւսի հետ: Երէկ դու ինձ պատմում էիր մի ինչ որ հարուստ, քեզ համակրողի մասին, որ փող է գտել ձեզ համար. . .

Նօրա: Եւ որը. . . դժբախտաբար միանգամայն գոյուլթիւն չունի. . . Յետո՞յ, շարունակէ:

Տ. Լէն.: Դօքտօր Բանկը հարուստ է:

Նօրա: Այո՞:

Տ. Լէն.: Եւ նա ոչ ոք չունի, որի մասին հոգս քաշէր:

Նօրա: Ոչ ոք, յետո՞յ. . .

Տ. Լէն.: Եւ նա ամէն օր այստեղ է լինում:

Նօրա: Ես քեզ ասացի, որ ամեն օր:

Տ. Լէն.: Ուրեմն ինչպէս կարող է այդպէս ջենտելմէնը անքաղաքավարի լինել:

Նօրա: Ես միանգամայն քեզ չեմ հասկանում:

Տ. Լէն.: Խնդրեմ չհասկացող մի ձևանար. միթէ կարծում ես, որ ես չգուշակեցի, թէ դու սովից ես պարտք վերցրել 1800 տալեր:

Նօրա: Դու խելագարուել ես: Եւ դու այդ մտածացիր. ընտանիքի ընկերինց, որ ամեն օր մեզ մօտ է լինում. այ, տանջող յարաբերութիւն կը լինէր:

Տ. Լէն.: Ուրեմն նա չէ՞, ուղիղ:
 Նօրս: Հաւատացնում եմ քեզ, որ
 նա չէ. իմ մտքովս էլ չէր անցնի,
 որ բանն այդ տեղը հասնի... մանա-
 լանդ որ նա այն ժամանակ ինձ ո-
 չի՛նչ չէր կարող տալ. նա յետոյ ժա-
 ռանգութիւն ստացաւ:

Տ. Լէն.: Այդ քո բաղդն է, Նօրս:

Նօրս: Աճմարիտ, երբէք չեմ մտա-
 ծել դօքտօր Բանկից փող խնդրելու.
 բայց ես հաստատ համոզուած եմ,
 որ եթէ նորան դիմէի...

Տ. Լէն.: Առանց ամուսնուդ զի-
 տութեան:

Նօրս: Ես պէտք է ազատուիմ մի
 ուրիշ գործից, որ արել եմ Բօբեր-
 դից ծածուկ. ես պէտք է անպատ-
 ճառ վերջ տամ դորան:

Տ. Լէն.: Այո՛, այո՛, դու դեռ երէկ
 ասում էիր, բայց...

Նօրս: (Ման է գալիս): Տղամարդը

այդ աւելի լաւ կարող է սարքել
 քան կինը...

Տ. Լէն.: Ամենից լաւ կը սարքէ
 ամուսինդ:

Նօրս: (Կանգ է առնում): Ասա՛,
 խնդրեմ, երբ բոլոր պարտքը վճարվում
 է, չէ՞ որ մուրհակը յետ եմ դարձ-
 նում:

Տ. Լէն.: Ի հարկէ:

Նօրս: Եւ կարելի է հազար կտոր
 անել ու վառել այդ զգուելի ու կեղ-
 տոտ թուղթը:

Տ. Լէն.: (Անթարթ նայելով նորա
 վերայ, կարը թողնում է և վեր է
 կենում): Նօրս, դու մի բան ծած-
 կում ես:

Նօրս: Մի՛թէ այդ նկատելի է:

Տ. Լէն.: Երէկ առաւօտուանից դու
 այդպէս ես. ինչ է պատահել քեզ,
 Նօրս:

Նօրս: Քրիստինա, (ականջ է դը-
 նում) կամաց, այ՛ վերադառնում է

Բօբերտը. Հիմայ դու գնան երեխաների մօտ. Բօբերտը կար չի սիրում. Թո՛ղ Մարիաննան քեզ օգնէ:

Տ. Լիւն.: (Հաւաքում է կտորները): Լան, լան, բայց ես չեմ գնայ, մինչև որ քեզ հետ անկեծօրէն չխօսեմ: (Նա գնում է ձախ կողմից, միևնույն միջոցին ներս է մտնում Գելմէրը նախասենեակից):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Դ.

Նօրս, Գելմէր:

Նօրս: (Գիմաւորում է նորան): Ի՞նչքան երկար սպասեցի քեզ, սիրելի Բօբերտ:

Գելմէր: Կար անողն այստեղ էր:

Նօրս: Ոչ, այդ Քրիստինան է. նա օգնում է ինձ զգեստս կարգի բերելու. դու կրտեսնես, որ ես հիանալի կրլինիմ:

Գելմէր: Այո, չէ՞ որ դու շատ լաւ մտածեցիր:

Նօրս: Լաւ միտք է, բայց այն էլ լաւ չէ, որ ես քեզ հնազանդ եմ:

Գելմէր: (Նորա դնչից բռնելով): Լաւ է... որ դու ամուսնուդ լսում ես. անխ, դու չարաճճի. ես գիտեմ, որ դու բոլորովին այդ չես մտածում, բայց չեմ ուզում քեզ խանգարել: Դու երևի կընախապատրաստուիս:

Նօրս: Իսկ դու գործերովդ կըպարպես:

Գելմէր: Այո, (ցոյց է տալիս մի դաստայ թուղթ) տեսնում ես, բանքիցն եմ դալիս: (Ուզում է գնալ զրասենեակ):

Նօրս: Բօբերտ:

Գելմէր: (Կանգ է առնում): Ի՞նչ:

Նօրս: Ա՛յժէ քո արտուտիկը քեզանից մի բան խնդրէ շատ սրտանց:

Գելմէր: Այն ժամանակ:

Նօրս: Դու այդ կը կատարէիր:

Գէշէր: Քայց ես յառաջ պէտք է
իմանամ, թէ այդ ինչ է:

Նօրս: Արտուտիկը կը սկսէ թըռչ-
կոտել, զանազան հանաքներ անել,
եթէ դու նորա հետ բարի լինիս և
լսես նորան:

Գէշէր: Ի՛հ, շուտ ասա:

Նօրս: Արտուտիկը բոլոր սենեակ-
ներում կ'երգէ բարձր և ցածր. . .

Գէշէր: Նա առանց այն էլ եր-
գում է:

Նօրս: Ես կը ներկայացնեմ ոգի-
ներին և կը պարեմ լուսնի լուսով,
Քօբէրտ:

Գէշէր: Չլինի՞ թէ դարձեալ այն
է, ինչ որ այսօր առաւօտ ակնար-
կեցիր:

Նօրս: (Աւելի մօտենալով նորան):
Ս.յո՛, Քօբէրտ, շատ եմ ինդրում:

Գէշէր: Եւ դու քաջութիւն ունիս
նորից այդ հարցը զարթեցնելո՛ւ:

Նօրս: Ս.յո՛, այո՛, դու պէտք է

կատարես իմ խնդիրքս: դու պէտք
է թողնես Գիւնտէրին իւր տեղում:

Գէշէր: Սիրելի Նօրս, ես նորա
տեղն արդէն նշանակել եմ տիկ.
Լինդէնին:

Նօրս: Քո կողմից այդ մի լաւու-
թիւն է, բայց Գիւնտէրի տեղ դու
կարող ես ծառայողներից մէկին ար-
ձակել:

Գէշէր: Այդ անհասկանալի յամա-
ռութիւն է, դու առանց մտածելու
խոստացել ես նորան ինձ մօտ բա-
րեխօս լինել, իսկ ես պէտք է. . .

Նօրս: Ամենւին գորա համար չէ,
Քօբէրտ. դա քո օգտին կը լինի.
այդ մարդը կեղտոտ լրագիրների աշ-
խատակից է. դու ինքդ այդ ասում
էիր. նա կարող է քեզ շատ վա-
տութիւն անել. ես սաստիկ վախե-
նում եմ նորանից:

Գէշէր: Հո՛, հիմայ հասկանում եմ.
քեզ վախեցնում են լիշողութիւնները:

Նօրա: Ի՞նչ յիշողութիւններ:

Գեղեցի: Երևի քո հօրդ մասին:

Նօրա: Դէ, ի հարկէ. յիշում ես, թէ չար մարդիկ ինչ էին խօսում նորա մասին և ինչպէս զրպարտում էին նորան. նոքա անշուշտ կը հասնէին իրանց նպատակին, եթէ որ տէրութիւնը քեզ չուղարկէր գործը քննելու և եթէ դու այնքան բարի չլինէիր:

Գեղեցի: Իմ սիրելի Նօրա, քո հօր և իմ մէջ մեծ զանազանութիւն կայ. քո հայրդ ինչպէս ծառայող բոլորովին մաքուր չէր. իսկ ես ընդհակառակը, և ես յօյս ունիմ այսպէս մընալու. քանի որ այս պաշտօնիս մէջ կը լինիմ:

Նօրա: Օ՛, դու երևակայել չես կարող, թէ չար մարդիկ ինչ անգթութիւնների են ընդունակ: Մենք հիմայ կ'ապրենք լաւ ու երջանիկ, մեր խաղաղ ու անհող անկիւնում և դու

և ես և մեր երեխաները. Բօբերտ, ուրեմն խնդրում եմ քեզ շնտ, չափազանց...

Գեղեցի: Դու միանգամայն գործը փչացնում ես, նորա մասին խնդրելով: Քանքում բոլորին յայտնի է, որ ես վճռել եմ Գիւնտէրին արձակել. եթէ հիմայ իմանան, որ բանքի նոր դիրեկտօրը լսել է կնոջը...

Նօրա: Է՛, ի՞նչ անենք:

Գեղեցի: Միայն նորա համար, որ պնդում էր իմ յամառ Նօրան... Եւ ես ծաղրի առարկայ կը դառնամ բոլոր ծառայողների առաջ և տեղիք կը տամ կարծելու, որ ես ուրիշի ազդեցութեան ենթարկուող եմ. Հաւատան ինձ, որ ես շուտով կըզգամ դորա հետեանքները և բացի այդ, կայ էլի մի հանգամանք, որ անհնարին է դարձնում Գիւնտէրի բանքում ծառայելը, քանի որ ես այնտեղ դեկտօր եմ:

Նօրա: Ի՞նչ հանգամանք:

Գեւորէր: Ես կը կարողանայի չտեսնող ձեանայ նորա բարոյական պակասութիւնները...

Նօրա: Այնպէս չէ, Բօբերտ:

Գեւորէր: Եւ ինչպէս ես լսել եմ, նա բաւական աշխատասէր է: Բայց նա իմ ընկերս էր, երբ ես դեռ երիտասարդ էի. այդ անց անգոյշ ծանօթութիւններից մէկն է, որոնք յետոյ շատ անյարմար են լինում: Ուղիղն ասած, մենք միմեանց «գու» ենք ստում. և այդ չի ծածկում օտարների առաջ այդ անամօթ մարդը. ընդհակառակը նա երեւակայում է, որ այդ նորան իրաւունք է տալիս մտերիմ ձեանալու, և այդ պատճառով նա միշտ կրկնում է իւր «գու»ն, «գու», «գու» Գեւորէր: Հաւատացնում եմ քեզ, ես նորա հետ ինձ շատ անյարմար եմ զգում. նա կարող է բոլորովին

անտանելի գարձնել իմ բանքում գտնուելը:

Նօրա: Գու լուրջ քօ ասում:

Գեւորէր: Ի հարկէ, լուրջ:

Նօրա: Այդ փոքրոգութիւն է քո կողմից:

Գեւորէր: Ինչ ասացիր, փոքրոգութիւն. դու ինձ փոքրոգի ես համարում:

Նօրա: Ընդհակառակը, սիրելի Բօբերտ, և ահա թէ ինչու. . .

Գեւորէր: Միևնոյն է, դու իմ պատճառներս անուանում ես մանր. . . երևի, ես չիրաւի այդպէս եմ: Մանր, այն թէ ինչպէս. . . դորան պէտք է վերջ գնել: (Գնում է դէպի նախասեակի դուռը և կանչում է): Հեղինէ:

Նօրա: Ի՞նչ ես ուզում. . .

Գեւորէր: (Թղթերի մէջ փնտռում է...): Ուզում եմ գործին վերջ տալ:

Նոյն մասը ՏԵՍԱՐԱՆԻ Ե. 116 մասին

Առաջինը, Հեշինէ:

Գէլ: (Հեղինէին): Այս նամակը տարէք. ասացէք մշակին, որ իսկոյն տանի իւր հասցէին համեմատ. ահա ևս փող:

Հեշինէ: Ղատ բարի: (Գնում է):

ՏԵՍԱՐԱՆԻ Զ.

Նոր, Գէլ Զեր:

Գէլ: (Հաւաքելով իւր թղթերը): Այդպէս աւելի լաւ կը լինի, իմ յամառ Նորան:

Նոր: (Կարծես մոռացութեան մէջ): Բոբերտ, այդ ինչ նամակ էր:

Գէլ: Գիւնտէրի հրաժարականը:

Նոր: Յետ պահանջէ, Բոբերտ, դեռ ժամանակ կայ. ա՛խ, Բոբերտ,

յետ պահանջէ նամակը ի սէր իմ, ի սէր քո, ի սէր մեր երեխաների: Լսում ես, Բոբերտ, կատարէ՞ս իմ խնդիրքս, դու չգիտես այդ նամակը մեզ ինչ ցաւերի մէջ կը գցէ:

Գէլ: Արդէն ուշ է:

Նոր: Այո, արդէն ուշ է:

Գէլ: Նորան, այդ քո վախկոտութիւնը ես ներում եմ, թէև դա ինձ համար մեծ վիրաւորանք է: Այո, վիրաւորանք է, կամ գուցէ վիրաւորական չէ՞ կարծելը, որ ես վախեցում եմ՝ ցած, կեղտոտ փաստաբանի վրէժից: Բայց ես քեզ ներում եմ, որովհետև այդ միւսնոյն ժամանակ դեղեցիկ ապացոյց է քո դէպքին՝ ունեցած անչափ սիրոյն: (Գգվում է նորան): Այդպէս հարկաւոր էր, սիրելիդ իմ Նորան: Թող լինի, ինչ որ լինելու է. և իմացած եղիր, որ երբ հարկը ստիպէ, ես բաւական ոյժ ունիմ դիմադրելու. դու կը տեսնես,

որ ես բաւական քաջութիւն ունիմ
ամեն ինչ ինձ վերայ առնելու:

Նոր: (Վախեցած): Գորանով ինչ
ես ուզում ասել:

Գէ.: Ես... ասում եմ, բոլորը...

Նոր: (Իրան զսպելով): Երբէք,
երբէք:

Գէ.: Գէ լաւ. ուրեմն մենք ցաւը
կիսենք, Նորա, ինչպէս որ պէտք է
մարդուն և կնոջը: (Չփնտելն է նո-
րան): Հիմա դու գոհ ես. լաւ, սի-
րելիս, ինչո՞ւ աչերդ աղանեակի նը-
ման վախ ես արտայայտում: Այդ
բոլորը քո երևակայութիւնն է. լաւ
կը լինէր, որ տարանտելա պարը
կրկնէիր. ես կ'երթամ միւս սենեակ
և մէջտեղի դուռը կը փակեմ. այն-
տեղ ոչինչ չի լսվում. և դու կարող
ես աղմուկ անել, որչափ կամենաս:
(Դուան միջից յետ է նայում): Եթէ
Բանկը գայ, ասա իմ տեղս: (Նա
գլուխ է տալիս նորան, թղթերը

ձեռին ներս է մտնում իւր գրասե-
նեակը և դուռը ծածկում է):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Է.

Նոր, Բան, յետոյ Հէյնէ:

Նոր: (Սարսապի մէջ կանգնած
է, կարծես մեխուած, ու մրմնջում է):
Նա կարողացաւ այդպէս վարուել,
այո՛, կարողացաւ. նա այդ արեց,
չնայելով ոչ մի բանի. այո՛, ոչ մի
բանի աշխարհիս երեսին: Հիմա էս
ինչ անեմ. . . ո՞վ կ'ազատէ ինձ:
(Ջանգաճարում են): Այդ դօկտոր
Բանկն է: Աւելի լաւ է ուրիշ բան,
ինչ էլ որ լինի: (Նա ծանր տանում
է ձեռքը ճակատին, սիրտ է առնում,
զնում է նախասենեակ և դուռը բաց
է անում: Բանկը ներս է մտնում և
կախում է իւր մուշտակը: Յետոյ
քանի զնում մթնում է): Բարև,

դօքտօր, զանգահարելուց ես իմացայ,
որ դուք էք. բայց հիմայ Բօքերտի
մօտ չէք կարող գնալ. կարծեմ նա
շատ գործ ունի:

Բանի: Իսկ ձեզ մօտ:

Նօրա: (Մինչև նա ներս է մտնում,
դուռը ծածկելով): Օ՛ր, դուք գիտէք,
որ ես ձեզ համար միշտ մի ազատ
ժամ ունիմ:

Բանի: Ղնորհակալ եմ ձեզանից.
ես կ'օգտուիմ ձեր ընկերութիւնից,
քանի որ դեռ կարող եմ:

Նօրա: Ի՞նչպէս թէ քանի դեռ
կարող էք:

Բանի: Այդ ձեզ վախեցնում է:

Նօրա: Գուք տարօրինակ կերպով
էք խօսում. չլինի մի բան կայ. . .

Բանի: Այո՛, այն, որին ես պատրաս-
վում էի վաղուց, բայց ես չէի կար-
ծում, որ այդպէս շուտ կըհասնի:

Նօրա: (Բռնելով նորա ձեռքը): Ի՞նչ

է... դօքտօր, դուք այդ ինձ պէտք
է ասէք:

Բանի: (Նստելով վառարանի մօտ):
Իմ գործս վատ է. ինձ էլ ոչ մի կերպ
չի կարելի օգնել:

Նօրա: (Ազատ շունչ է քաշում):
Եւ այդ դուք էք, որի մասին...

Բանի: Էլ ո՞վ պէտք է լինի, ի՞նչ
հարկաւոր է ինքնախաբէութիւն: Ես
իմ հիւանդներից ամենից թշուառն
եմ, տիկին: Այս օրերս ես իմ մարմնիս
ներքին դրութիւնը քննեցի. սնանկ
եմ. չի անցնի չորս շաբաթ, երբ ես
արդէն, կարելի է, պառկած լինիմ
գերեզմանի տակ... միջատների կե-
րակուր:

Նօրա: Փո՛ւ, ի՞նչպէս դուք տգեղ էք
խօսում:

Բանի: Չէ՛ որ ասածս սատանայի
նման տգեղ է: Բայց ամենավատն
այն է, որ այդ տգեղութեանը պէտք
է յաջորդեն ուրիշ շատ տգեղու-

Թիւններ: Պէտք է էլի մի անգամ քննել. երբ վերջացնեմ, այն ժամանակ կ'իմանամ մօտաւորապէս, թէ երբ կը սկսուի քալքայումը . . . Այդ դէպքում ես ձեզ կը յայտնեմ կարճ և պարզ: Գեղմէրը շնորհիւ իւր նուրբ բնաւորութեանը պարզ զգում է զրգուանք դէպի ամեն մի տղեկ բան. . . Ես չեմ կամենում, որ իմ հիւանդ ժամանակս նա դայ ինձ մօտ:

Նօրս: Բայց, դօքտօր. . .

Բանի: Ես չեմ ուզում նորան այնտեղ տեսնել. ոչ մի կերպ. ես դուռը կը կողպեմ. հէնց որ լիապէս համոզուիմ իմ տխուր վախճանի մասին, իսկոյն կ'ուղարկեմ իմ այցետոմսը սև խաչով. . . Եւ այն ժամանակ դուք կ'իմանաք, որ արդէն սկսուել են. . . քայլքայուելու անհաճոյ երևոյթները. . .

Նօրս: Չէ՛, այսօր դուք անտանելի էք. ես շատ կ'ուզէի ձեզ այսօր ուրախ տեսնել. . .

Բանի: Այն էլ, երբ մահը աչքիս առաջն է. . . ուրիշի մեղքի համար պատժուել. ո՛ր է արդարութիւնը. ուրեմն ամեն մի ընտանիքի մէջ թագաւորում է այսպէս թէ այնպէս մի հաստատուն վրէժխնդրութիւն:

Նօրս: (Բռնում է ականջները): Յիմարութիւն. . . Ի սէր Աստուծոյ, մի ուրախ, մի ծիծաղաշարժ բան պատմեցէք.

Բանի: Արշըն ասած, այս բոլոր պատմութիւնը ծիծաղելի է: Իմ խեղճ, անմեղ ողնաշարս պէտք է քաւէ հօրս տեղապահութեան ուրախ օրերի փոխարէն:

Նօրս: (Սեղանի ձախ կողմում): Նա կարծեմ շատ էր սիրում ծնեբակ և սագի երիկամունքներ, այնպէս չէ:

Բանի: Այո՛, այո՛, նոյնպէս և տրուֆէլներ:

Նօրս: Տրուֆէլ և կարծեմ էլի ուտրէներ:

Բանի: Ոստրէներ, ոստրէներ, ի հարկէ.

Նոր: Եւ էլի շամպանիա գինի ու պօրտվէյն: Ափսոս, որ այդ լաւ բաները թողնում են իրանց հետքը մեր անդամների մէջ.

Բանի: Եւ զխաւորն այն է, որ այդ բոլորը ընկնում է այնպիսի ողորմելի անդամի վերայ, որ դոցանից ոչ մի օգուտ չի ստանում:

Նոր: Այո, շատ ցաւալի է:

Բանի: (Նայում է նորա վերայ): Հ՛ր...

Նոր: (Քիչ սպասելով): Ինչո՞ւ էք ժպտում:

Բանի: Ոչ, այդ դուք էք ժպտում:

Նոր: Ոչ, դուք էք, դօքտօր:

Բանի: (Վեր կենալով): Դուք աւելի չարաճճի էք, քան ես կարծում էի:

Նոր: Այսօր ես շատ տրամադիր եմ հանաքներ անելու:

Բանի: Այդ հէնց նկատելի է:

Նոր: (Երկու ձեռքերը դնում է

նորա ուսերին): Քարի դօքտօր. ոչ, մաՀը ձեզ չպէտք է խլէ Բօքերտից և ինձանից:

Բանի: Օ՛ր, այդ ցաւը երկար չի տևի. զնացողներին շուտ են մոռանում:

Նոր: (Վախկոտ կերպով նայում է նորա վերայ): Դուք կարծում էք:

Բանի: Նոր բարեկամներ կը գտնեն և այն ժամանակ...

Նոր: Ո՞ր կը գտնի նոր բարեկամներ:

Բանի: Դուք էլ, Գելմէրն էլ, հէնց որ ես մեռնեմ: Եւ դուք կարծեմ արդէն ունիք... Երէկ ինչո՞ւ համար էր եկել այստեղ տիկ. Լինդէնը:

Նոր: Մ՛հօ, դուք, չլինի՞, նախանձում էք:

Բանի: Այո, նախանձում եմ. այս տան մէջ իմ յաջօրգը կը լինի այդ տիկինն, երեւի...

Նոր: Կամաց, նա այնտեղ է:

Բանի: Այսօր էլ այստեղ է. տեսնում էք:

Նօրս: Նա իմ դերիէս սարքելու համար է այստեղ եկել: Բայց Աստուած իմ, ինչ դատարկ բաներ էք խօսում: (Նայում է բազմոցի վերայ): Գօքտօր, խոհեմ եղէք. դուք վաղը կը տեսնէք, թէ ես ինչպէս կը պարեմ և այն ժամանակ կարող էք երևակայել, որ ես այդ անում եմ միայն ձեզ համար... և ՚ի հարկէ ՚ի սէր Բօքերտի, այդ արդէն ինքն ըստ ինքեան հասկանալի է: (Արկղից հանում է գանազան իրեր): Գօքտօր, նայեցէք այստեղ, ես ձեզ բաներ ցոյց տամ:

Բանի: (Նայում է): Ի՞նչ:

Նօրս: Տեսէք, տեսէք:

Բանի: Մետաքսէ դուրպայ:

Նօրս: Մարմնագոյն, տեսէք, սիրուն չէ. թէև հիմայ այստեղ մուժ է, իսկ վաղը... Ոչ, ոչ, ոչ դուք միայն կարող էք տեսնել ներքի մա-

սը... Բայց ոչինչ, կարող էք տեսնել և վերինը:

Բանի: Հ՛ր...

Նօրս: Ինչո՞ւ դուք այդպէս յուսահատուած նայում էք. կարելի է կարծում էք, որ ինձ սաղ չի դայ:

Բանի: Ի՞նչ հիմք ունիմ դորա մինս դատելու:

Նօրս: (Նայում է նորա վերայ): Փօւ, ամօթ ձեզ, Գուրպաներով խփում է նորա ականջին): Ա՛յ ձեզ դորա համար: (Հաւաքում է):

Բանի: Էլ ի՞նչ սիրուն բան կար, որ ուզում էիք ինձ ցոյց տալ:

Նօրս: Էլ ոչինչ չեմ ցոյց տայ. դուք ձեզ վատ էք պահում: (Նա մըթմըթալով խառնում է իրերը):

Բանի: (Քիչ լուռ թիւնից յետոյ): Երբ ես և դուք մտերմաբար խօսում ենք, մտածում եմ, թէ ես ինչ կը լինէի, եթէ երբէք մտած չլինէի այս տունը:

Նօրս: (Փպտալով): Աճմարի՛տ, ես կարծում եմ, որ դուք մեզ մօտ լաւ էք զգում:

Բանի: (Յած ծայնով, նայելով իրան առաջ): Եւ հիմայ բաժանուէ՛ր այդ ամենից, թողնէ՛ր...

Նօրս: Ա՛յ յիմարութիւն, դուք մեմեգանից չէք բաժանուի:

Բանի: (Այնպէս, ինչպէս յառաջ): Եւ մինչև անգամ շնորհակալութեան մի չնչին նշան չթողնելով: Մի փոքր ժամանակ ձեզ համար մի ինչ որ պակաս կը լինի... կը մնայ մի դատարկ տեղ, որ դուցէ՛ հէնց առաջին պատահողը բռնէ...

Նօրս: Իսկ եթէ ես ձեզ մի բանի մասին խնդրելու լինէի... Բայց ոչ...

Բանի: Ինչի՛ մասին:

Նօրս: Որ դուք ձեր բարեկամութիւնն ապացուցանէք:

Բանի: Աճմարի՛տ:

Նօրս: Ոչ, ես ուզում եմ ասել մի

մեծ ծառայութեան մասին. . .

Բանի: Մի՛թէ յերաւի դուք կրկամենաք դէ՛թ մի անգամ ինձ երջանկացնել:

Նօրս: Ա՛խ, բայց դուք դեռ չգիտէք, թէ ես ի՛նչ եմ ուզում ձեզ խնդրել:

Բանի: Ուրեմն ասացէ՛ք:

Նօրս: Չեմ կարող, դօքտօ՛ր, այդ այնքան շատ է. . . այդ ոչ միայն ծառայութիւն... այլ և խորհուրդ և օգնութիւն է...

Բանի: Աւելի լաւ. չեմ կարող գուշակել, թէ այդ ինչ է. դէ՛հ ասացէ՛ք: Ինձ վերայ վստահութիւն ունի՛ք:

Նօրս: Ուրիշ ոչ մէկին, այնպէս ինչպէս ձեզ, դուք իմ ամենալաւ և հաւատարիմ բարեկամս էք, այդ ես գիտեմ, ուրեմն կ'ասեմ: Այդպէս, դօքտօ՛ր, դուք պէտք է ինձ ազատէք մի հանգամանքից. դուք գի-

տէք, թէ ինձ ինչպէս ջերմ ու քրն-
քուշ սիրում է թօքերտը. նա մի լո-
պէ չի տատանուի լուր կեանքն ինձ
զոհելու համար:

Բահի: (Նորան մօտենալով): Նօրն,
մի թէ կարծում էք, որ միայն նա...

Նօրն: (Սարսափելով): Ի՞նչ:

Բահի... Ուրախութեամբ իմ կեանքս
կըզոհէի ձեզ համար:

Նօրն: (Տխուր): Ա՛յ թէ ինչ:

Բահի: Ես երգուել եմ՝ նախ քան
իմ մեռնելիս այդ մասին ձեզ ասել:
Սորանից լաւ դէպք ես չէի կարող
գտնել. Հիմայ, Նօրն, դուք այդ զի-
տէք. Հիմայ իմացաք և այն, որ ինձ
կարող էք աւելի հաւատ ընծայել,
քան թէ ուրիշ մէկին:

Նօրն: (Վեր է կենում, հանդարտ
և պարզօրէն): Թող տուէք, անցնեմ:

Բահի: (Յետ է քաշվում, բայց մը-
նում է նստած): Նօրն...

Նօրն: (Նախասենեակի դռնից): Հե-

ղինէ, ճրագ բերէք: (Մօտենում է
վառարանին): Ա՛յի, դօքտօր, այդ
վատ արիք:

Բահի: (Վեր կենալով): Որ ես ձեզ
ջերմ սիրում եմ, այդ է վատը:

Նօրն: Ոչ, այլ այն, որ դուք ինձ
այդ ստացիք. մի թէ այդ անհրա-
ժեշտ էր. . .

Բահի: Ի՞նչ էք ուզում ասել, մի թէ
զիտէիք...

Հեղինէ: (Բերում է ճրագը, դնում
է սեղանին և դնում է:)

Բահի: Նօրն... տիկ. Գելմէր... ես
հարցնում եմ ձեզ՝ զիտէիք դուք այդ
մասին:

Նօրն: Ա՛յի, ինչ իմանամ, զիտէի,
թէ չէ, ճշմարիտ, ես չեմ կարող ձեզ
ասել... դօքտօր, ինչ անզոյշ զրտ-
նուեցիք. ինչպէս լաւ էր ամեն ինչ և...

Բահի: Միևնոյն է, Հիմայ դուք զո-
նէ համոզուած էք, որ ես պատրաստ

եմ ձեզ ծառայելու հոգով և մարմն-
նով: Ուրեմն ասացէք:

Նօր: (Նայելով նորա վերայ): Հի-
մայ, երբ. . .

Բանի: Խնդրեմ, ասացէք, այդ ինչ
է արդեօք:

Նօր: Հիմայ ես ձեզ էլ ոչինչ չեմ
կարող ասել:

Բանի: Չէ, կարող էք. դուք չպէտք
է ինձ այդպէս պատժէք. թող տը-
ւէք ինձ ձեզ համար կատարել այն,
ինչ որ հնարաւոր է մարդուն:

Նօր: Գուք հիմայ ոչինչ չէք կա-
րող անել ինձ համար. ինձ օտարի
օգնութիւնը պէտք չէ. դուք կը-
տեսնէք, որ այդ բոլորը երևակայու-
թիւն է: Այո, այո, ՚ի հարկէ, ե-
րևակայութիւն: (Նստում է ճօճաթուռի
վերայ և նայում է նորա վերայ ժրպ-
տալով): Այո, դօքտօր, դուք լաւ բա-
րեկամ էք. ասացէք, խնդրեմ, դուք
չէք ամաչում ճրագի առաջ:

Բանի: Ոչ... Իսկապէս ոչ. կարելի է
դուք կամենում էք, որ ես հեռա-
նամ... լաւ խտեան... . . .

Նօր: Ոչ, ոչ, դուք պէտք է մեզ
մօտ դաք ինչպէս և լաւաջ: Գուք
զիտէք, որ Բօբերտն առանց ձեզ
ապրել չի կարող:

Բանի: Գետեմ... իսկ դ՞ուք:

Նօր: Մ, ես միշտ ուրախանում
եմ, երբ դուք մեզ մօտ էք լինում:

Բանի: Ա՛յ, հէնց այդ էր ինձ շը-
փոթողը. դուք ինձ համար հանելուկ
էք. երբեմն ինձ թվում էր, որ
դուք ինձ հետ նոյն բաւականու-
թեամբ էք ժամանակ անցնում, ինչ-
պէս որ Բօբերտի:

Նօր: Ա՛յ տեսէք ուրեմն. մարդ
մէկին սիրում է, իսկ միւսի հետ շատ
է ուզում ժամանակ անցնել:

Բանի: Այդ մասամբ ուղիղ է:

Նօր: Երբ ես դեռ օրիորդ էի,
հօրս, ՚ի հարկէ, ամեն բանից շատ

էի սիրում. բայց ես առանձին բա-
լականութիւն էի զգում, երբ կարո-
ղանում էի մի կերպ մտնել աղա-
խինների սենեակը. առաջին, որ այն-
տեղ իմ գլխին խրատներ չէին կար-
գում, և երկրորդ, որ ես այնտեղ
անչափ ուրախ էի լինում:

Բան: Օհօ, ահա թէ ինձ ինչի
տեղ էք դրել:

Նոր: (Վեր թռչելով վազում է
նորա մօտ): Սիրելի, թանկագին գօք-
տօր. ես այդ չէի ուզում ասել: Բայց
գուք կարող էք հասկանալ, որ ես
Բօքերտի հետ իսկ և իսկ այնպէս
եմ, ինչպէս որ հօրս հետ. . .

Հեղինէ: (Նախասենեակից ներս է
մտնում): Տիկին: (Նորա ականջին
փափսում է և տալիս է մի այցետոմս):

Նոր: (Նայելով այցետոմսի վերայ):
Ահ: (Գնում է զրպանը):

Բան: Չլինի մի անախորժ բան է:

Նոր: Ոչ ամենևին, այդ միայն...

այդ իմ նոր զգեստս է...

Բան: Ի՞նչպէս, ահա այս չէ՞ ձեր
զգեստը:

Նոր: Այո, բայց այդ ուրիշ է...
ես պատուիրել էի նորը... Միայն Բօ-
քերտը չպէտք է իմանայ այդ մասին:

Բան: Ուրեմն այդ է՞ ձեր մեծ
զաղտնիքը:

Նոր: Այո, այո, այո... Հիմայ զը-
նացէք նորա մօտ. նա երկրորդ սե-
նեակումն է և մի թողէք նորան
ինձ մօտ, մինչև...

Բան: Անհանգիստ մի լինիք, նա
ինձանից չի փախչի... (Գնում է
Գեյմէրի մօտ):

Նոր: (Հեղինէին): Նա խոհանո-
ցում սպասում է:

Հեղինէ: Այո, նա յետևի դռնից ե-
կալ...

Նոր: Միթի գուք նորան չատս-
ցիք, որ ես հիւրեր ունիմ:

Հեղինէ: Ասացի, բայց դուր էր:

Նորս: Նա չի ուղում զնալ:

Հեղինակ: Ոչ, մինչև որ ձեզ հետ չխօսի:

Նորս: Ուրեմն կանչեցէք նորան, միայն կամաց. և ոչ ոքի չասէք, Հեղինակ. այդ սիւրբարիզ է իմ ամուսնու համար:

Հեղինակ: Հասկանում եմ... (Գնում է):

Նորս: Սարսափը մօտենում է: Ոչ, ոչ, ոչ, այդ չի կարող և չպէտք է պատահի: (Նա մօտենում է զրասենեակին և դուռը փակում է: Հեղինակն նախասենեակի դուռը բաց է անում, ներս թողնելով Գիւնտէրին և նորից դուռը ծածկում է: Գիւնտէր ճանապարհորդի մուշտակով է, բարձր կօշիկներով և մորթի գլխարկով):

ՏԵՍԱՐԱՆ Ը.

Նորս, Գիւնտէր:

Նորս: (Գիմաւորում է նորան): Կամաց խօսեցէք, ամուսինս տանն է:

Գիւնտէր: Ի՛նչ անենք. թող...

Նորս: Ի՞նչ էք կամենում ինձանից:

Գիւնտէր: Դուք գիտէք, որ ինձ արձակել են:

Նորս: Ըս չկարողացայ դորա առաջըն առնել, պ. Գիւնտէր: Գործը հասցրի ծալրայեղութեան, մաքառելով ձեզ համար... բայց անօգուտ:

Գիւնտէր: Միթէ ձեր ամուսինը ձեզ այդչափ քիչ է սիրում. նա գիտէ, որ դուք իմ իշխանութեան տակն էք և էլի համարձակվում է. . .

Նորս: Միթէ կարծում էք, որ ես նորան ասել եմ:

Գիւնտէր: Ի՞նչ էք ասում, ես այդ չէի կարծում: Իմ ազնիւ թօրերտ

Կելմէրը քաջութիւն չէր ունենայ...

Նօրս: Պ. Կիւնտէր, ես պահանջում եմ յարգանքով խօսել իմ ամուսնուս մասին:

Կիւն.: Ի հարկէ, նա արժանի է յարգանքի: Քայց եթէ տիկինն այդպէս ուշադրութեամբ ծածկում է ամեն բան, ուրեմն ես իրաւունք ունիմ ենթագրելու, որ դուք հիմալ աւելի լաւ գիտէք քան երէկ, թէ ինչ յանցանք էք գործել:

Նօրս: Աւելի քան թէ դուք կարողացաք ինձ բացատրել:

Կիւն.: Անշուշտ այնպիսի վատ իրաւաբան, որպիսին ես եմ.

Նօրս: Ի՞նչ է ձեր ուղածը:

Կիւն.: Միայն իմանալ, թէ ինչպէս էք դուք ձեզ զգում, տիկին: Ես ամբողջ օրը մտածում էի ձեր մասին: Իանձապահ, մի հասարակ փաստաբան, մէկ խօսքով այնպիսի

մարդ, որպիսին ես եմ, գիտէք, որ նոյնպէս ունի սիրտ:

Նօրս: Ուրեմն այդ պատգուցէք. մտածեցէք իմ փոքրիկ երեխաներիս մասին:

Կիւն.: Իսկ ձեր ամուսինը մտածեց իմ ինններև մասին... Քայց այդ թողնենք. ես միայն ուզեցի ձեզ ասել, որ շատ չմտածէք այդ գործի մասին. ես դեռ մտադիր չեմ գատ բանալու:

Նօրս: Այնպէս չէ. ես այդպէս էլ կարծում էի:

Կիւն.: Ամեն ինչ կարելի է խաղաղութեամբ վերջացնել. հարկաւոր չէ տարածել. այդ թո՛ղ մեր երեքի մէջ մնայ:

Նօրս: Բօրերտն այդ մասին երբէք չպէտք է իմանայ:

Կիւն.: Ի՞նչպէս, դուք այդ թույլ չէք տալիս. գուցէ դուք կը վճարէք մնացածը:

Նօրս: Ոչ, իսկոյն չեմ կարող:

Գիւն.: Կամ գուցէ այս օրերս միջոց դտաք փող ճարելու:

Նօրս: Ոչ մի միջոց, որով կարողանալի օգտուել:

Գիւն.: Այդ անօգուտ էլ կը լինէր, եթէ դուք Հիմայ բոլորն էլ վճարէիք, դարձեալ ձեր մուրհակը յետ չէիք ստանայ:

Նօրս: Ի՞նչ պէտք է անէք մուրհակը:

Գիւն.: Կը պահեմ ինձ մօտ... Ձեռիցս բաց չեմ թողնի. ոչ ոք չի կամանայ այդ մասին: Իսկ եթէ դուք պատրաստուում էք մի յուսահատական քայլ անելու...

Նօրս: Պատրաստուում եմ:

Գիւն.: Զորօրինակ, եթէ դուք մըտադիր էք թողնելու ձեր ամուսնուն և երեխաներին:

Նօրս: Այո, մտադիր եմ:

Գիւն.: Կամ թէ մտածում էք դո-

րանից աւելի վատ բան անելու...

Նօրս: Դուք ի՞նչ գիտէք:

Գիւն.: Այն ժամանակ թողէք այդ ամենը:

Նօրս: Դուք ի՞նչ գիտէք, որ ես հէնց այդ եմ մտածել:

Գիւն.: Մեծամասնութիւնը սկզբում պատրաստուում է այդպէս անելու. ես էլ էի մտածում, բայց քաջութիւն չունեցայ...

Նօրս: (Նուր կերպով): Ես էլ քաջութիւն չունիմ...

Գիւն.: (Աւելի հանդարտ): Այո, այնպէս չէ, որ դուք ևս քաջութիւն չունիք...

Նօրս: Ոչ... ոչ...

Գիւն.: Պէտք է ասած, այդ մեծ լիմարութիւն կը լինէր. միայն թէ շուտով անցնէր ընտանեկան առաջին փոթորիկը... Գրպանումս է ձեր ամուսնուն զրաժս նամակը:

Նօրս: Եւ այնտեղ ամեն ինչ բա-

ցատրուած է:

Գիւն: Որքան կարելի է քաղաքավարի կերպով:

Նօր: (Ղտապ): Նա այդ նամակը չպէտք է ստանայ. պատուեցէք, ես փող կը գտնեմ:

Գիւն: Ներեցէք, տիկին, ես կարծեմ ձեզ ասացի...

Նօր: Ես այն փողերի մասին չեմ ասում, որ ձեզ պարտ եմ. ասացէք ինձ, թէ ինչ գումար էք պահանջում իմ ամուսնուց, ես կը գտնեմ ձեզ համար:

Գիւն: Ես ձեր ամուսնուց փող չեմ պահանջում:

Նօր: Ուրեմն ինչ:

Գիւն: Իսկոյն կը բացատրեմ, տիկին. ես ուզում եմ բարձրանալ, ես ուզում եմ իմ պատիւս վերականգնել և ձեր ամուսինը պէտք է ինձ օգնէ: Տարի ու կէս է, ես ոչ մի անաղնիւ գործ չեմ արել, ես այդ ժամանակա-

միջոցում մրցում էի անտանելի կարիքի հետ, բայց ես մխիթարվում էի նորանով, որ քիչ-քիչ կը բարձրանամ: Հիմալ ինձ դուրս են արել և ես չեմ բաւականանայ միայն նորանով, որ ինձ նորից ընդունեն: Ես ուզում բարձր դիրք ստանալ, կրկնում եմ ձեզ... ես ուզում եմ բանքում ծառայել աւելի բարձր պաշտօնով, թո՛ղ ձեր ամուսինն ստեղծէ ինձ համար այդ տեղը...

Նօր: Երբէք, նա այդ չի անի:

Գիւն: Կ'անէ, ես նորան ճանաչում եմ. նա չի համարձակուի անգամ ձայն հանելու. իսկ երբ ես նորա հետ ծառայեմ, այն ժամանակ կը տեսնէք. չի անցնի մի տարի և ես կը լինիմ դիրեքտօրի աջ բաղուկը. բանքը կը կառավարէ ոչ թէ Բօբերտ Գելմէրը, այլ Փրիզրիկս Գիւնտէրը:

Նորս: Երբէք չէք հասնի ձեր նպատակին:

Գիւն.: Դուք կարելի է մտածեցիք. . .

Նորս: Այո, հիմայ զգում եմ իմ մէջ քաջութիւն:

Գիւն.: Օ՛, դուք ինձ չէք վախեցնի. այդպիսի քնքուշ, երես առած տիկիներ, ինչպէս դուք էք. . .

Նորս: Ա՛յ, դուք կը տեսնէք, կը տեսնէք:

Գիւն.: Ինչ, դուցէ դուք ճանապարհ բանալով սառցի տակ... պրդտոր, սառը ջրի մէջ, յետոյ գարնանն ափը դուրս գաք այլանդակուած, կերպարանափոխուած, առանց մազերի. . .

Նորս: Դուք դորանով ինձ չէք վախեցնի:

Գիւն.: Դուք էլ ինձ: Այդ լինելու բան չէ, տիկին, և բացի դորանից,

այդ անօգուտ է. նամակը դարձեալ իմ գրպանումն է:

Նորս: Եւ այն ժամանակ, երբ ես արդէն. . . :

Գիւն.: Դուք մտանում էք, որ իմ ձեռք է ձեր բարի համբար:

Նորս: (Լուռ նայում է նորա վերայ):

Գիւն.: Հիմայ դուք նախապատրաստուած էք. յիմարութիւններ չանէք: Հէնց որ Գելմէրը նամակը ստանայ, ինձ պէտք է պատասխանէ և լիշեցէք, որ այս ճանապարհի վերայ ինձ ձեր ամասինը ձգեց. այդ ես նորան երբէք չեմ ների: Պատիւ ունիմ որջունելու, տիկին: (Գնում է):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Թ.

Նորա, յետոյ տ. Կինդէն:

Նորս: (Վազում, գուռը քիչ բաց է անում և ականջ է դնում): Նա գը-

նում է, նամակը արկղի մէջ չի դր-
ցում: Ոչ, ոչ, այդ անկարելի է:
(Դուռը հետզհետէ անելի է բաց ա-
նում): Այդ ինչ, նա կանգնեց, սան-
դուղքներից ցած չի իջնում. արդեօք
միտքը փոխեց. միթէ նա ուզում
է. . . (Արկղի մէջ է ընկնում նա-
մակը, յետոյ լսելի են Գիւնտէրի հե-
ռացող քայլերը սանդուղքների վերայ):

Նոր: (Խուլ կերպով ճշում, վա-
ղում է սենեակի միջով դէպի բաղ-
մոցի մօտի սեղանը. կարճ լուռ թիւն):
Նամակը արկղի մէջ է: (Վամաց և
վախկոտ շտապում է դէպի դուռը):
Ա՛յ, նամակը այնտեղ է: Բօբերտ,
Բօբերտ, մենք հիմայ կորած ենք:

Տ. Լինդէն: (Նօրայի դէրիէն ձե-
ռին, ձախ դռնից): Հիմայ ամեն
բան կարգին է. . . չես փորձի. . .

Նոր: (Վամաց և խուպոտ ձայնով):
Քրիստինն, էկ այստեղ:

Տ. Լինդէն: (Դէրիէն գցում է բաղ-

մոցի վերայ): Քեզ ինչ է պատահել.
դու շատ այլապէս ես:

Նոր: Ե՛կ այստեղ, տեսնում էս
նամակը. այ, այն արկղի մէջ, նայէ
վանդակից:

Տ. Լինդէն: Այն, տեսնում եմ:

Նոր: Այդ նամակը Գիւնտէրից է. . .

Տ. Լինդէն: Նօրա. . . Գիւնտէրն է
քեզ փող տուել:

Նոր: Այն, և հիմայ Բօբերտը ա-
մեն բան կ'իմանայ:

Տ. Լինդէն: Հաւատն ինձ, Նօրն,
այդ երկուսիդ համար էլ ամենա-
լաւն է:

Նոր: Դու դեռ բոլորը չգիտես. ես
կեղծ ստորագրութիւն եմ արել:

Տ. Լինդէն: Ո՛հ, Տէր Աստուած. . .

Նոր: Իլի մի բան, Քրիստինն,
դու պէտք է իմ վկան լինիս:

Տ. Լինդէն: Ի՞նչպէս թէ վկայ, ինչ
բանի մէջ:

Նոր: Եթէ ես խելագարուիմ, իսկ

այդ հեշտութեամբ կարող էս պատաս-
հել:

Տ. Լեւրէն: Նօբն:

Նօբն: Կամ մի ուրիշ բան կը պա-
տահի... այն որ, ես էլ այստեղ չեմ
լինի.

Տ. Լեւրէն: Նօբն, Նօբն, դու ին-
քըղ չգիտես թէ ինչ ես խօսում:

Նօբն: Եթէ այն ժամանակ մէկը
կամենայ ամեն ինչ իւր վերայ առ-
նել... այսինքն բոլոր մեղքը...

Տ. Լեւրէն: Լաւ, լաւ, բայց դու
ինչպէս կարող էիր մտածել.

Նօբն: Այն ժամանակ դու պէտք է
վկայես, որ այդ ուղիղ չէ, Քրիստի-
նն: Ես լաւ գիտեմ, թէ ինչ եմ խօ-
սում խելքս դեռ տեղն է. և յայտն
եմ քեզ, որ ոչ ոք այդ մասին չգի-
տէր և միայն ես եմ այդ ամենն ա-
րել: Չմոռանաս այդ:

Տ. Լեւրէն: Չեմ մոռանայ, բայց
ես ոչինչ չեմ հասկանում:

Նօբն: Դու ինչ կարող ես հասկա-
նալ... և յետոյ հրաշք վը լինի...

Տ. Լեւրէն: Հրաշք:

Նօբն: Այո, հրաշք, բայց այդ այն-
պէս սարսափելի է, Քրիստինն, այդ
երբէք, երբէք չպէտք պատահի:

Տ. Լեւրէն: Ես իսկոյն կ'երթամ Գլու-
տէրի մօտ և կը խօսեմ նորա հետ:

Նօբն: Մի դնար, նա քեզ կ'ան-
պատուէ:

Տ. Լեւրէն: Կար ժամանակ, որ նա
իմ սիրոյս համար կ'անէր ամեն բան:

Նօբն: Նա:

Տ. Լեւրէն: Նա սրտեղ է ապրում:

Նօբն: Ես ինչ գիտեմ. Հա: (Փընտ-
ռում է գրպանում նորա այցետոմսը):
ԱՀա, նորա այցետոմսը... բայց նա-
մակը, նամակը...

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Փ.

Առաջինները, Գեղմէր զոան յետեւից՝

Գեղմէր: (Գուռը բախում է): Նօրն:

Նօրն: (Ալախից ճչում է): Ի՞նչ կայ,
ինչ ես ուզում:

Գեղմէր: Լաւ, մի վախենար, մենք
չենք մտնի, դու դուռը կողպել ես.
Երևի դէրիէդ փորձում ես:

Նօրն: Այո՛, այո՛... Ինչպէս ինձ սա-
զում է, Բօբէրտ:

Տ. Լինդէն: (Այցետոմսը կարդալով):
Նա այստեղ մօտ է ապրում:

Նօրն: Բայց հիմա՛յ ամեն ինչ ա-
նօգուտ է. մենք կորած ենք. . .
Նամակը արդէն արկղումն է:

Տ. Լինդէն: Եւ բանալիքը ամուս-
նուդ մօտ է:

Նօրն: Միշտ:

Տ. Լինդէն: Գիւնտէրը պէտք է

Նամակը յետ պահանջէ, քանի դեռ
չէ կարդացուել: Թո՛ղ նա մի պատ-
ճառ գտնի:

Նօրն: Բայց յանկարծ Բօբէրտը...

Տ. Լինդէն: Աշխատիր նորան խան-
դարել... Հիմա գնա՛ նորա մօտ. ես
կը վերադառնամ, որքան կարելի է,
շուտ: (Ձտապով գնում է):

Նօրն: (Մօտենում է գրասենեա-
կին, բաց է անում դուռը և գլուխը
ներս է կոխում): Բօբէրտ:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն ՓԱ.

Նօրն, Գեղմէր, յետոյ Բանկ, աւելի ուշ

տիկ. Լինդէն եւ Հեյլին:

Գեղմէր: (Յետևի սենեակից): Ի՞նչ
է. հիմա՛յ կարելի է: Գնանք տես-
նէնք, Բանկ: (Դուռն մէջ): Բայց
այս ի՞նչ:

Նօրն: Ի՞նչ, սիրելի Բօբէրտ:

Գեւոր: Հապա, Բանիր նկարագրում էր մի վառաւոր տեսարան:

Բանջ: Ես այդպէս հասկացաւ երեւի սխալուել եմ:

Նօրս: Այ, մինչև վաղը երեկոյ ես չեմ թողնի, որ դուք հիանաք ինձանով:

Գեւոր: Բայց, սիրելի Նօրս, դու սպրդես ես. կարելի է պարը շնոտ ես կրկնել:

Նօրս: Այ, ես դեռ չեմ կրկնել:

Գեւոր: Բայց այդ անհրաժեշտ է...

Նօրս: Ի հարկէ անհրաժեշտ է, Բօրերտ, բայց առանց քեզ չեմ կարող. բոլորը մոռացել եմ:

Գեւոր: Աջինչ, մենք շուտով կը մտաբերենք:

Նօրս: Բօրերտ, ինդրում եմ ինձ օգնես, կը խօստանան. ես այնպէս վախենում եմ. մեծ հասարակութիւն է... Դու այս երեկոյ պէտք է միանգամայն ինձ նուիրուիս. չպէտք է

պարապես և գրիչը ձեռք չառնես: Հն, այնպէս չէ, սիրելի Բօրերտ:

Գեւոր: Խոստանում եմ: Այո, երեկոն քեզ կը նուիրեմ, ինչդձ, քնքուշ արարած: Միայն ես լառաջ... (Գրում է գէպի գրսի դուռը):

Նօրս: Ո՛ւր ես գնում:

Գեւոր: Տեսնեմ, նամակ կհայ:

Նօրս: Այ, սէ, Բօրերտ, մի գնար:

Գեւոր: Ինչո՛ւ:

Նօրս: Խնդրում եմ քեզ. միւլեսոյն է, այնտեղ նամակ չկայ:

Գեւոր: Թող միայն նայեմ: (Ուզում է գնալ):

Նօրս: (Գաշնամուրի վերայ ածում է տարանտէլայի առաջին ձայները):

Գեւոր: (Դռանը մօտենալով): Օ՛հօ:

Նօրս: Ես վաղը չեմ կարող պարել, եթէ քեզ հետ կրկնութիւն չանեմ:

Գեւոր: (Նորան մօտենալով): Մի-թէ դու այդքան վախենում ես, իմ փոքրիկ Նօրս:

Նօրո: Այն, սաստիկ վախենում եմ:
Արի հիմայ կրկնենք. մինչև ճաշ
մենք դեռ ժամանակ ունինք: Նըս-
տիք այստեղ, սիրելի Բօբերտ, և ա-
ծան, ուղղի ու սովորեցրու ինձ, եթէ
ես. . .

Գելֆեր: Ուրախութեամբ, ուրախու-
թեամբ, եթէ դու այդքան ուզում
ես: (Նա նստում է դաշնամուրի ա-
ռաջ):

Նօրո: (Հանում է արկղից տամ-
բուրինը և հրկար գոյնզգոյն շալ,
որ շտապ գցում է իրան վրէն, յե-
տոյ մի ոստիւնով բեմի առջևի կողմն
է գալիս): Գէ, ածան. . . ես սկսում
եմ: (Գելմէրն ածում է, Նօրան պա-
րում է. Բանկ կանգնում է դաշնա-
մուրի մօտ, Գելմէրի յետևը և նա-
յում է):

Գելֆեր: (Ածելով): Կամաց, հան-
դարտ:

Նօրո: Ես ուրիշ կերպ չեմ կարող:

Գելֆեր: Նօրան, ոչ այդպէս արագ:

Նօրո: Հէնց այդպէս պէտք է:

Գելֆեր: (Էլ չի ածում): Ոչ, ոչ, այդ-
պէս չի լինի. . .

Նօրո: (Ծրվածազում և շփում է տամ-
բուրինը) Տեսնո՞ր, որ ես քեզ ասում էի:

Բանկ: Թո՞ղ ես ածեմ:

Գելֆեր: (Վեր է կենում): Գէ, նըս-
տիք. այսպէս նօրան աւելի լաւ կա-
րող եմ ուղղել: (Բանկ նստում է դաշ-
նամուրի առաջ և ածում է. Նօրա
պարում է հետզհետէ աւելի վայրե-
նաբար. Գելմէր կանգնում է վառա-
րանի մօտ և շուտ շուտ նրան նը-
կատողութիւն է անում. Նօրան կար-
ծես չի լսում, նօրա մաղերը բացվում
են և ծածանվում են ուտերի վերայ.
Նա դորա վերայ ուշադրութիւն չի
դարձնում և շարունակում է պարել.
Ներս է մտնում տիկ. Լինդէն):

Տ. Լինդէն: (Դուան մէջ, կարծես
քարացած կանգնում է): Ա՛խ. . .

Նորս: (Պարելով): Այստեղ մենք ուրախ ենք, Քրիստոնէան:

Ինչէր: Քայց, սիրելի Նորան, դու չափից դուրս ես սղևորվում:

Նորս: Յիրաւի...

Ինչէր: Բանկ, զբաւական է, աս ողղակի խելագարութիւն է... բաւական է, ատում եմ քեզ: (Բանկը էլ չի ածում և Նորան դադարում է պարել:)

Ինչէր: (Մօտենալով Նորային): Ես չէի կարող հաւատալ, որ դու բոլորը մտայնել ես:

Նորս: (Վայր է դցում տամբուրինը): Հիմա՛յ դու ինքդ տեսնում ես:

Ինչէր: Յիրաւի՛ դու պէտք է լուրջ կերպով պարտպես:

Նորս: Ա՛յ, հիմա՛յ դու ինքդ տեսնում ես, որ այդ անհրաժեշտ է. դու պէտք է մինչև վերջին րոպէն ինձ օգնես. համաձայն ես, Բօրերոտ:

Ինչէր: Այդ ինքն ըստ ինքեան հասկանալի է:

Նորս: Դու պէտք է այսօր էլ, վաղն էլ միայն մտածես իմ մասին. դու նամակները չպէտք է բանաս... և մինչև անգամ նամակի արկղին ձեռնչտաս:

Ինչէր: Հո՛, դու դեռ էլի վախեցնում ես այն մարդուց...

Նորս: Այո՛, այո՛, և այդ է:

Ինչէր: Նորան, ես այդ ամենից ենթադրում եմ, որ նորանից այնտեղ արդէն նամակ կայ:

Նորս: Չգիտեմ, դուցէ. Քայց դու հիմա՛յ ոչ մի ուրիշ բանի մասին չպէտք է մտածես... Մեր մէջ ոչ մի անբաւականութիւն չպէտք է ծագի, մինչև ոչ չվերջանայ պարահանդէսը:

Ինչէր: (Կամաց, Ինժե՛րին): Դու նորան չպէտք է հակադակիս:

Ինչէր: (Մի ձեռքով գրուելով Նորային): Թող իմ սիրելի, երեխայիս ասածը լինի. բայց վաղը գիշեր, երբ

դու պարից կշտանաս...

Նօրս: Այն ժամանակ զու ազատ ես:

Հէշիէ: (Աջ դռնից): Տիկին, ճաշը պատրաստ է:

Նօրս: Հեղինէ, բերէք և շամպանիա գինի:

Հէշիէ: Զատ բարի: (Գնում է):

Գէշիէ: Օհօ, իսկ խնջոյք է:

Նօրս: Այո, խնջոյք շամպանիա գինով մինչև լուսադէմ: (Վանջում է): Եւ կանֆէտ, Հեղինէ, սովորականից աւելի: Թող այս անգամ այդ էլ լինի:

Գէշիէ: (Նորա ձեռքերը բռնելով): Լաւ, լաւ, առանց վայրենութեան, դարձեալ եղիր այնպէս, ինչպէս որ դու ես. իմ սիրելի, Հիանալի արտուտիկս:

Նօրս: Այո, ես այդպէս էլ կը լինիմ: Հիմայ գնան, և դուք, դօքտօր: Քրիտտինան, օգնէ ինձ, որ մազերս շինեմ:

Բաշ: (Գնալով, կամաց, Գեմէրին): Դու ոչինչ չես սպասում, այսինքն ուզում եմ ասել. . .

Գէշիէ: Աստուած ազատէ, սիրելի խանկ, այդ միայն այն երեխայական վախն է, որի մասին ես քեզ պատմեցի: (Երկուսն էլ գնում են աջ դռնից:)

Նօրս: Ի՞նչ եղաւ:

Տ. Լիւրէն: Գնացել է քողոսքից դուրս:

Նօրս: Ես արդէն այդ գուշակեցի, երբ դու ներս մտար:

Տ. Լիւրէն: Նա կրվելու պատճառով միայն վաղը երեկոյ. ես նորան տոմսակ թողի:

Նօրս: Այդ աւելորդ էր. դու չէպէտք է խանգարես. . . Ախ, ի՞նչ լաւ է. երբ մարդ սպասում է, որ ահան, ահան մի հրաշք կը պատահի:

Տ. Լիւրէն: Դու այդ ի՞նչ ես սպասում:

Նորա: Այն, դու այդ չես հասկա-
նում. զնա նոցա մօտ, ես էլ լիակոյն
կրգամ: (Տ. Լինդէն գնում է սեղա-
նատուն:)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Փ Յ:

Նորա, յետոյ Գիւմէր:

Նորա: (Մի քանի բոպէ կանդնում
է, կարծես միտքը ժողովելով, չետոյ
նայում է ժամացոյցին): Հինգն է.
մնում է եօթն ժամ կէս գիշերին,
յետոյ քսանւչորս՝ մինչև հետևեալ
կէս գիշերին: Այն ժամանակ տա-
րանտելլան վերջացած կըլինի: Քսան-
ուչորս և եօթն, ուրեմն դեռ էլի
երեսունևմէկ ժամ կեանք ունիմ:

Գիւմէր: (Աջ կողմի գունից): Ուր է
իմ փոքրիկ արտուտիկս:

Նորա: (Չտապում է նորա մօտ
գրկորաց): Ահա նա:

Ա Ր Ա Ր Ս Ի Ա Մ Ե Ր Ր Ո Ր Գ

Նոյն սենեակը:

Բազմոցի առջի սեղանը սենեակի
մէջ տեղում. նորա շուրջը բազկաթոռներ.
սեղանի վերայ վառվում է լամպը. նա-
խասենեակի դուռը բաց է: Վերևի չար-
կից լսվում է պարահանդէսի երաժշտու-
թիւնը:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա:

Տիկ. Լինդէն սեղանի մօտ անուշա-
գիւր կերպով թերթում է գիրքը. փորձում
է կարդալ, բայց չէ կարող կենդրոնանալ.
անդադար ականջ է դնում և նայում է
գրսի դռանը:

Յետոյ Գիւմէր:

Տ. Լինդէր: (Նայում է իւր ժամա-
ցոյցին): Նա դեռ չկայ, արդէն ժա-
մանակ է. միայն թէ նա... (Ականջ

է գնում): Ա՛հ, ահա և նա: (Նա գնում է նախասենեակ և դուռը բաց է անում. սանդուղքներից սուքի ձայն է զայլիս): Ներս մտէք, այստեղ ոչ ոք չկայ:

Գիւնէր: Ես տանը ձեզանից մի տոմսակ գտայ, այդ ինչ է նշանակում:

Տ. Լիւնէր: Ինձ անհրաժեշտ է ձեզ հետ խօսել,

Գիւնէր: Ա՛յ թէ ինչ, և անպատճառ արտեղ:

Տ. Լիւնէր: Իմ բնակարանումս անհր- նարին 1. իմ սենեակս միայն մի դուռ ունի. ներս մտէք, մենք բոլորովին մենակ ենք. ազատիներ քնած է, իսկ Գիլմէրենը վերևը պարահան- րէս են զնայցել:

Գիւնէր: (Ներս մտնելով): Տեսէք, ինչպէս, միթէ նոքա այսօր պարում են:

Տ. Լիւնէր: Եւ ինչո՞ւ չպէտք է պարեն:

Գիւնէր: Ի հարկէ, ինչո՞ւ չպէտք է պարեն:

Տ. Լիւնէր: Դէ, խօսե՛ք, պ. Գիւնտէր:

Գիւնէր: Միթէ էլի բան մնացել է միմեանց ասելու:

Տ. Լիւնէր: Մինչև անգամ շատ:

Գիւնէր: Ուղիղն ասած՝ ես այդ չէի սպասում:

Տ. Լիւնէր: Որովհետև դուք ինձ եր- րէք չէք հասկացել, ինչպէս հարկն է:

Գիւնէր: Այդ ինչ չհասկանալու բան է. լոյսի նման պարզ է, անօրոտ կի- նը մերժում է տղամարդուն, երբ նո- րան աւելի ձեռնառու ընկեր է պա- տահում:

Տ. Լիւնէր: Միթէ դուք ինձ համա- րում էք այդքան անօրոտ. դուք կարծում էք, հեշտ էր ինձ. բաժա- նուել ձեզանից:

Գիւնէր: Հապս ինչ, միթէ հեշտ չէր:

Տ. Լիւնէր: Գիւնտէր, միթէ դուք այդ կարծում էք:

Գիւն.: Ուրեմն ինչո՞ւ այն ժամանակ դուք ինձ այն տեսակ նամակ գրեցիք:

Տ. Լիւրէն.: Ես ուրիշ կերպ չէի կարող անել, քանի որ ես ձեզ պիտի մերժէի, իմ պարտքս համարեցի ձեր սրտից հանել բոլոր դէպքի ինձ ունեցած զգացմունքները:

Գիւն.: (Սեղմելով իւր ձեռքերը): Հնա, այն ինչպէս և այդ... այդ բոլորը փողի համար:

Տ. Լիւրէն.: Չմոռանաք, որ իմ անօգնական մօրս և երկու փոքրիկ եղբայրներիս հոգսը ես էի քաշում. մենք չէինք կարող ձեզ սպասել, Գիւնտէր. դուք այն ժամանակ դեռ ոչ մի ազատիչ չունէիք ձեր առաջ:

Գիւն.: Կարելի է, բայց դուք իրաւունք չունէիք ինձ մերժելու մի ուրիշ մարդու համար:

Տ. Լիւրէն.: Ես ինքս էլ չգիտեմ... յետոյ շատ անգամ այս հարցը տալիս

էի, թէ արդեօք ունէի իրաւունք:

Գիւն.: (Կամայ): Երբ ես ձեզ կորցրի, այն ժամանակ ինձ թվում էր, թէ երկիրը շարժվում է օտքերիս տակ: Նայեցէք ինձ վերայ. հիմա ես մի անպաշտպան մարդ եմ, կատարելապէս ճախարղութեան մէջ ընկած:

Տ. Լիւն.: Իսկ օգնութիւնը կարող է մօտ լինել.

Գիւն.: Նա մօտ էր, բայց դուք եկաք և իմ ճանապարհս փակեցիք:

Տ. Լիւն.: Առանց իմ գիտութեան, Գիւնտէր. միայն այսօր առանձնաբար մայցայ, որ ես ձեր պաշտօնն եմ ստանալու:

Գիւն.: Քանի որ դուք էք ասում այդ, ես ձեզ հաւատում եմ. բայց դուք հրաժարվում էք այդտեղից, իմանալով ամեն ինչ:

Տ. Լիւն.: Ո՛հ, որովհետեւ այդ ոչ մի օգուտ չի բերիլ ձեզ:

Գիւն.: Ախ, օգնւտ, օգնւտ... Ես
դարձեալ կը հրաժարուէի:

Տ. Լէն.: Կեանքը և ծանր ու
դառն կարիքը ինձ սովորեցրին խո-
հեմ վարուել:

Գիւն.: Իսկ ինձ կեանքը սովորեցրել
է խօսքերի չհաւատալ:

Տ. Լէն.: Այդ դէպքում նա ձեզ
բարութեան է սովորեցրել. բայց չէ՞
որ դուք գործերին հաւատում էք:

Գիւն.: Ի՞նչ էք ուզում ասել:

Տ. Լէն.: Դուք ասացիք, որ ան-
պաշտպանէք և ձախորդութեան մէջ
ընկած:

Գիւն.: Այո, և ես հիմք ունիմ այդ-
պէս ասելու:

Տ. Լէն.: Ես էլ եմ հանդիպել ձա-
խորդութեան:

Գիւն.: Դուք ինքներդ այդ ուղե-
ցիք:

Լէն.: Ես ուրիշ ելք չունէի:

Գիւն.: Վերջը:

Տ. Լէն.: Գիւնտէր, ինչ կը լինի,
եթէ երկու ձախորդութեան մէջ ըն-
կած մարդիկ միմեանց ձեռք մեկնեն:

Գիւն.: Ի՞նչ էք ասում:

Տ. Լէն.: Երկուսով աւելի հեշտ է
ազատուել նաևի մի բեկորի վերայ,
քան թէ լողալ առանձին առանձին:

Գիւն.: Քրիստինն:

Տ. Լէն.: Ի՞նչ էք կարծում. ին-
չո՞ւ ես այստեղ եկայի:

Գիւն.: Միթէ դուք ինձ մտաբե-
րեցիք:

Տ. Լէն.: Ինձ հարկաւոր է պա-
րազմունք, որ կարողանամ այս
կեանքին դիմանալ: Երիտասարդ հա-
սակիցս ես աշխատում էի և այդ իմ
միակ ու ամենալաւ սերահուլթիւնս
էր. իսկ հիմայ ես այնպէս միայնակ
եմ. չորս կողմս սարսափելի դատար-
կութիւն է և ես չունիմ ոչ ոք.
միայն ինձ համար աշխատելը շատ
անմխիթարակն է: Գիւնտէր, տուէք

ինձ մարդ, որի համար կարողանամ աշխատել:

Գիշ.: Ես այդ բաներին չեմ հաւատում, այդ ոչ այլ ինչ է, եթէ ոչ կանացի կեղծ մեծահոգուիւն, որ ձգտում է ինքնագոհութեան:

Տ. Լիւ.: Դուք երբ էք նկատել, որ իմ զգացմունքներս կեղծ լինին:

Գիշ.: Բայց միթէ դուք լիրաւի... ասացէք... ձեզ լայտնի է իմ անցեալը:

Տ. Լիւ.: Յայտնի է:

Գիշ.: Բայց գիտէ՞ք թէ այստեղ ինձ ում տեղն են դնում:

Տ. Լիւ.: Մի քիչ յառաջ չափնարկեցիք, որ եթէ ինձ հետ ապրէիք, ուրիշ մարդ կը լինէիք:

Գիշ.: Ես մինչև անգամ համոզուած եմ:

Տ. Լիւ.: Միթէ այդ չի կարող հիմայ էլ լինել:

Գիշ.: Քրիստինն... և այդ դուք

ինձ ասում էք արդեօք լաւ մտածած: Այո, այդ այդպէս է ես տեսնում եմ ձեր աչքերից. միթէ այդչափ քաջութիւն ունիք...

Տ. Լիւ.: Ինձ պէտք է մի մարդ, որի համար ես ապրիմ, իսկ ձեր երեխաներին մայր է հարկաւոր. մենք շատ պէտք ենք միմեանց, Գիւնտէր, ես հաւատում եմ ձեր հոգու ազնուութեանը. ես ձեզ հետ պատրաստ եմ ամեն բանի:

Գիշ.: (Բռնելով նորա ձեռքերը): Չնորհակալ եմ, շնորհակալ ձեզանից, Քրիստինն. . . Հիմայ ես կարող եմ նորից բարձրանալ ուրիշների աչքում. բայց ես բոլորովին մոռացայ...

Տ. Լիւ.: (Ականջ է դնում): Կամաց, տարանտելլա, գնացէք, գնացէք:

Գիշ.: Ինչո՞ւ, ինչ կայ:

Տ. Լիւ.: Լսում էք, ինչպէս վերևը պարում են. երբ այդ վերջանայ, նոքա կը վերադառնան:

Գիւն.: Այն, այն, ես կ'երթամ:
արդէն ամեն ինչ գուր է. դուք,
երևի, դեռ չզիտէք, թէ ես ինչ
եմ մտածել Գեղմէրի դէմ:

Տ. Լէն.: Ձէ, Գիւնտէր, ես բոլորը
զիտեմ:

Գիւն.: Եւ չնայելով դորան, դուք
այնքան քաջութիւն ունիք, որ. . .

Տ. Լէն.: Ես լաւ եմ հասկանում, թէ
յուսահատութիւնը ուր է հասցնում
այնպիսի մարդուն, ինչպէս որ դուք էք:

Գիւն.: Օ՛, եթէ ես կարողանայի
դադարեցնել այն, ինչ որ արել եմ:

Տ. Լէն.: Դուք այդ կարող էք,
ձեր նամակը դեռ արկղումն է:

Գիւն.: Ուղիղ էք ասում:

Տ. Լէն.: Այն, բայց. . .

Գիւն.: (Նայելով նորա վերայ):
Հնա, հիմայ ես բոլորը հասկացայ,
դուք ուզում էք ձեր ընկերուհուն
անպատճառ ազատել. ուղիղն ազա-
ցէք, չէ՞ որ այդպէս է:

Տ. Լէն.: Ով որ մի անգամ իրան
ծախել է ուրիշների համար, նա էլ
երբէք չի կրկնի այդ:

Գիւն.: Ես իմ նամակս չետ կը
պահանջեմ:

Տ. Լէն.: Ոչ, ոչ:

Գիւն.: Ես կը մնամ այստեղ, մին-
չև Գեղմէրի գալը. ես չետ կ'ուզեմ
նամակս. կ'ասեմ նորան, որ այդ վե-
րաբերում է իմ հրաժարականիս. . .
որ նա պէտք է կարգայ. . .

Տ. Լէն.: Ո՛չ, Գիւնտէր, նամակը
յետ մի պահանջէք:

Գիւն.: Բայց ասացէք ինձ. արդեօք
այդ չէ՞ր պատճառը, որ դուք ինձ
հրաւիրեցիք այստեղ:

Տ. Լէն.: Այն, վախից, առաջին
տպաւորութեան տակ, բայց այն
ժամանակից քսանէ չորս ժամ անցաւ
և այն ժամանակամիջոցում ես այս-
տեղ անհաւատալի բաներ տեսայ:
Գեղմէրը պէտք է բոլորն իմանայ. այդ

գաղտնիքը թող բացուի. անհրաժեշտ է, որ երկուսն էլ անկեղծօրէն բացատրուին. անհնարին է շարունակել այդպէս. անկարելի է աւելի երկար ծածկել:

Գէն.: Դէ, լաւ, եթէ դուք այդ վճռում էք... բայց յամենայն դէպս ես կարող եմ անել մի բան և այդ կ'անեմ իսկոյն. . .

Տ. Լէն.: (Ականջ է դնում): Չտապեցէք, գնացէք, գնացէք, պարը վերջացաւ. մենք հիմա մի րոպէ հանգիստ չենք կարող լինել:

Գէն.: Ես ձեզ կըստասեմ ներքեւում տան առաջ:

Տ. Լէն.: Լաւ, սպասեցէք. դուք պիտի ինձ ճանապարհ գցէք մինչև տուն:

Գէն.: Օհ, ես դեռ երբէք այդքան չափազանց երջանիկ եղած չեմ: (Գնում է):

Նախասենեակի դուռը բաց է մնում հետևեալ տեսարանի միջոցին:

ՏԵՍԱՐԱՆ Բ.

Տ. Լյնդէն, յետոյ Գեյմէր և Նօրա:

Տ. Լէն.: (Փոքր ինչ կարգի է բերում սեղանը և պատրաստում է իւր վերարկուն): Ի՞նչ փոփոխութիւն. այն, ինչ փոփոխութիւն կեանքի մէջ: Ունենալ մէկին, որի համար կարելի լինի աշխատել և ապրել. աւերուած բնի մէջ մտնցել սէր և կարգ. . . Այն, այն, ես այդ ուզում եմ. . . Երանի՛ր նոքա շուտ գալին: (Ականջ է դնում): Օ, ահա՛ գալիս են. շուտ վերցնեմ իմ բաներս: (Վերցնում է իւր գլխարկը և վերարկուն. լսվում են Գեյմէրի և Նօրայի ձայները. բանալիքը զրնգում է և Գեյմէրը նախասենեակ է բերում Նօրային, համարեա՛լ զօռով: Նօրան իտալական զրեստով, մեծ, սև շա-

լով, իսկ Գեղմէրի վրայ պոչազգեստ և վերևից սև, բաց դօմինո):

Նօրս: (Գուան մէջ յամառուելով): Ոչ, ոչ, ոչ, ես կրկին վերև կ'երթամ. չեմ ուզում այդպէս շուտ հեռանալ:

Գեղ: Բայց, սիրելի Նօրա. . .

Նօրս: Օ, Բօբերտ, խնդրում եմ քեզ, սրտանց. . . մնանք զոնէ էլի մի ժամ:

Գեղ: Ոչ մի ըսպէ, սիրելի Նօրա, դու գիտես, որ պայմանն այդպէս է: Սենեակ մտիւր, այստեղ կը մըսիս: (Չնայելով նորա զիմազրութեանը, Գեղմէրը նորսն զգուշութեամբ սենեակ է բերում):

Տ. Լին: Բարի երեկոյ:

Նօրս: Քրիստինա:

Գեղ: Ի՞նչպէս, տիկ. Լինդէն, այսպէս ուշ և դուք դեռ այստեղ էք:

Նօրս: Դու այստեղ մենակ նստած սպասում էիր ինձ:

Տ. Լին: Այո, ես ուշացայ և դու արդէն վերևն էիր. էլ չուզեցի դնալ սուանց քեզ տեսնելու. . .

Գեղ: (Հանում է Նօրայի վերայից շալը): Ուրեմն հիացէք նորա վերայ, ինչպէս հարկն է. կարծեմ նա արժանի է, որ մարդ նորանով հիանայ. տեսէք, սա ինքը գեղեցկութիւնն է:

Տ. Լին: Այո, պէտք է խոստովանել. . .

Գեղ: Միթէ նա հրաշալի չէ. պիտի ըստ հանդէտում այդ ընդհանուր կարծիք էր: Բայց շատ յամառ է այս փոքրիկ, սիրելի արարածը. սորան համարեա զօռով դուրս բերի պարահանդէսից:

Նօրս: Ո՛հ, Բօբերտ, դու կըզջաս, որ չթողիր ինձ զոնէ կէս ժամ էլ մնալու:

Գեղ: Լսեցէք, տիկ. Լինդէն, նա պարում է իւր տարանտելլան, ամեն կողմից լսելի են բուռն ծափահա-

րութիւններ. . . որոնց միազամայն արժանի էր... Թէև պարելիս նկատելի էր չափազանց մեծ ընկալիչ, այսինքն... աւելի շատ, եթէ խիստ դատելու լինինք, քան կարելի էր թող տալ դեղարուեստի մէջ: Քայլ միւսնուն է, գլխաւորն այն է, որ նա արժանացաւ ցոյցերի և այն էլ շատ աղմկալից: Արորդ էլ նորան այնտեղ թողնել, տպաւորութիւնը թուլացնել. շատ շնորհակալ եմ: Ես թիւս առաջարկեցի իմ զեղեցիկ իտալուհուս, կ'ուզէի ասել իմ յամառ իտալուհուս. կաջճակի արագութեամբ մենք պտոյտ արինք դահլճի մէջ... ողջունեցինք ամենին և հիանալի երևոյթն անհետացաւ: Քեմից հեռանալը պէտք է, որ միշտ տպաւորութիւն գործէ, տիկ. Ալինդէն, իսկ Նորան այդ չի ուզում հասկանալ... Օ՛հ, այստեղ ի՛նչ շոգ է: (Գցում է իւր դօմինօն աթոռի վերայ և բաց

է անում զրասենեակի դուռը): Այս ինչ է, այնտեղ մութ է. անի, ի հարկէ, ներեցէք. . . (Նա գնում է այնտեղ և մոմերը վառում):

Նոր.: (Փսփսում է շտապ և չնչասպառ): Դէ. . .

Տ. Ան.: (Կամաց): Ես խօսեցի նորա հետ:

Նոր.: Յետոյ:

Տ. Ան.: Նորա, դու բոլորը պիտի ամուսնուդ ասես:

Նոր.: (Ծանր): Ես այդպէս էլ զիտէի:

Տ. Ան.: Գիւնտէրից վախ մի ունենար, քայց դու պիտի ամուսնուդ ասես:

Նոր.: Ես ոչինչ չեմ ասի:

Տ. Ան.: Այն ժամանակ կ'ասէ նամակը:

Նոր.: Չնորհակալ եմ: Քեզանից, Գրիստինն, հիմա զիտեմ իմ անելիքս:

Սոս.: Ես մի քիչ անո՞ստ եմ:

Գեշ.: (Ներս մտնելով): Է՛, ինչպէս, տիկ. Լինդէն, կշտացանք նորանից:

Տ. Լին.: Այո՛. և հիմայ բարի գիշեր:

Գեշ.: Արդէն. այս ձեր ձեռագործը չէ՛:

Տ. Լին.: (Առնում է): Ա՛խ, շնորհակալ եմ. քիչ մնաց մոռանալի:

Գեշ.: Դուք ուրեմն գործում էք:

Տ. Լին.: Այո՛:
Գեշէր: Գիտէ՞ք ինչ. աւելի լաւ է, որ նաշխէք:

Տ. Լին.: Ինչո՞ւ որ:

Գեշէր: Այդ աւելի սիրուն է: Տեսէք, նաշխը բռնում են ձախ ձեռով. այ, այսպէս. իսկ աջով ասեղն են տանում. այ այսպէս. թելը տանում են թեթեւ, երկար, կամարի ձևով. այնպէս չէ՛:

Տ. Լին.: Այո՛, կարելի է. . .

Գեշէր: Իսկ երբ գուլպայ են գործում, շատ անձուռի է լինում. դէ՛

միայն նայեցէ՛ք՝ սեղմուած ձեռներ, ձաղերը թռչկոտում են. այդ ձեռագործի մէջ մի ինչ որ չինական բան կայ... Ա՛խ, ինչ լաւ շամպանիա գինի կար այնտեղ:

Տ. Լին.: Դէ՛հ, մնաս բարև, Նորա, էլ յամառութիւն չանես:

Գեշէր: Խելօք ասացի՞ք, տիկ. Լինդէն:

Տ. Լին.: Բարի գիշեր, պ. գիրեկտոր:

Գեշէր: (Մինչև դուռը նորա ձանապարհ զցելով): Բարի գիշեր, յուսով եմ, որ դուք ապահով մինչև տուն կըհասնէք. ես ուրախութեամբ... բայց դուք հեռու չէք ապրում: Բարի գիշեր: (Փակելով դուռը, վերագառնում է):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ.

Գեղձէր: Վերջապէս ազատուեցինք նորանից. այն ձանձրալի է:

Նօրս: Դու, երևի, շատ ես յոգնել, Բօբերտ:

Գեղձէր: Ամենևին:

Նօրս: Քնել չես ուզում:

Գեղձէր: Բոլորովին, ընդհակառակը, ես ինձ առանձնապէս լաւ եմ, զգում. իսկ դ՞ու՞ր. Բայց ինչ յոգնած ու քնկոտ երես ունիս:

Նօրս: Այո՛, ես շատ յոգնել եմ, շուտով կը քնեմ:

Գեղձէր: Ա՛յ, տեսնում ես, քեզ շատ լաւ արի, որ քեզ տուն բերի:

Նօրս: Քո արած ամեն ինչն էլ լաւ է:

Գեղձէր: (Նորա ձակատը համբուրում է): Վերջապէս իմ տիկնիկս խելօք

խօսեց: Բայց նկատեցիք, թէ ինչպէս այս երեկոյ Բանկը ուրախ էր:

Նօրս: Յիրաւի, ես ժամանակ չըդտայ նորա հետ խօսելու:

Գեղձէր: Ես էլ համարեա չխօսեցի, միայն վաղուց ես նորան այդպէս լաւ տրամադրութեան մէջ չէի տեսած: (Նայում է նորա վերայ մի քիչ ժամանակ, յետոյ մօտենում է): Օ՛հ.

ինչ լաւ է, որ մենք էլի տուն եկանք, և ես ու դու բոլորովին մենակ ենք. այն, դու իմ սիրունիկս:

Նօրս: Այդպէս մի նայիր ինձ վերայ, Բօբերտ:

Գեղձէր: Չնայեմ իմ գանձիս վերայ, որ պատկանում է ինձ, միայն ինձ և ուրիշ ոչ ոքի:

Նօրս: (Սեղանի միւս կողմն է դնում): Դու այս երեկոյ այդպէս չըպլտի խօսիս ինձ հետ:

Գեղձէր: (Հետևելով նորան): Դու դեռ չես կարող բաժանուել տարանտելա-

լից և այդ քեզ աւելի գրաւիչ է
դարձնում: Լսէ՛, այ՛ Հիւրերը գնում
են, (կամայ) Նօրա՛, շուտով լուռ-
թիւն կը տիրէ տան մէջ:

Նօրա: Յոյս ունիմ...

Գէլ: Այնպէս չէ՞, սիրելի Նօրիկս:
Քայց մի բան ատեմ... Երբ ես քեզ
հետ միասին Հասարակութեան մէջ
եմ լինում, զիտեա թէ ինչու ես քեզ
հետ քիչ եմ խօսում, հեռանում եմ
քեզանից և միայն պատահամբ նա-
յում եմ քեզ վերայ... նորա Համար
որ այն ժամանակ ես երևակայում
եմ, թէ մեր սէրը դեռ գաղտնիք է
աշխարհի Համար, թէ մենք նշա-
նուած ենք ծածուկ և թէ ոչ ոք
չգիտէ այդ մասին:

Նօրա: Այո՛, այո՛, ես գիտեմ, որ
դու միշտ իմ մասին ես մտածում:

Գէլ: Իսկ երբ մենք գնում ենք,
և ես շարով ծածկում եմ քո քնքուշ
ու փափրիկ ուտերը... այն ժամանակ

ես երևակայում եմ, որ դու իմ Հարս-
նացուն ես, որ նոր ամուսնացել ենք
և ես առաջին անգամ քեզ բե-
րում եմ իմ տունս... որ ես առաջին
անգամ մենակ եմ մնում քեզ հետ
միասին... Յօրրովին մենակ, իմ ան-
թառամ, թարմ գեղուհու հետ: Ամ-
բողջ երեկոն էս մտածում էի միայն
քո մասին. երբ քեզ տեսայ տարան-
տելայի մէջ, ինչպէս դու Հրապու-
րում և մերժում էիր... արիւնս ե-
ռում էր. ես էլ չէի կարող Համբե-
րել... ահա թէ ինչու այդպէս շուտ
ես քեզ տուն բերի:

Նօրա: Դնա՛, Բօբերտ, ինձ մենակ
թող. ես ոչինչ չեմ ուզում:

Գէլ: Ի՞նչ է պատահել քեզ, սի-
րելի Նօրա. մի՞թէ քեզ հետ Հանաք
անել կարելի չէ... մի՞թէ ես քո ա-
մուսինը չեմ... (Դուռը բախում են):

Նօրա: (Վեր է թռչում): Դու լը-
սում ես...

ԳԷՂ: (Գրոսի դռան մօտ): Ո՞րվ է:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Գ:

Բահի: (Գռան ետևից): Ես եմ. կարող եմ մի րոպէով ներս մտնել:

ԳԷՂ: (Կամաց և բարկացած): Նա ինչ է ուզում: (Քարձր): Սպասէ՛ մի քիչ: (Գնում և դուռը բաց է անում): Ապրի՛ս, որ մեր դռան առջևից չանցար առանց ներս մտնելու:

Բահի: Ես լսեցի քո ձայնը և ուղեցայ նայել ձեզ վերայ: (Չտապ նայում է այս ու այն կողմ): Այ՛ո, այս թանկագին, ծանօթ սենեակները. այստեղ ձեր երկուսի մօտ հանդարտ ու լաւ է:

ԳԷՂ: Կարծեմ վերևն էլ քեզ շատ դուր եկաւ:

Բահի: Լաւ և ինչո՞ւ չպիտի հաւանէի. ինչո՞ւ, մենք չպիտի օգտուենք ամեն բանից այս աշխարհիս երեսին

դոնէ այնքան, ինչքան որ կարելի է: Գինին երևելի՛ էր:

ԳԷՂ: Մանաւանդ շամպանիա գինին:

Բահի: Գու է՛լ այդ նկատեցիր. յի. ես չափազանց շատ խմեցի:

Նօրս: Բօքերտն էլ այսօր շատ խմեց շամպանիա գինի:

Բահի: Յիրաւի:

Նօրս: Այ՛ո, և նա խմելուց յետոյ շատ ուբախ է լինում:

Բահի: Ինչո՞ւ ուբախ երեկոյ չանցկացնել աշխատանքով լի օրից յետոյ:

ԳԷՂ: Աշխատանքով լի. դժբախտաբար ես դորանով չեմ կարող պարծենալ:

Բահի: (Խիղում է նորա ուսերին): Բայց ես, տեսնում եմ:

Նօրս: Հա՛, դուք ուրեմն ձեր գիտնական հետազօտութիւնը կատարել էք:

Բահի: Չատ ուղիղ է:

ԳԷՂ: Տեսէ՛ք խնդրեմ, Նօրան խօ-

սոււմ է զիտնական հետազօտութիւն-
ների մասին:

Նօրս: Եւ ես կարող եմ շնորհաւո-
րել հետեւանքը:

Բանի: Կարող էք շնորհաւորել:

Նօրս: Ուրեմն հետեւանքը բարե-
յաջող է:

Բանի: Ինչպէս բժշկի, նմանապէս
հիւանդի համար, որքան կարելի է
լաւ, պարզ հետեւանք է:

Նօրս: (Ձտապ և քննողական աչ-
քով): Պարզ...

Բանի: Միանգամայն պարզ, ուրեմն
ինչպէս կարելի էր դորանից յետոյ
ուրախ երեկոյ չանցիւսցնել:

Նօրս: Այդպէս էլ պէտք էր, դօքտօր:

Գեշ: Ես էլ նոյնը կ'աւսեմ. միայն
թէ վաղը դորա համար չտուժես:

Բանի: Ի՛հ, կեանքի մէջ՝ ոչնչի
դէմ կըստանաս ոչինչ:

Նօրս: Գօքտօր, դուք երևի դիմա-
կահանդէսի սիրահար էք:

Բանի: Ի հտրկէ, եթէ այնտեղ
հետաքրքիր դիմակներ կան:

Նօրս: Լսեցէ՛ք, ինչպէս երևինք
երկուսս էլ հետեւեալ դիմակահան-
դէսին:

Գեշ: Ա՛խ, դու թեթեւամիտ, հի-
մայ արդէն մտածում ես նոր պա-
րահանդէսի մասին:

Բանի: Մենք երկուսով. լաւ, ես ձեզ
կ'աւսեմ:

Գեշ: Այդ դէպքում ինչ զգեստ կը
յարմարուի սորան:

Բանի: Թող նա երևի, ինչպէս կայ:

Գեշ: Չատ սրամիտ ես մտածել.
Իսկ դու ո՞ւմ կը ներկայացնես:

Բանի: Այդ, սիրելի ընկեր, ինձ հա-
մար արդէն վճռուած հարց է:

Գեշ: Ի՞նչ:

Բանի: Հետեւեալ պարահանդէսին
կ'երևիմ ինչպէս աներևոյթ:

Գեշ: Ա՛խ, այդ շատ հետաքրքիր
կը լինի:

Բանի: Ժամանակով կար մի մեծ, ու գլխարկ... դու ոչինչ չես լսել այդ աներևույթ գլխարկի մասին. ով որ գլխին դնէ, նորան ոչ ոք չի տեսնի:

Գէլ: (Ժպտտը բռնելով): Ասածդ ուղիղ է:

Բանի: Բայց ես բոլորովին մոռացայ, թէ ինչու համար եկայ ձեզ մօտ. Գեղմէր, տուր ինձ մի հատ մուգ գույնով հաւանայի սիգարա:

Գէլ: Մեծ ուրախութեամբ: (Տալիս է նորան ծխախոտի տուփը):

Բանի: (Առնում է մի սիգարա և ծայրը կտրում է): Ղնորհակալ եմ:

Նորա: (Լուցկին վառելով): Ահա ձեզ կրակ:

Բանի: Ձատ շնորհակալ եմ: (Նորան լուցկին բռնում է և նա վառում է): Իսկ Հիմայ... մնաք բարև...:

Գէլ: Մնաս բարև, մնաս բարև, սիրելի ընկեր:

Նորա: ցանկամ ձեզ անուշ քուն, դօքտոր:

Բանի: Ղնորհակալ եմ այդ ձեր ցանկութեան համար:

Նորա: Ցանկացէք նոյնը և ինձ:

Բանի: Ձեզ, լաւ, եթէ դուք այդ պահանջում էք. անուշ քուն, և շնորհակալ եմ կրակի համար: (Նա երկուսին էլ գլուխ է տալիս և դընում է):

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Է:

Գեղմէր, Նորա, յետոյ չեղինէ:

Գէլմէր: (Իրան զսպելով): Նա այսօր շատ է խմել:

Նորա: (Մեքենայբար): Կարելի է: (Գեղմէրը գրպանից հանում է բանալիքը և դնում է դէպի նախասենեակ): Բոբերտ, ո՞ւր ես գնում:

Գէլմէր: Արկղը պէտք է դատար-

կել. լիքը լցուել է. թէ՛ չէ՛ վաղը
լրագրները համար տեղ չի լինի. . .

Նոր: Մի՞թէ դու էլի պէտք է
պարապես:

Գեղեկ: Ատուած չանէ. բայց այս
լինջ է. մէկը կողպէքին ձեռք է
տուել:

Նոր: Կողպէքին ձեռք է տոււմ:

Գեղեկ: Ի հարկէ. այս ինչ է նը-
շանակում. յոյս ունիմ, որ աղախին-
ները չեն լինի... այ, կոտրած ճաղ.
Նորա, այդ քո. . .

Նոր: Երևի երեխաները. . .

Գեղեկ: Նոցա պատուիրէ, որ այդ
չանեն: Հ՛ր, Հ՛ը, վերջապէս բացի:
(Հանում է նամակները և կանչում
է): Հեղինէ... Հեղինէ, նախատենեա-
կի ճրագը հանգցրէք: (Նա վերա-
դառնում է սենեակ, դուռը ծած-
կում է. նամակները ձեռին): Տես,
տես, ինչքան է հաւաքուել: (Ջո-
կում է նամակները): Այս ինչ է:

Նոր: (Պատուհանի մօտ): Նամակ
է. ախ, ոչ, ոչ, Բօքերտ. . .

Գեղեկ: Երկու այցետոմս Բանկից:

Նոր: Գօքտօր Բանկից:

Գեղեկ (Կարդում է): Doctor me-
dicinae Բանկ: Սօքա երեսն էին,
երևի նա նոր է գցել արկղը:

Նոր: Բան կայ գրուած վրէն:

Գեղեկ: Անուան վերայ մի սև
խաչ. շատ հաճելի հնարադիտութիւն
չէ. կարծես նա յայտնում է իւր
մահուան մասին:

Նոր: Նա հէնց յայտնում է:

Գեղեկ Ի՛նչպէս, դու մի բան գի-
տես. նա քեզ ասել է:

Նոր: Այո, երբ մենք ստանանք
նորա այցետոմսը, այդ նշան կը լինի,
որ նա մնաս բարև է անում մեզ
հետ. այն ժամանակ նա կ'առանձ-
նանայ ու կը մեռնի:

Գեղ: Խեղճ բարեկամ. ես գիտէի,
որ նա երկար չի մնայ մեզ հետ.

բայց այսպէս շուտ... և ահա նա
թագնվում է ինչպէս վիրաւորուած
կենդանի:

Նոր: Եթէ այդ պէտք է լինի,
թող կատարուի առանց խօսքերի,
այնպէս չէ, Բօբերտ:

Գէլ: (Յետ ու առաջ դնալով): Նա
մեզ հետ այնպէս մօտ էր. ես չեմ էլ
կարող երևակայել, որ նա մեզ հետ
չլինի. նա իւր տանջանքներով ու
միայնակութեամբ կարծես աւելի պայ-
ծառ էր երևցնում մեր երջանկու-
թիւնը: Թէև, կարելի է, այդպէս ա-
ւելի լաւ է. գոնէ նորա համար:
(Կանգնում է): Գուցէ և մեզ համար,
Նօրա. Հիմայ մենք մեղի մնացինք:
(Մէկ ձեռքով նորան դգվում է): Իմ
սիրելի ամուսինս, ինձ թվում է,
թէ ես քեզ բաւական ամուր չեմ
բռնում: Քիտես ինչ, Նօրա, երբեմն
ես ուզում եմ, ու դու մեծ վտանգի
մէջ ընկնիս, որ ես կարողանամ քեզ

համար զոհել ամեն ինչ, ամեն ինչ,
մինչև իսկ կեանքս:

Նոր: (Աղատուելով նորանից, խօս-
տում է բարձր և ազդու կերպով):
Հիմայ դու պէտք է կարգաս քո նա-
մակներդ, Բօբերտ:

Գէլ: Ոչ, ոչ, այսօր չէ, ես կը-
մնամ քեզ մօտ, սիրելի Նօրա:

Նոր: Ընկերիդ մահուան մտքե-
րով:

Գէլ: Գու ուզիդ ես ամուսնայի
երկուսիս էլ վրդովեց. մի ինչ որ
զգուելի բան երևցաւ մեզ, մեր ա-
ռաջն է մահը և քայքայումը: Պէտք
է աշխատել ազատուել նորանից.
Դեանք ամենս մեր սենեակը:

Նոր: (Ընկնում է նորա վրին):
Բօբերտ, մնաս բարև, բարև գիշեր:

Գէլ: (Համբուրում է նորա ճա-
կատը): Բարև, գիշեր, իմ անգլինս,
ցանկամ քեզ հանգիստ քուն, սիրելի
Նօրաս: Հիմայ կերթամ նամակները

կը կարդամ: (Նա նամակներն առած գնում է գրասենեակը և դուռը ծածկում է):

Նօրս: (Վայրենաբար նայում է իւր շուրջը. զանազան բաներ է ձեռքն առնում, յետոյ թողնում է. Գելմէրի դօմինօն վրէն է դցում և փսփսում է շտապ, կցտուր և խռպոտ ձայնով): Էլ երբէք նորան չեմ տեսնի. երբէք, երբէք, երբէք: (Չալը գլխին է դրցում): Եւ անուշիկ զաւակներիս էլ էլ չեմ տեսնի երբէք, երբէք: Պըղտոր, սառը ջուրը սառցի տակ, անյատակ... Ա՛խ, եթէ ամեն ինչ արդէն վերջացած լինէր: Հիմայ նամակը նորա ձեռքն է. նա կարդում է: Ա՛խ, չէ, չէ, դեռ չի կարդում: Մնաս բարև, Բօբերտ, և դուք իմ զաւակներս: (Նա ուզում է վազել նախասենեակ. նոյն վայրկենին Գելմէրը աղմուկով դուռը բաց է անում և կանգնում է, բաց նամակը ձեռին):

Գելմէր: Նօրս:

Նօրս: (Բարձր ճշարով) Ի՞նչ:

Գելմէր: Այս ի՞նչ է. գիտես, թէ այստեղ ի՞նչ է դրուած:

Նօրս: Այո, գիտեմ, թող ինձ, թող ինձ այստեղից:

Գելմէր: (Բռնելով նորան): Բայց ո՞ր ես գնում:

Նօրս: (Ազատուելով): Դու ինձ չըպէտք է ազատես, Բօբերտ:

Գելմէր: (Կանգ առնելով): Ուրեմն ուղիղ է. ուղիղ է այն, ինչ որ նա զրել է... սարսափելի է. ոչ, ոչ, այդ անհնարին է, այդ չի կարող լինել:

Նօրս: Այդ բոլոր ուղիղ է: Ես քեզ սիրում էի աշխարհիս երեսին ամեն բանից աւելի:

Գելմէր: Թող քո յիմար պատճառաբանութիւնները:

Նօրս: (Մի քայլ մօտենալով): Բօբերտ:

Գելմէր: Թշուառական, այս ի՞նչ էս արել:

Նօրո: Թող ինձ զնամ: դու չպէտք է ինձ համար զոհուիս: դու չպէտք է այդ մեղքը քեզ վերայ առնես:

Գեշեք: Խնդրեմ, առանց կօմեղի-այլի: (Նախասենեակի դուռը կողպում է): Գու կը մնաս և ինձ պէտք է հաշիւ տաս... Հասկանում ես, թէ դու ինչ ես արել. ասա, հասկանում ես:

Նօրո: (Խիստ կերպով) նայում է նորա վերայ և ասում է շեշտելով): Այո՛, ես հիմա սկսում եմ լաւ հասկանալ:

Գեշեք: (Ման է գալիս): Ո՛հ, ինչ սարսափելի չայտնութիւն: Աւթ տարուայ ընթացքումը նա, իմ ուրախութիւնս, իմ պարծանքս, եղել է միայն կեղծաւոր, խաբեբայ. . . ո՛չ, աւելի վատ, նա եղել է յանցաւոր: Ա՛խ, ինչ զզուելի բան է, ինչ զըզուելի:

Նօրո: (Լուռ է և աչքերը չի հեռացնում նորանից):

Գեշեք: (Կանգնում է նորա առջ): Եւ ես պէտք է այդ սպասէի, ես պէտք է այդ նախատեսէի: Քո հօրդ թեթեամիտ համոզմունքները... լսէ, մի կտրիր խօսքս, հօրդ բոլոր թեթեամիտ համոզմունքները դու ժառանգել ես: Ո՛չ հաւատ, ո՛չ բարոյականութիւն, ոչ պարտաճանաչութեան զգացմունք... Ո՛հ, ինչպէս ես խիստ կերպով պատժուած եմ, որ այն ժամանակ ուշադրութիւն չդարձրի այդ ամենի վերայ: Ես այդ արիքեզ համար, ահա թէ դու ինձ ինչպէս վարձատրեցիր:

Նօրո: Այո՛, այ՛, ինչպէս վարձատրեցիր:

Գեշեք: Գու իմ բոլոր երջանկութիւնս կործանեցիր. իմ ողջ ապագաս քանդեցիր. ո՛հ, այդ միտքը անտանելի է: Ես անխիղճ մարդու ձեռք եմ ընկել. նա կարող է ինձ ամեն բան անել. պահանջել ինձա-

նից, ինչ որ ուղենայ. հրամայել ինձ,
տանջել ինձ և ես պէտք է լուռ
տանեմ այդ ամենը. . . Ահա, թէ
ինչ ստոր կերպով պիտի ընկնեմ և
կորչեմ թեթևամիտ կնոջ երեսից...

Նոր: Երբ ես չլինիմ, դու ազատ
կը լինիս:

Գեւոր: Խնդրեմ, առանց խօսքերի...
Հայրդ էլ էր սիրում այդպէս խօսել:
Ինձ ինչ օգուտ, որ «դու չլինիս»:
Նա այնուամենայնիւ կը տարածայնէ
և շատ ճշտութեամբ կասկած կը
ճագի, որ ես գիտէի քո յանցանքի
մասին. դեռ կը մտածեն, թէ այդ
ես եմ քեզ սովորեցրել: Եւ այդ բո-
լորի համար ես պարտական եմ քեզ,
քեզ, որ միշտ ձեռքերիս վերայ էի
մանածում, հասկանում ես, թէ դու
ինձ ինչ ես արել:

Նոր: (Սառը և հանդարտ): Այո:

Գեւոր: Այդ այնպէս անհաւատալի
է, որ ես դեռ հասկանալ անզամ

չեմ կարող: Բայց պէտք է մի որ և է
որոշումն անել: Զալը յետ գցիր, յետ
գցիր, ասում եմ... Այսպէս, թէ այն-
պէս, պէտք է նորան բաւարարու-
թիւն տալ: Այդ գործը պէտք է ծած-
կուի. ինչ էլ որ լինի: Իսկ ինչ վե-
րաբերում է ինձ և քեզ, թող ա-
ռաջուայ պէս լինի, իբր թէ ոչինչ
չէ պատահել մեր մէջ, այսինքն հա-
սարակութեան աչքում... Ուրեմն դու
կը մնաս տանը, այդ ինքն ըստ ին-
քեան հասկանալի է, բայց ես քեզ
թող չեմ տայ երեխաներին կրթելու.
միթէ կարելի է նոցա քեզ յանձնել...
Ո՛հ, այդ ասել նորան, որին ես այն-
չափ ջերմ սիրում էի և որին, հիմայ
էլ դեռ... բայց այդ անհրաժեշտ է.
այսօրուանից երջանկութիւն չկայ այլ
ևս. մեզ համար մնացին միայն բե-
կորները, մնացորդը, արտաքինը, նո-
ցա պէտք է ազատել: (Զանգահարու-
թիւն. Գեւորը սարսափում է): Ար-

դեօք ինչ է. այսպէս ուշ. միժէ այդ
սարսափը... միժէ նա է. թագնուիր,
Նօրն. ասն, որ դու հիւանդ ես:
(Նօրա անշարժ է մնում, Գեղմէր
գնում է դէպի դուռը և բաց է անում):

Հէշնէ: (Ախտահանուած): Նամակ
առկնոջը:

Գէշէր: Տուէք: (Խլում ու ծածկում
է դուռը): Այն, նորանից է. բայց
դու չես ստանայ. ես ինքս կը կար-
դամ:

Նօրն: Կարդան:

Գէշէր: (Արագի մօտ): Ես համա-
րեա քաջութիւնս կորցնում եմ. կա-
րելի է մենք միանգամայն կորած
ենք և դու և ես: Ոչ, ես պիտի ի-
մտնամ: (Պատուում է նամակը, շտապ
մի քանի տող կարդում է, նայում է
մէջը դրած մուրհակի վերայ, ուրա-
խութիւնից ճչում է): Նօրն:

Նօրն: (Նայում է հարցական կեր-
պով):

Գէշէր: Նօրն. . . Ոչ, սպասէ, բէլի
կրկարդամ. այն, այն, մուղիղ է, . . . ես
ազատուած եմ. Նօրն, ես ազատուած
եմ:

Նօրն: Իսկ հո: լմ սյա . . .

Գէշէր: Դու էլ, ինչարիք. մենք
երկուսս էլ ազատուած ենք, երկուսս
էլ: Տէս, նա մուրհակը քեզ է վերա-
դարձնում. նա գրել է, որ խղճում և
զղջում է. . . Աեանքի երջանիկ փո-
փոխութիւնը թէև մեզ համար միև-
նոյն է, ինչ էլ որ նա գրէ: Մենք
ազատուած ենք, Նօրն: Չէ, դատաւ
այս կեղտոտ թղթերը պէտք է ոչըն-
չացնել. . . մի անգամ էլ նայեմ:
(Մուրհակը շուռ է տալիս միև կող-
մը): Ոչ, չեմ ուզում նայել. թող այս
միայն իբրև երազ մնայ: (Պատուում
է մուրհակն ու երկու նամակները,
զցում է վառարանը և նայում է,
թէ նոքա ինչպէս այրում են): Այդ-
պէս, հիմայ նոցանից էլ ոչինչ չը-

մնաց: Նա գրել էր որ Ծննդեան տօ-
նից... Ա՛խ, Նօրա՛, Նօրա՛, այս երեք
օրը պէտք է որ քեզ համար անտա-
նելի լինէր:

Նօրա: Այո՛, այս երեք օրուայ տաղ-
մապս շատ ծանր էր:

Գեշտեր: Ի՛նչ տանջանքներ պէտք
է որ դու քաշած լինէիր, ուրիշ ելք
չունենալով, բացի... Չէ՛, մուսնանք
այդ բոլոր զգուելի բաները: Միայն
ուրախանանք ու կրկնենք. պրծանք,
բոլորը անցաւ: Լսում ե՛ս դու, Նօրա՛,
դու կարծեմ, դեռ չես կարող հաս-
կանալ. չէ՛ որ անցաւ ամեն ինչ. . .
Բայց ի՛նչ պատահեց քեզ... այդ ան-
շարժ հայեացքդ. հա՛, հասկանում
եմ՝ սիրելի՛, խեղճ Նօրաս, դու չես
կարող հաւատալ, որ ես քեզ ներեմ.
ճշմարիտ, ես քեզ ներեցի, Նօրա՛,
երգվում եմ, ամեն բան ներեցի. ես
գիտեմ, որ դու այդպէս ես վարուել
իմ սիրուց դրդուած:

Նօրա: Այո՛ սիրուց:

Գեշտեր: Գու աչնպէս էիր ինձ սի-
րում, ինչպէս որ պէտք է կինը սիրէ
լւր ամուսնուն: Բայց միթէ կարծում
ես, թէ դու ինձ համար յառաջուայ
պէս թանկագին չես լինի, քանի որ
չկարողացար ինքնուրոյն գործել: Աչ,
ոչ, հաւատո՛ւ միայն ինձ, ես քեզ
խորհուրդներ կրտամ, կ'օգնեմ և ճա-
նապարհ ցոյց կրտամ: Ես տղամարդ
չէի լինի, եթէ քո անպաշտպան
դուրթիւնդ իմ աչքիս կրկնակի գե-
ղեցկութիւն չերևէր: Գու պիտի մո-
ռանաս այն խիտտ խօսքերը, որ ես
քեզ ասացի վախի առաջին տպաւո-
րութեան տակ, այն վայրկեանին, երբ
ես սպասում էի, որ ամեն բան փուլ
կրգայ իմ գլխիս: Հիմայ ես քեզ
ներեցի, Նօրա՛, երգվում եմ, որ
ներեցի:

Նօրա: Ձնորհակալ եմ ներելուդ
համար: (Գնում է դէպի ձախ դուռը):

Ինչէր: Չէ, կաց... (Նայում է):
 Այդտեղ ինչ ես անում:
 Կոչ: (Միւս սենեակից): Ինձա՞ն
 կազգեստս փոխում եմ:
 Ինչէր: (Քաց դռնից): Այո, փոխէ:
 աշխատիր հանդատանալ և հոգուդ
 հաւասարակշուութիւնը դանել, իմ
 սարսափած աղաւնեակս: Հանդարտ
 շունչ քաշէ ես հալանաւոր կը լինիմ
 ու կը պաշտպանեմ քեզ: (Ման է
 դալիս դռան մօտ): Ինչ լաւ է, ինչ
 հանդարտ է մեր տանը, Նօրա՛ն, այս-
 տեղ դու պաշտպանուած ես ամեն
 վտանգից: Այստեղ ես քեզ կը պահ-
 պանեմ, ինչպէս սարսափած աղա-
 նեակի, որին կարողացայ յաջողու-
 թեամբ ազատել զիշատիչ թռչունի
 ճանկերից. ես կը հանդատացնեմ քո
 խեղճ, յուզուած սիրտը. հաւատա՛
 ինձ, Նօրա՛ն, քիչ-քիչ մեր տանը
 խաղաղութիւնը նորից կը վերականգ-
 նի, հէնց վաղը ամեն բան քեզ լաւ

կերելի: Ի՛նչ պէտք չի լինի կրկնելու,
 որ ես քեզ ներեցի: Դու ինքդ կը
 դրաս, որ այդ այդպէս է: Ի՛նչպէս
 կարող էիր մտածել, որ ես: քեզ կը
 հեռացնէի, կամ կը մեղադրէի: Ո՛հ,
 դու դեռ չես հասկանում տղամար-
 դու անկեղծ, խսկական հոգին, Նօրա՛ն:
 Աննկարագրելի քաղցր է և հանգար-
 տեցուցիչ տղամարդու խոստովանքը,
 որ նա ներել է իւր կնոջը, ներել է
 անկեղծ, սրտանց: Նա այդպիսով
 դառնում է նորա կրկնակի դանձը.
 նա, այսպէս ասած, նորից կը վե-
 րածնուի. նա միւսնոյն ժամանակ կը
 լինի թէ նորա կինը և թէ աղջիկը
 դու այսուհետև իսկ այդպէս կը լի-
 նին ինձ համար, մոլորուած ու ան-
 պաշտպան արարած: Հիմա մի՛ վրդո-
 վուիր ոչ մի բանի վերայ, Նօրա՛ն,
 միայն ինձ հետ սրտաբաց եղիր, և
 այն ժամանակ ես կը լինիմ քեզ հա-
 մար թէ քո կամքը և թէ քո խիղ-

ճր: Բայց այս ինչ. դու չպառկեցիր.
դու նորից հագնուել էս:

Նորս: (Ներս է մտնում հասարակ
դէրիով): Այո, Բօբէրտ, ես զգեստս
փոխեցի:

Գեյլէր: Ինչո՞ւ համար այժմ այսպէս
ուշ. . .

Նորս: Ես այս գիշեր չպիտի քնեմ:

Գեյլէր: Բայց, սիրելի Նորս:

Նորս: (Նայելով իւր ժամացոյցին):
Գեռ շատ ուշ է. նստիր այստեղ,

Բօբէրտ, մենք պիտի միմեանց շատ
բան ասենք: (Նա նստում է սեղա-
նի մի կողմը):

Գեյլէր: Այդ ինչ է նշանակում, քո
սառը, անշարժ երեսը. . .

Նորս: Նստի՛ր, ես քեզ շատ բան
ուսնիմ ասելու:

Գեյլէր: (Նստում է սեղանի մօտ,
նորա հանդէպ): Նորս, դու ինձ
վախեցնում ես, ես քեզ չեմ հասկա-
նում:

Նորս: Ա՛յ բանն էլ դորանումն է,
որ դու ինձ չես հասկանում. ես էլ
քեզ չէի հասկանում, մինչև այս ե-
րեկոյ. . . Չէ, խօսքս մի կտրիր, լսէ
միայն, ինչ որ կ'ասեմ: Այս է ահա
իմ հաշիւս քեզ հետ:

Գեյլէր: Ի՞նչ ես ուզում ասել:

Նորս: (Վարճ լուրժիւնից յետոյ):
Քեզ չի՛ դարմացնում այն հանգա-
մանքը, որ մենք այստեղ միասին
նստած ենք:

Գեյլ: Ի՞նչ:

Նորս: Մենք միասին արդէն ապ-
րում ենք ութ տարի, չէ՞ս դարմա-
նում, որ մենք երկուսս, դու և ես,
մարդ և կին, այսօր առաջին ան-
գամ խօսում ենք լուրջ կերպով մի-
մեանց հետ:

Գեյլ: Այո՛, լուրջ. . . այդ ինչ է
նշանակում:

Նորս: Ութ տարուայ ընթացքում
ո՛չ, աւելի՛, մեր ծանօթութեան ա-

ուսաջին օրուանից մենք ոչ մի անգամ
լուրջ չենք խօսել միասին ոչ մի բա-
նի վերայ: Գիտե՞մ, նոյնպէս զի բոց
այ Գեշ: Բայց միթէ էս պարտաւոր,
էի քեզ միշտ: Ելալտնել իմ հոգսերիս
մասին, որոնց դու օղնել չէիր կարող:
Նօրս: Ես հոգսերի մասին չեմ լսո-
ւում: Ես ատում եմ, որ մենք երբէք
լուրջ չենք խօսել ոչ մի բանի մա-
սին: Ինչ քոյսայ գամն զո շղթան

Գեշ: Բայց, սիրելի Նօրս, միթէ
այդ քեզ կը սաղէր:

Նօրս: Ահա և մենք հասանք դոր-
ծի իսկական նպատակին. դու ինձ
երբէք չես հասկացել. . . Ինձ շատ
վատութիւն էք արել, Բօբերտ,
ուսաջ հայրս և յետոյ դու: Ես սպ
նար

Գեշ: Ի՜նչպէս, մենք երկուսս էլ
քեզ վատութիւն ենք արել. մենք,
որ քեզ բոլոր մարդկանցից աւելի
էինք սիրում:

Նօրս: (Գլուխը շարժելով): Ի՞նչ
Գեշ

երբէք ինձ չէք սիրել. դուք միայն
բաւականութիւն էիք զգում, սիրա-
հարուած լինելով ինձ վերայ. . .

Գեշ: Այդ ի՜նչ խօսքեր են. . .

Նօրս: Միթէ այդպէս չէ, Բօբերտ:
Երբ ես դեռ հօրս մօտ էի ապրում,
նա ինձ յայտնում էր իւր բոլոր հա-
յեացքները և ես էլ նոյն հայեացք-
ներն ունէի. եթէ ես մի ինքնուրոյն
կարծիք ունենայի, այդ ժամանակ
ես այդ ծածկում էի, որովհետև հօրս
դուր չէր գալիս: Նա ինձ անուանում
էր իւր տիկնիկը, խաղում էր ինձ
հետ, ինչպէս որ ես խաղում էի իմ
տիկնիկներիս հետ: Յետոյ ինձ վի-
ճակուեցաւ քեզ հետ ապրել. . .

Գեշ: Այդ ի՜նչ մտքեր են մեր
ամուսնութեան մասին:

Նօրս: (Հանդարտ): Ես ուզում եմ
ասել, որ հօրս ձեռքից ընկալ քո
ձեռքը. դու ամեն բան սարքում էիր
քո ճաշակով և ես էլ նոյնը յատ-

կացրի ինձ, կամ ցոյց էի տալիս մի-
այն, որ չատկացրել եմ. . . ես ինքս
չգիտեմ, այս էլ էր, այն էլ: Երբ ես
հիմայ անցեալիս վերայ նայում եմ,
ինձ թվում է, թէ ես ապրում էի
իսկ աղքատի նման օրէցօր: Ես ապ-
րում էի նորանով, Բօքերտ, որ քո
առաջ զանազան ձևեր էի գործ դը-
նում. բայց դու ինքզ էիր այդպէս
կամենում: Դու և իմ հայրս մեծ
յանցանք էք առել ձեր վզին. դուք
էք մեղաւոր, որ ինձանից ոչինչ չէ
դուրս եկել:

Գէլէր: Ի՛նչ անմտութիւն և ան-
շնորհակալութիւն է քո կողմից. . .
միթէ դու այստեղ երջանիկ չէիր:

Նօրս: Ոչ, չէի. ես միայն երեւա-
կայում էի, որ երջանիկ եմ, բաց
երբէք չեմ եղել:

Գէլ.: Երջանիկ չէիր, չէիր:

Նօրս: Ոչ, ես միայն ուրախ էի
և դու միշտ շատ քնքուշ էիր վար-

վում ինձ հետ. բայց մեր տունը,
մեր օջախը, միայն այն սենեակն է,
որի մէջ երեխանները խաղում են:
Հօրս տանը ինձ հետ վարվում էին
ինչպէս փոքրիկ տիկնիկի հետ, իսկ
այստեղ ինչպէս մեծ տիկնիկի հետ.
Իսկ իմ տիկնիկներս էլ, երեխաներն
էին. ես շատ ուրախանում էի, երբ
դու ինձ հետ խաղում էիր, նոյնպէս
և երեխաներն ուրախանում էին, երբ
ես նոցա հետ խաղում էի: Ահա՛ մեր
բոլոր ամուսնութիւնը, Բօքերտ:

Գէլէր: Մի քիչ ճշմարտութիւն
կայ քո խօսքերի մէջ. . . Թէև դու
չափազանցում ես: Բայց հիմայ բոլո-
րը կը փոխուի, խաղերի ժամանակն
անցաւ. հիմայ մօտենում է կրթու-
թեան ժամանակը:

Նօրս: Ո՞ւմ կրթութեան, իմ, թէ
երեխաների:

Գէլ.: Եւ քո և երեխաների, սի-
րելի Նօրս:

Նորս: Վաղը ես կ'երթամ իմ հայ-
րենիքս, հօրս տունը. այնտեղ ինձ
աւելի հեշտ կրլինի աշխատանք ճա-
րել:

Գէշ: Ո՛հ, անփորձ և կուրացած
արարած:

Նորս: Հիմայ ես ինքս պէտք է
աշխատեմ ձեռք բերել փորձառու-
թիւն, Բօբերտ:

Գէշ: Թողնել տունը, ամուս-
նուն, երեխաներին. և դու չէս մը-
տածում, թէ մարդիկ ինչ կ'ասեն:

Նորս: Ես դորա վերայ ուշադրու-
թիւն չպիտի դարձնեմ. ես գիտեմ
միայն մի բան, որ ինձ անհրաժեշտ
է այդպէս վարուել:

Գէշ: Բայց այդ վրդուկեցուցիչ է,
արհամարել այդպէս քո ամենասուրբ
պարտականութիւնները:

Նորս: Դու ինչն ես համարում իմ
ամենասուրբ պարտականութիւնը:

Գէշէր: Ես պիտի քեզ յիշեցնեմ.

իսկ կնոջ և մօր պարտականութիւն-
ները:

Նորս: Ես ունիմ ուրիշ նոյնպէս
սուրբ պարտականութիւններ:

Գէշէր: Դու չունիս... հրոնք են:

Նորս: Պարտականութիւններ դէպի
իմ անձը:

Գէշ: Բայց ամենից առաջ դու
ամուսին և մայր ես:

Նորս: Դորան ես էլ չեմ հաւա-
տում. ամենից շառաջ ես ինձ հա-
մարում եմ մարդկային արարած
նոյնպէս ինչպէս և դու. կամ թէ
աւելի լաւն ասած, ես ուզում եմ
մարդ լինել: Ես լաւ գիտեմ, Բօբերտ,
որ մարդկանց մեծամասնութիւնը
քո կողմը կը լինի և որ զրքերի մէջ
նոյնպէս այդ են հաստատում. բայց
ես էլ չեմ կարող բաւականանալ նո-
րանով, ինչ որ մարդիկ խօսում են
և ինչ որ զրքերում գրուած է: Ես
պիտի ինքս ամեն բան կշռեմ նորից

և աշխատեմ պարզել բոլորը:

Գէլ.: Մի՞թէ քեզ պարզ չէ քո գրուածիւնն ընտանիքի մէջ. մի՞թէ այդ հարցերի համար դու չունիս ճշմարիտ ուղեցոյց. մի՞թէ դու կրօն չունիս:

Նօրս: Ա՛խ, Բօբերտ, չէ՞ որ ես բոլորովին չը գիտեմ, թէ ինչ է կրօնը:

Գէլ.: Այդ ինչ ես ասում:

Նօրս: Ես ոչինչ չգիտեմ նորանից աւելի, ինչ որ ինձ ասել է պաստօր Եակօբին, որ ինձ հաղորդ է տուել: Նա ասում էր, որ կրօնն այս ու այն է: Երբ ես այտեղից հեռանամ ու մենակ մնամ, այն ժամանակ կը հետադօտեմ և այդ հարցը: Ես այն ժամանակ կը տեսնեմ, թէ ճշմարիտ է այն, ինչ որ պաստօր Եակօբին ասում էր, կամ թէ ուրիշ կերպ ասած, ինձ համար արդեօք ճշմարիտ է:

Գէլ.: Այդ լուա՞ծ չէ երիտասարդ կնոջ բերանից: Բայց եթէ կրօնը քեզ չի կարող առաջնորդ լինել, այն ժամանակ ես կաշխատեմ գոնէ զարթեցնել քո խիղճը: Մի՞թէ դու չունիս բարոյական զգացմունք. կամ... պատասխանէ ինձ... այդ էլ չունիս:

Նօրս: Ի՛հ, Բօբերտ, աւելի լաւ է այդ առանց պատասխանի թողնել: Մի՞թէ ես գիտեմ, այդ հարցերն ինձ համար պարզ չեն. ես միայն գիտեմ, որ այդ մասին իմ կարծիքներս բոլորովին տարբեր են, քան թէ քոնը: Ես հիմա՛յ իմացա՛յ նոյնպէս, որ օրէնքները այնպէս չեն, ինչպէս որ ես կարծում էի. բայց ինձ թվում է, որ այդ օրէնքները լաւ չեն. կարծես կինը իրաւունք չունէր խնայել իւր ծեր, մեռնող հօրը և փրկել իւր ամուսնուն. ես գորան չեմ հաւատում:

Գէլ.: Դու դատում ես երեխայի

նման. դու չես ճանաչում այն Հասարակութիւնը, որի մէջ ապրում ես:

Նօրս: Չեմ ճանաչում, բայց կաշխատեմ ճանաչել նորան. ես պիտի Համոզուիմ, թէ ով է իրաւացի, Հասարակութիւնը, թէ ես:

Գեղեք: Նօրն, դու Հիւանդ ես. դու ջերմի մէջ ես. այն, ես կարծում եմ, որ դու ինքք կորցնում ես:

Նօրս: Երբէք ինձ այնպէս պարզ չէր երևում ամեն ինչ, ինչպէս այս գիշեր:

Գեղեք: Եւ դու թողնում ես ամուսնուդ ու երեխաներիդ պարզ գիտակցութեամբ:

Նօրս: Այն, պարզ:

Գեղեք: Այն ժամանակ Հնարաւոր է միայն մի բացատրութիւն:

Նօրս: Ի՞նչպիսի:

Գեղեք: Որ դու ինձ էլ չես ուրում:

Նօրս: Այն, այդ այդպէս է:

Գեղեք: Նօրն... և այդ ատում ես դու:

Նօրս: Այդ ինձ ցաւ է պատճառում, Բօքերտ. դու միշտ ինձ Հետքաղցր էիր վարվում: Բայց իմ վճիռն ես փոխել չեմ կարող. ես քեզ էլ չեմ սիրում:

Գեղեք: (Հազիւ իրան զսպելով): Եւ այդ նոյնպէս քեզ պարզ է:

Նօրս: Այն, բոլորովին պարզ, այդ պատճառով ես էլ չեմ ուզում այստեղ մնալ:

Գեղեք: Եւ դու կարող ես ինձ բացատրել, թէ ինչնով ես կորցրի քո սէրը:

Նօրս: Այն, կարող եմ. այդ պատահեց Հէնց այսօր երեկոյ, երբ սպասում էի Հրաշքի և նա չերևեց: Այդ ժամանակ ես պարզ տեսայ, որ դու այն չէիր, ինչպէս որ ես քեզ կարծում էի:

Գեղեք: Պարզ խօսիր, ես քեզ չեմ Հասկանում:

Նօրո: Ես համբերութեամբ սպասեցի ու թ երկար տարիներ, որովհետեւ... Տէր Աստուած, ես լաւ եմ հասկանում, որ հրաշքը չի երևի ինչպէս մի սովորական առօրեայ բան... յետոյ այս անբախտութիւնը ինձ վրայ հասաւ. ես այնպէս հաստատ համոզուած էի, թէ ահա նա, վերջապէս երևում է նա, այդ հրաշքը: Քանի որ Գիւնտէրի նամակը արկղումն էր, ոչ մի անգամ իմ մըտքովս չանցաւ, որ այդ մարդու սպառնալիքները քեզ կարող են վախեցնել. ես այնպէս հաստատ ու քաջ համոզուած էի, որ դու նորան կ'ասես. «Յայտնեցէք այդ մտտին ամբողջ աշխարհին»: Եւ երբ այդ կատարուէր...

Գիւլէր: Այն ժամանակ, երբ ես իմ կնոջս մատնէի ամօթի ու խայտառակութեան...

Նօրո: Եւ երբ այդ կատարուէր,

այն ժամանակ... ես հաստատ համոզուած էի, որ դու համարձակ դուրս կը գալիր ողջ աշխարհի առաջ և բոլոր մեզքը քո վզին կ'առնէիր ու կ'ասէիր «յանցաւոր ես եմ»:

Գիւլէր: Նօրո:

Նօրո: Գու ուզում ես ասել, որ երբէք այդ տեսակ դոհողութիւն ես չանձս չէի առնի: Ի հարկ է ոչ: Բայց այն ժամանակ ինչ արժէք կ'ունենային իմ համոզական խօսքերս, համեմատելով քոնի հետ: Ահա այն հրաշքը, որին ես սպասում էի վախով ու սրտատրոփ: Եւ որպէս զի այդ չպատահէր, ես վճռեցի վերջ տալ իմ կեանքիս:

Գիւլէր: Նօրո, ուրախութեամբ ես քեզ համար կաշխատէի գիշեր, ցերէկ, կը տանէի ամեն վիշտ ու կարիք քեզ համար, բայց իւր սիրածի համար ո՞վ կը զոհէ իւր պատիւը:

Նօրո: Այն ինչ միլիօնաւոր կա-

նայք այդ զոհաբերութիւնն արել են:

Գիւնէր: Ա՛խ, դու դատում և խօսում ես անհասկացող երեխայի նման:

Նօր: Կարելի՛ է: Բայց դու այնպէս չես խօսում ու դատում, ինչպէս այն մարդը, որը հետ ես կարող լինէի մտերմանալ: Երբ քո այն վախն անցաւ, որ ո՛չ թէ ինձ էր սպառնում, այլ քեզ, և երբ էլ վտանդ չկար, այն ժամանակ քեզ երեցաւ, թէ ոչինչ չէ պատահել: Ես յառաջուայ նման եղայ քո արտուտիկը, քո տիկնիկը, որին այսուհետև նորա թուրութեան պատճառով դու պիտի կրկնակի պահպանես ու հովանաւոր լինիս: (Վեր է կենում): Բօքերտ, այն վայրկենից ինձ համար պարզուեցաւ, որ ես ութ տարի ապրել եմ օտար մարդու հետ, որ ես ծնել եմ երեք զաւակներ. ո՛հ, այդ դիտակցութիւնը անտանելի է. ես պատրաստ եմ ինձ խեղդելու, ինձ կտոր կտոր անելու:

Գիւնէր: (Ճնշուած): Ո՛հ, տեսնում եմ, տեսնում մեր մէջ մի անգունդ է բացուել... Բայց Նօրն, միթէ չի կարելի կամուրջով անցնել նորա վերայից:

Նօր: Այնպէս, ինչպէս որ հիմայ եմ, ես քեզ ամուսին չեմ կարող լինել:

Գիւնէր: Ես իմ մէջ զգում եմ քաջութիւն ուրիշ մարդ դառնալու:

Նօր: Կարելի՛ է, եթէ տիկնիկը քեզանից հեռանայ:

Գիւնէր: Բաժանուել, բաժանուել քեզանից, ո՛չ, ո՛չ, Նօրն, այդ անկարելի է:

Նօր: (Զախ կողմի սենեակն է գնում): Այսուամենայնիւ անհրաժեշտ է. այս ամենը պիտի վերջանայ: (Նա վերադառնում է, բերում է վերարկուն, զլիարկը, ճանապարհի պայուսեակը, որ դնում է սեղանի մօտի աթոռի վերայ):

Գիւնէր: Նօրն, նօրն, իսկոյն մի

զնար... սպասէ մինչև վաղը:

Նօրս: (Վերարկուն Հագնելով):
Միթէ ես կարող եմ օտար մարդու
տան մէջ զիշերն անցկացնել:

Գեղեք: Բայց միթէ մենք այստեղ
չենք կարող ապրել ինչպէս քոյր և
եղբայր. . .

Նօրս: (Ծածկում է գլխարկը): Գու
լաւ գիտես, որ այդ երկար չէր կա-
րող տևել. . . (Չալը գցում է վրէն):
Մնաս բարև, Բօբերտ, փոքրիկներին
չեմ ուզում տեսնել, նոքա աւելի
լաւ ձեռքի տակ են, նոցա պէտք
չեմ գայ:

Գեղեք: Իսկ յետո՞յ, Նօրս, աւելի
ո՞ւշ. . .

Նօրս: Ի՞նչպէս կարող եմ իմանալ.
ես բոլորովին չգիտեմ, թէ ինձանից
ինչ դուրս կը գայ:

Գեղեք: Չէ որ դու իմ կիներն ես,
ոչ միայն Հիմայ, այլ և. . .

Նօրս: Լսէ, Բօբերտ, երբ կինը

թողնում է մարդու տունը, ինչպէս
որ այդ Հիմայ ես եմ անում, այն փա-
մանակ մեր օրէնքով, ինչպէս լսել
եմ, կնոջ վերաբերութեամբ նա ա-
զատ է ամեն պարտականութիւնից:
Յամենայն դէպս, ես քեզ ազատում
եմ ամեն պարտականութիւնից. դու
պիտի քեզ կապուած չզգաս մի որևէ
բանով, ինչպէս և ես ինձ, այստեղ
էլ, այնտեղ էլ, պիտի լինի լիակա-
տար ազատութիւն: Ահա, առ քո
մատանին և յետ տուր իմը:

Գեղեք: Այդ նոյնպէս:

Նօրս: Այդ էլ:

Գեղեք: Ահա:

Նօրս: Այսպէս, ամէն ինչ վերջա-
ցած է: Ահա այստեղ եմ դնում բա-
նալիքները: աղախինները տան մէջ
ամեն բան ինձնից լաւ գիտեն: Վաղը
իմ գնալուցս յետոյ Քրիստիանան այս-
տեղ կը գայ, որ հաւաքէ ինձ պատ-
կանած բաները և ուղարկէ ինձ:

Գեշեք: Ի հարկէ, ամեն ինչ վերջացած է: Նօրան, միթէ դու էլ երբէք իմ մասին չես մտածի:

Նօրա: Ես երևի դեռ շատ անգամ կը յիշեմ թէ քո, թէ գաւակներիս և թէ այս տան մասին:

Գեշեք: Քեզ նամակ գրել կարելի՞ է, Նօրան:

Նօրա: Ոչ մի կերպ. դու այդ չը պիտի անես:

Գեշեք: Ա՛խ, բայց կարող եմ ուղարկել. այն որ . . .

Նօրա: Ոչինչ:

Գեշեք: Կարող եմ օգնել քեզ, երբ կարիք ունենաս:

Նօրա: Ո՛չ, ասում եմ քեզ. օտարները ես սչինչ չեմ վերցնի:

Գեշեք: Նօրան, միթէ ես քեզ համար միշտ օտար կը մնամ:

Նօրա: (Վերցնում է իւր պայուսակը): Ա՛խ, Բօբերտ, որպէս զի օտար չմնաս, պէտք է հրաշք կատարուի:

Գեշեք: Անուանէ այդ հրաշքը:

Նօրա: Գորա համար մենք երկուսս, դու և ես, պիտի այնպէս փոխուէինք, որ . . . Ա՛խ, Բօբերտ, ես էլ հրաշքի չեմ հաւատում:

Գեշեք: Բայց ես հաւատում եմ... անուանէ նորան: Գու ասում ես «մենք այնպէս պիտի փոխուէինք որ . . .

Նօրա: «Որ մեր կենակցութիւնը լինէր ամուսնութիւն»: Մնաս բարև: (Նա գնում է նախասենեակից դէպի դրսի դուռը):

Գեշեք: (Ընկնում է դռան մօտի աթոռի վրայ և երեսը ծածկում է ձեռքերով): Նօրան, Նօրան: (Նայում է շուրջը և վեր է կենում): Գատարկ է, նա էլ այստեղ չէ: (Նորա մտքի մէջ փայլում է յօսի նշույլը): Իսկ հրաշքը: (Լսվում է դրսի գռան աղմուկով ծածկուիլը):



Տ Ի Ր ՈՒ Հ Ի Կ Ո Ս Տ Ա Ն Ե Ա Ն Յ Ի

(Տիկին Մարգարտի)

Միւս թարգմանութիւնները.

| | Ռ. Կ. |
|---|-------|
| ՅՈՎՀ. ԳՈՒՏԻՆԵՔԵՐԳ, տպագրութեան հնարողը. գինն է. . . . | — 15 |
| ԴՕԿՏ. ՋԻՆՆԷՐ, ճաղկահատութեան հնարողը. գինն է. . . . | — 20 |
| ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ, հայ երեսաների համար (15 թատերախաղ), փոխադրութիւն, գինն է | 1 — |

Վաճառվում են թիֆլիզում «Կենդրոնական գրավաճառանոցում»:

Առնադարձաձևերը գնողներին վրայ է:

ԳԻՆՆ Է 30 Կ.

1639

1840
 1841
 1842
 1843
 1844
 1845
 1846
 1847
 1848
 1849
 1850
 1851
 1852
 1853
 1854
 1855
 1856
 1857
 1858
 1859
 1860
 1861
 1862
 1863
 1864
 1865
 1866
 1867
 1868
 1869
 1870
 1871
 1872
 1873
 1874
 1875
 1876
 1877
 1878
 1879
 1880
 1881
 1882
 1883
 1884
 1885
 1886
 1887
 1888
 1889
 1890
 1891
 1892
 1893
 1894
 1895
 1896
 1897
 1898
 1899
 1900

20 13

